«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2019

ՆԱԽԱԲԱՆ

Ավանդական բժշկության համալսարանի (այսուհետ՝ ԱԲՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ԱԲՀ-ի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, տեղացի և միջազգային փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն զեկույցը պարունակում է ԱԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ 4
ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4
ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 16
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 20
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ 20
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 20
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 24
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 24
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 26
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 29
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 34
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 43
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 47
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 52
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 56
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 62
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 65
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 74
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 75
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 75
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 77
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 80
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 83
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 84
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 85

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԱԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել բուհի դիրքավորումը կրթական շուկայում և առաքելությունը, այն է. «ԱԲՀ-ն բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության առաջատար կրթօջախ է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության ազգային և տարածաշրջանային եզակի և նախադեպը չունեցող, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող բժիշկների պատրաստմանը»:

Իր ստեղծման օրվանից ԱԲՀ-ն իրականացրել է նպատակին համապատասխան գործունեություն՝ տրամադրելով հայալեզու կրթություն, պետության կողմից հավատարմագրված ծրագրերով, որոնք համապատասխան են եղել 2001 թվականի պետական կրթական չափորոշիչներին:

ԱԲՀ-ն մինչև 2015 թվականը իրականացրել է բժշկական կրթություն ուսանողների անընդհատ նվազման պայմաններում: Ընթացքում բուհը ներդրել է երկու բակալավրի և երկու մագիստրոսի կրթական ծրագրեր «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով: 2015թ-ից ներդրվել է անընդհատ և ինտեգրված երկու կրթական ծրագիր՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով:
2015-ից ԱԲՀ-ն փոփոխել է սպասարկվող կրթական և աշխատանքային շուկաները՝ թիրախավորելով միջազգային ուսանողների հավաքագրումը և այժմ ՄՈՒՀ-ում սովորող ուսանողների գերակշիռ մեծամասնությունը (80%) միջազգային ուսանողներ են:

Ներկայում, ԱԲՀ-ն գտնվում է անցումային ժամանակաշրջանում:

Ներդրված մասնագիտությունների կրթական ծրագրերը առաջին անգամ են իրականացվում և բուհի ունեցած հավատարմագրումը գործնականում ուժը կորցրած է համարվում, քանի որ ծրագրերը հիմնավին փոփոխվել են և հաշվի պիտի առնեն նոր աշխատաշուկայի առանձնահատկությունները:

Մատուցված կրթական ծառայությունների որակի ճանաչումը նոր մոտեցում է մեր երկրի և բուհի համար նարդյունքը պիտի ճանաչվի FMGE քննությամբ:

Դասավանդումն իրականացվում է տարբեր բազային գիտելիքներով ընդունված և մեծամասամբ միայն անգլերենին տիրապետող ուսանողների համար:

---

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Դասախոսական կազմի մեծ մասը նոր համալրված է, մի մասը հանդիսանում են պրակտիկ բժիշկներ, ովքեր դասավանդման մեծ փորձ չունեն և ծանոթ չեն ԱԲՀ-ի կրթական միջավայրին:

ԱԲՀ-ում առկա կրթական ռեսուրսային բազան նոր է ձևավորվում՝ անգլալեզու գրականություն, քիմիական լաբորատորիաներ, բժշկական սարքավորումներ, մուլիաժներ և այլն: Իսկ ֆինանսական ռեսուրսները ձևավորվում են նոր ընդունված օտարազգի ուսանողների վարձավճարների հաշվին: Այդ ներհոսքը նպատակաուղղված է օգտագործվում է բյուջեն կայունացնելու և նոր կրթական ծրագրերին անցնելու համար:

ԱԲՀ-ում միջազգայնացումը գտնվում է պլանավորման փուլում և ուսանողների հավաքագրման տեսանկյունից նաև իրականացման փուլում, միջազգայնացումը այժմ դառնում է գերակայություն ԱԲՀ-ի համար:

ԱԲՀ-ի կառավարման համակարգը՝ ենթակառուցվածքների վերակազմավորումը, վարչարարությանը վերաբերվող փաստաթղթային հենքը գտնվում են բարեփոխումների փուլում՝ հաշվի առնելով սահմանված գերակայությունը՝ ԱԲՀ-ի գործունեության միջազգայնացումը և միջազգային ուսանողների ներգրավումը:

Այս պարագայում, որակի ապահովման համակարգի դերակատարումը աճում է, քանի որ տեղական և միջազգային արտաքին միջավայրերի պարբերաբար վերլուծություններ են անհրաժեշտ՝ հավաստի տվյալների վրա որոշումների կայացման համար:

2016 թվականին ԱԲՀ-ն ձեռնամուխ է եղել 2017-2022 թվականների Ռազմավարական զարգացման ծրագրի մշակմանը, սակայն տվյալ ռազմավարական ծրագրում սահմանված չի ԱԲՀ անցումային ժամանակաշրջանը և առկա համապատասխան պլաններն ու անցումային փուլերի ուղղություններն և առաջընթացի գնահատման ցուցանիշները:

ԱԲՀ ռազմավարական զարգացման ծրագիրը սահմանում է ԱԲՀ կառավարման համակարգի բարելավումը, կրթական գործունեության արդիականացումը, ենթակառուցվածքների համալրումն ու ֆինանսական ռեսուրսների բազմազանեցումը, ուսանողակենտրոն քաղաքականության որդեգրումը, արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների ակտիվացումը, արդիական հետազոտությունների և նորարարությունների խթանումը, որակի ապահովման ներքին համակարգի զարգացումը, ի թիվս այլ ուղղությունների: Չնայած սահմանված գերակայությունների, ԱԲՀ-ում առկա չէ յուրաքանչյուր նպատակի համար հստակ ճանապարհային քարտեզը, որը համահունչ կլինի փաստացի իրականացվող անցումային շրջանի նպատակների հետ՝ հատկապես միջազգային կրթություն տրամադրելու համար հատուկ պայմանները:

Ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսվում է զարգացնել ԱԲՀ մրցակցային առավելությունը՝ գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության ինտեգրումը ժամանակակից բժշկության մոտեցումներին և ներառումը կրթական ծրագրերում: ՄՈՒՀ-ը համոզված է, որ նշված ինտեգրումը գրավիչ կդառնա տեղացի և միջազգային ուսանողների ներգրավման համար:

ՌԾ-ն լիարժեք չի համապատասխանում առկա փոփոխություններին և չնայած շահակիցների շեշտակի փոփոխվող համակազմին, ԱԲՀ-ն իր ռազմավարությունը մշակելիս չի ներկայացրել թիրախային միջազգային շահակիցների կարիքների վերլուծությունը, միջազգային հանրության ներկայացուցիչները չեն ներգրավվել ՌԾ մշակման մեջ, ինչը խոչընդոտում է սահմանված անցումային շրջանի գերնպատակի իրականացումը և

արդյունքների արժևորմանը, եթե բուհը չանդրադառնա ՌԾ վերանայմանը՝ վերոնշյալ դրույթների քննարկմամբ:

Չնայած միջազգայնացման և արտաքին կապերի համար պաշտոնական ռազմավարության և համակարգված ճանապարհային քարտեզի բացակայությանը, ԱԲՀ-ն անցումային շրջանում է և մեծ ջանքեր ու ռեսուրսներ /ֆինանսական և մարդկային/ է ներդնում բուհի միջազգային հավակնությունների իրականացման ուղղությամբ:

Միջազգայնացումը դարձել է բուհի կայուն զարգացման հենք: Բուհը, չունենալով միջազգային ուսանողների հավաքագրման փորձ, օգտվում է արտաքին գործակալության ծառայություններից, որն իրականացնում է բուհի մարքետինգը միջազգային աշխատաշուկայում, սակայն տվյալ մարքետինգային նյութերը չեն ներկայացվում պաշտոնապես բուհի կողմից և բուհի պաշտոնական կայքը համալրված չէ անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ խթանելու միջազգային ուսանողների հոսքի ավելացմանը, բուհի գրավչությանը: Մրցակցային պայմաններում այսպիսի միջնորդված մոտեցումը ռիսկեր է պարունակում:

ԱԲՀ-ում միջազգայնացման միջավայրի զարգացման նպատակով՝ միջազգային շահակիցների հետ հորիզոնական կապերն ամրապնդելու հնավորություն է ընձեռվում ուսանողներին՝ հնարավորություն ստեղծելով պրակտիկա անցնել արտասահմանում, սակայն սա նույնպես համակարգված բնույթ չի կրում, այն առումով, որ պրակտիկայի արդյունքների գնահատումը չի իրականացվում:

ԱԲՀ-ն քայլեր է ձեռնարկում ԱԲՀ որակավորումների և դիպլոմների ճանաչման ուղղությամբ, որը նպաստում է արտաքին կապերի ամրապնդմանը և միջազգայնացման զարգացմանը: Սակայն, ՄՈՒՀ-ում բացակայում է դասախոսների և ուսանողների շարժունությունը խթանող քաղաքականությունն ու մեխանիզմները:

2015թ-ից սկսած ԱԲՀ-ում իրականացվում են անընդհատ և ինտեգրված անգլալեզու կրթական ծրագրեր «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով: Չնայած այն հանգամանքին, որ ԱԲՀ ուսանողների գերակշիռ մեծամասնությունը օտարազգի են /Հնդկաստան, Իրաք, Իրան, Մեծ Բրիտանիա, Ավստրիա, Իռլանդիա, Գերմանիա, Շվեդիա, Շրի Լանկա, Սիրիա/, ԱԲՀ կրթական ծրագրերը համեմատության են ենթարկվել միայն հետսովետական երկրների կրթական ծրագրերի հետ: 2018թ բուհի անընդհատ և ինտեգրված «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ները ենթարկվել են փոփոխության, սակայն ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հստակ չէ փոփոխությունների նպատակը, քանի որ ինչպես ՄԿԾ վերջնարդյունքներում, այնպես էլ առարկայական նկարագրերում էական փոփոխություններ չկային:

Փոփոխվել էր միայն գնահատման համակարգը, որը նաև արդյունք է ուսանողների և դասախոսների հետ քննարկումների:

Հարկ է նշել նաև, որ կատարված փոփոխությունները հստակ պլանավորված չեն, վերանայման գործընթացում ներգրավված չեն միջազգային աշխատաշուկայի ներկայացուցիչներ, արտաքին շահակիցներ, ինչպես նաև չի ուսումնասիրվել եվրոպական և այլ երկրների փորձը, ինչը կարող է խոչընդոտել շրջանավարտների հմտությունների ճանաչմանը միջազգային աշխատաշուկայում և միջազգային քննություններում շրջանավարտների հաջողությունների ձեռքերմանը:

Ուսանողների առաջընթացի գնահատման համար կարևոր բաղադրիչներից մեկը՝ուսանողի պորտֆոլիոն, բացակայում է, ինչը խոչընդոտում է իրականացնել ձեռք բերված հմտությունների մշտադիտարկումներ և դրանց արդյունքում բարելավել ուսումնառությունը: Հատկապես կարևոր է այդպիսի մշտադիտարկումներ իրականացնել առաջին անգամ իրականացվող ծրագրերի համար, ընդ որում, երբ բոլոր կրթական բաղադրիչները՝ դասընթացներ, դասախոսներ, կրթական միջավայր, ռեսուրսներ, ուսանողների համակազմը նոր են ձևավորվում:

Վերջին տարիներին ԱԲՀ նյութատեխնիկական բազան նույնպես բարելավվել է, որը նպաստել է անհրաժեշտ ուսումնական միջավայրի ստեղծմանը: Ընդհանուր առմամբ, ԱԲՀ-ն ապահովված է տվյալ պահին անհրաժեշտ ռեսուրսներով՝նպաստելով սահմանված առաքելության և կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը: Իհարկե, հետագա զարգացման և ընդլայնման պլանավորումը կարող է խնդիրներ առաջացնել:

ԱԲՀ-ն համագործակցում է տարբեր կլինիկաների հետ ուսանողների պրակտիկ ցիկլերի անցկացման համար և դրական է, որ ԱԲՀ-ն նախատեսում է կառուցել իր սեփական կլինիկան: Դրական է, որ ԱԲՀ-ն իր բյուջեի 3,5%-ը հատկացնում է որպես պահուստային ֆոնդ, միևնույն ժամանակ ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացումը, ռազմավարական բոլոր նպատակների /գիտություն, որակի ապահովման համակարգի բարելավում, նյութատեխնիկական բազայի հարստացում/ համաչափ զարգացման համար ֆինանսական հատկացումները, ուսանողների թվի աճի հետ մեկտեղ հստակ ֆինանսական պլանավորումը, կնպաստեն ուսումնական միջավայրի արդյունավետ զարգացմանը և մրցունակ կրթության տրամադրմանը: Ֆինանսական մեկ աղբյուրից համալրման տրամաբանությունը իհարկե ռիսկային է և կառավարման օղակներին հատուկ պահանջներ է ներկայացնում:

Դրական է, որ ԱԲՀ-ն անգլալեզու գրականություն ապահովում է միջազգային ուսանողներին էլեկտրոնային նյութեր տրամադրելով, սակայն գրադարանային ֆոնդի հարստացումը առավել կարևոր նշանակություն ունի ԱԲՀ-ի համար, քանի որ ուսանողների գերակշիռ մեծամասնությունը անգլախոս են, իսկ առկա գրքերի մեծամասնությունը կամ հայերեն, կամ ռուսերեն են, ինչը կարող է խոչընդոտել ՄԿԾ-ով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը:

Նյութատեխնիկական ռեսուրսները՝ լաբորատորիաները, սարքավորումները և նյութերը պարբերաբար թարմացվում են և ներկայում բավարարում են ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար:

Ամբողջությամբ անգլալեզու ՄԿԾ-ների իրականացման համար ԱԲՀ-ն վերջին տարիներին համալրել է իր դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը՝ շեշտադրելով անգլերենի իմացությունը և պրակտիկ փորձը բժշկության ոլորտում: Չնայած ԱԲՀ-ում բացակայում է հստակ ձևակերպված քաղաքականությունը դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ընտրության և ընդունելության համար, սակայն ներկայում ուսումնական գործընթացում ներգրավված են առողջապահության ոլորտի պրակտիկ փորձ ունեցող և անգլերենին տիրապետող դասախոսներ և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչներ, որոնցից զոհ են ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային ուսանողները: Դասախոսական կազմն ապահովված է կենսաբանական գիտությունների թեկնածուներով:

ԱԲՀ-ն փորձում է ուսումնական գործընթացում ներգրավել նաև իր շրջանավարտներին, ինչը նպաստում է կայունության ապահովմանը:

Դրական է, որ ԱԲՀ-ն իրականացնում է անգլերենի իմացության մակարդակի բարձրացման վերապատրաստումներ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի համար և չի խոչընդոտում դասախոսների կողմից սեփական նախաձեռնությամբ վերապատրաստումների մասնակցությունը: Սակայն կարևորվում է ԱԲՀ-ի կողմից մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության պլանավորումն ու իրականացումը, ինչպես նաև ֆինանսական ներդրումներ, որոնք կնպաստեն դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը և շարունակական զարգացմանը, ինչպես նաև որակյալ ծառայությունների մատուցմանը:

Կարևորվում է նաև դասախոսների և ուսանողների հետազոտական գործունեության ակտիվացումը: Չնայած այն հանգամանքին, որ ԱԲՀ-ում առկա է հետազոտական ներուժ /դասախոսներ, այլ ռեսուրսներ/, Գիտաբժշկական ուսումնական կենտրոնում առկա են մեծաթիվ տվյալներ, որոնք կարող են կիրառվել հետազոտական գործունեության մեջ և՛ դասախոսների, և՛ուսանողների կողմից, այնուամենայնիվ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայում հետազոտական գործունեությունը չի խրախուսվում ԱԲՀ-ի կողմից:

ՄՈՒՀ-ը չի խթանում ՊԴ կազմի գիտամեթոդական գործունեությունը և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար պայմանների բարելավումը: Ավելին, բուհում չկա գիտության պլանավորում, կառավարում, զարգացում և կանոնադրությամբ թույլատրելի հետազոտական արդյունքների առևտրայնացում:

Միջազգային ուսանողներն իրականացնում են հետազոտություններ յուրաքանչյուր առարկայի շրջանակներում՝ կատարելով անհատական աշխատանքներ, սակայն այդ աշխատանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կլինիկական կոնկրետ դեպքեր չեն ուսումնասիրվում, չի կատարվում տվյալների վերլուծություն և մեծամասամբ աշխատանքները նկարագրողական բնույթ են կրում:

Վերջին տարիներին բուհում, տարբեր գործընթացների կանոնակարգման նպատակով, մշակվել են տարբեր ընթացակարգեր, կարգեր՝ կանոնակարգելու անցումային շրջանում թիրախավորված նպատակների իրականացումը: Միևնույն ժամանակ կառավարման համակարգը բարելավման կարիք ունի ռազմավարական նպատակների և կառավարման համակարգի համահունչության ապահովման տեսանկյունից:

ԱԲՀ-ի կառավարման մարմիններում /Հիմնադիրների ժողով, Կառավարման խորհուրդ, Գիտական խորհուրդ/ արտաքին շահակիցներ ներգրավված չեն, չկան նաև միջազգային թիրախային խմբերի ներգրավման մեխանիզմներ, որը կնպաստեր արտաքին միջավայրերի խնդիրների իրազեկմանը և մրցունակ կրթության տրամադրմանը: Կարևորվում է միջազգային և ազգային արտաքին միջավայրերի համակարգված ուսումնասիրությունների իրականացումը: Միջազգային և ազգային արտաքին միջավայրերի վտանգների մասին ԱԲՀ ղեկավար կազմը տեղեկացված է, սակայն համակարգային վերլուծություններ չեն իրականացվում, որոնք կնպաստեին ուսումնական գործընթացի, միջազգայնացման, հետազոտական գործունեության վերաբերյալ կառավարչական որոշումների արդյունավետ կայացմանը և բուհի շարունակական զարգացմանը, ինչպես նաև տվյալների հիման վրա որոշումների կայացմանը:

ԱԲՀ-ում մշակված ՈՆԱ քաղաքականության և ընթացակարգերը վկայում են այն մասին, որ ԱԲՀ-ի որակի ներքին համակարգը դեռևս ներդրման փուլում է և դեռևս բավարար ինտեգրված չէ ԱԲՀ-ի բոլոր գործընթացներում և համակարգված ինստիտուցիոնալ մոտեցման

կարիք ունի: Որակի ապահովման քաղաքականությունը պլանավորման փուլում է և մասնակի իրականացվում արդյունավետ, սակայն չի նպաստում ԱԲՀ գործընթացների շարունակական զարգացմանն ու հաշվետվողականության բարելավմանը: Հստակեցված և ներդրված չեն ԱԲՀ-ի առկա գործընթացների շարունակական բարելավումը խթանող մեխանիզմները: Հատկապես, օտարալեզու ՄԿԾ-ների գործարկման և ուսանողական համակազմի որակական փոփոխության պայմաններում, ցանկալի է ունենալ ավելի օպերատիվ տվյալների հավաքագրման և արձագանքի մեխանիզմներ: ՈՆԱ համակարգը չունի պրոակտիվ դեր որոշումների կայացման և գործունեության արդյունավետության գնահատման գործընթացներում: Կատարված հարցումները հստակ նպատակ չեն հետապնդում և շահակիցների կողմից արդյունքները բովանդակային, որակական վերլուծության չեն ենթարկվում, ինչը խոչընդոտում է տվյալների հիման վրա որոշումների կայացմանը, իսկ առկա ՈԱ մեխանիզմները չեն նպաստում հուսալի և արժանահավատ տվյալների գեներացմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Ավանդական և ժամանակակից բժշկության համակցության շնորհիվ մրցակցային առավելություն ունենալը ազգային և միջազգային շուկաներում,
2) ներքին շահակիցների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում,
3) ուսանողների գնահատման համակարգի բարելավումը,
4) ուսանողների կարիքների պարբերաբար ուսումնասիրությունն ու աջակցությունը համալսարանի աշխատակազմի կողմից,
5) ՊԴ կազմի ընտրության որակական պահանջների սահմանումը և ուսանողների բավարարվածությունը ՊԴ կազմից,
6) ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների շարունակական բարելավումը և ուսումնական բարենպաստ միջավայրի առկայությունը,
7) Գիտաբժշկական ուսումնական կենտրոնի դերը հասարակությանը գիտելիքների ու արժեքների փոխանցման գործընթացներում,
8) անգլերենով իրականացվող ՄԿԾ-ների առկայությունը, ՊԴ, ուսումնաօժանդակ և վարչական կազմի՝ անգլերենի իմացության շեշտադրումը համալսարանի կողմից,
9) որակի ներքին ապահովման համակարգի ներդրման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծումը:

Հաստատության թույլ կողմերն են.

1) Անցումային ժամանակաշրջանի համար հստակ ճանապարհային քարտեզի բացակայությունը,
2) ռազմավարական նպատակների և կատարողականի արդյունքների գնահատման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառումը,
3) կառավարման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայությունը,
4) արտաքին շահակիցների մասնակցության և ազդեցության ցածր մակարդակը որոշումների կայացման գործընթացներում,
5) ֆինանսական մուտքերի բազմազանեցման և ըստ ռազմավարական առաջնահերթությունների բաշխման պակասը,

6) արտաքին միջավայրի ուսումնասիրությունների և տվյալների հիման վրա որոշումների կայացման բացակայությունը,
7) ՄԿԾ-ների մշտադիտարկման ու գնահատման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը,
8) վերջնարդյունքների հիման վրա դասավանդման և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականության բացակայությունը,
9) պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումներին ու կատարելագործմանն ուղղված ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության բացակայությունը,
10) կրթություն-հետազոտություն կապի թույլ լինելը և դասախոսների ու հատկապես ուսանողների ներգրավվածության ցածր մակարդակը հետազոտական աշխատանքներում,
11) հետազոտությյան արդյունքների առևտրայնացման և միջազգայնացման պակասը,
12) կրեդիտային համակարգի անկատարությունը և դասախոսների ու ուսանողների շարժունության պակասը ազգային և միջազգային մակարդակներում,
13) անգլերենով մասնագիտական գրականության պակասը՝ չնայած օտարալեզու ուսանողներ ընդունելու համալսարանի ունեցած քաղաքականությանը,
14) միջազգայնացմանը նպաստող հստակ քաղաքականության բացակայությունը,
15) որակի ներքին ապահովման համակարգի անկատարությունը, քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերի բացակայությունը,
16) շահակիցներից հետադարձ կապի ապահովման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառումը, և նրանց թույլ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) Վերանայել ԱԲՀ-ի առաքելությունը՝ հստակեցնելով համալսարանի պրոֆիլային ուղղությունը, արտացոլելով ԱԲՀ-ի հստակ դիրքավորումը ՀՀ և միջազգային կրթության դաշտում և աշխատաշուկայում, ինչպես նաև իրատեսորեն պլանավորելով անհրաժեշտ բարեփոխումներն ու ներունակությունը միջազգայնացման գործընթացների տեսանկյունից,
2) լրամշակել ԱԲՀ-ի ռազմավարական ծրագիրը՝ սահմանելով ռազմավարական ուղղությունները և գերակայությունները, մշակել կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների ծրագրեր, ՌԾ-ի իրականացման հստակ ժամանակացույց՝ կապակցելով երկարաժամկետ գործընթացների հետ,
3) մշակել և կիրառել ռազմավարական ծրագրի և նպատակների իրականացման արդյունքների որակական և քանակական գնահատման մեխանիզմներ՝ ապահովելով դրանց չափելիությունը, հստակեցնելով դրանց իրականացման ընթացակարգերը, գործունեության արդյունավետության ցուցանիշները (ԳԱՑ-երը) և հետագա բարելավման հնարավորությունները,
4) ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության շրջանակը համալսարանի ռազմավարական ծրագրի մշակման, ռազմավարական նպատակների ու խնդիրների սահմանման, իրականացման և գնահատման

գործընթացներում՝ կիրառելով և պարբերաբար վերլուծելով շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը,

5) ԱԲՀ-ի ռազմավարական ծրագրի դրույթներին համապատասխանեցնել համալսարանի ներքին քաղաքականությունները, ստորաբաժանումների կանոնակարգերը, կանոնադրությունները, ընթացակարգերը (օրինակ՝ մարդկային ռեսուրսների կառավարման, որակի ապահովման և այլ ոլորտներում):

Կառավարումն ու վարչարարությունը[2]

6) Վերանայել կազմակերպական կառուցվածքը՝ ելնելով զարգացման գերակա ուղղություններից, ռազմավարական նպատակների իրականացման և գործառութային կարևորություններից, ինչպես նաև հստակեցնել և համակարգել կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների գործառույթների բաշխվածությունը:

7) Հստակեցնել կառավարման կոլեգիալ մարմինների դերը և գործառույթները ԱԲՀ-ի որոշումների կայացման և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգում, ինչպես նաև բարելավել որոշումների կայացման գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմները:

8) Ներդնել ԱԲՀ-ի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման ամբողջական համակարգ՝ պարբերաբար իրականացվող հստակ մեխանիզմներով և չափելի գործիքներով, ինչպես նաև ներդնել ռիսկերի բացահայտման և կառավարման համակարգ:

9) Հստակեցնել ԱԲՀ-ի ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ըստ ռազմավարական գերակայությունների:

10) Մշակել ԱԲՀ-ի էթիկայի կանոնակարգ և կիրառել էթիկայի նորմեր որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունն երաշխավորող մեխանիզմներում:

11) Վերանայել վարչարարության որակի ապահովման մեխանիզմները՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

12) Վերլուծել ՄԿԾ-ների ակնկալվող վերջնարդյունքների համապատասխանությունը ՀՀ ՈԱՇ-ին՝ երաշխավորելով առարկաների բովանդակային հաջորդականությունը:

13) Վերանայել դասավանդման և ուսումնառության մեթոդներին վերաբերող ապակենտրոնացված ընթացակարգերը՝ կիրառելով մեթոդների ընտրության միասնական քաղաքականություն:

14) Վերանայել կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացները՝ իրազեկելով ներքին բոլոր շահակիցներին:

---

[2] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

15) Մշակել ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման կայուն մեխանիզմներ՝ ըստ ՊԻԳԲ շրջափուլի՝ ընդլայնելով ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՄԿԾ-ների (վերա)մշակման գործընթացներում:
16) Մշակել բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներ:
17) Կատարելագործել գնահատման համակարգը՝ հիմք ընդունելով առարկաների առանձնահատկությունները, ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները և ապահովել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների կապը ուսումնառության վերջնարդյունքների հետ:
18) Ներդնել ուսանողների պորտֆոլիան որպես գնահատման միջոց՝ պարբերաբար մշտադիտարկելով ուսանողների ձեռքբերած հմտությունները և ուսումնառության ընթացքում առկա խնդիրները:
19) Բարելավել ավարտական ատեստավորման քննությունները՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին ցուցադրելու ձեռքի հմտություններ:
20) Մշակել և կիրառել ուսանողների պրակտիկայի հստակ չափանիշներ՝ պարբերաբար մշտադիտարկելով այդ չափանիշների իրականացումը:
21) Լրամշակել ՄԿԾ-ները ուսանողների և դասավանդողների շարժունությանը նպաստող բաղադրիչներով՝ դիտարկելով ուսումնական այլ հաստատությունների կրթական ծրագրերի հաջողված փորձի ներդրման հնարավորությունները:
22) Լրամշակել դասընթացների նկարագրերը՝ հստակ նշելով ուսանողների համապատասխան բեռնվածությունը, ներառյալ նաև արտալսարանային ժամերը:

Ուսանողները

23) Համակարգել ուսանողների միջազգային ուսանողների հավաքագրման գործընթացները՝ բարելավելով բուհի պաշտոնական վեբ կայքի տեղեկատվությունը:
24) Համակարգել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունները՝ հստակ ժամանակացույց և ընթացակարգեր մշակելով:
25) Խթանել ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին:
26) Ներդնել բուհ-գործատու համագործակցության մեխանիզմներ՝ շրջանավարտների մասնագիտական գործունեության ուղղորդման և աջակցության նպատակով:
27) Բազմազանեցնել ուսանողների կրթական, խորհրդատվական ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

28) Մշակել և կիրառել դասախոսների մրցութային հավաքագրման, ընտրության և ընդունելության կարգ:
29) Ընդլայնել պահուստային դասախոսների ցանկը՝ ներգրավելով մի քանի դասախոս միևնույն առարկայի դասավանդման համար՝ կայունության ապահովման նպատակով:

30) Լրամշակել դասախոսների խրախուսման մեխանիզմները՝ հատուկ ուշադրություն դարձնելով գիտահետազոտական աշխատանք իրականացնող անձանց:
31) Ստեղծել դասախոսների վերպատրաստման և մասնագիտական հմտությունների կատարելագործման մեխանիզմներ և տրամադրել համապատասխան ֆինանսական հատկացումներ:
32) Բարելավել մարդկային ռեսուրսների պլանավորումը՝ դասախոսների արտահոսքի կանխման և կայունության հաստատման համար:

Հետազոտությունը և զարգացումը[3]

33) Հստակեցնել համալսարանի գիտահետազոտական գործունեության ուղղությունները, շեշտադրել գերակայությունները և դրանց ռազմավարական նշանակությունը տարբեր մակարդակների համար:
34) Կատարել համապատասխան ֆինանսական ներդրումներ ՄՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեությունը զարգացնելու և գիտական աշխատանք կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով՝ վերահսկելով ֆինանսական ներդրումների և միջոցների արդյունավետ օգտագործումը:
35) Մշակել հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն:
36) Ստեղծել հստակ մեխանիզմներ՝ ապահովելու գիտահետազոտական գործունեության կապը ուսումնառության գործընթացի հետ:
37) Մշակել և կիրառել գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ և մեխանիզմներ:
38) Մշակել գիտահետազոտական գործունեության միջազգայնացման հստակ ռազմավարություն, խթանել միջգիտակարգային ուսումնասիրությունները՝ ընդլայնելով միջազգայնացման հնարավորությունները:
39) Պլանավորել ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներն ըստ ՄՈՒՀ-ի գիտահետազոտական առաջնահերթությունների, իրականացնել դրանց մշտադիտարկումը և քննարկումը:
40) Մշակել և կիրառել նորամուծությունների ու գիտական արդյունքների առևտրայնացման հստակ մեխանիզմներ՝ արդյունքները վերլուծելով տարեկան կտրվածքով:
41) Բազմազանեցնել կիրառական գիտահետազոտական աշխատանքները գործատուների հետ համագործակցության շրջանակներում:
42) Ուսանողներին ընդգրկել ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում:
43) Վերանայել ՈՒԳԸ կանոնակարգը՝ շեշտադրելով ՈՒԳԸ-ի նպատակներն ու գործառույթները:

---

[3] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

44) ԳԲՈՒԿ-ի հենքի վրա իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ՝ ուսանողների ակտիվ ներգրավմամբ: Միաժամանակ քննարկել, վերլուծել և հակիրճ զեկուցումների/հոդվածների տեսքով ներկայացնել ԳԲՈՒԿ-ի այցելուների դեպքերը՝ որպես առանձին կլինիկական դեպքեր և կատարել էպիդեմիոլոգիական հետազոտություններ՝ վիճակագրական մոտեցումների կիրառմամբ:
45) Մասնակցել մրցութային կարգով տրամադրվող հետազոտական դրամաշնորհային ծրագրերին՝ սարքավորումների և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման նպատակով:
46) Կատարել համատեղ գիտահետազոտական աշխատանքներ հայաստանյան և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

47) Բարելավել ԱԲՀ գրադարանային ֆոնդը՝ ֆինանսական միջոցներ հատկացնելով անգլալեզու մասնագիտական գրականության ձեռքբերմանը:
48) Ներդնել ֆինանսական երկարաժամկետ պլանավորման համակարգ և բազմազանեցնել ֆինանսական հոսքերը՝ նպաստելով յուրաքանչյուր ռազմավարական նպատակի համաչափ զարգացմանը:
49) Կատարելագործել ԱԲՀ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման համակարգերը՝ ներդնելով միասնական էլեկտրոնային համակարգ:
50) Բազմազանեցնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմները՝ շարունակաբար վերլուծելով արդյունքները և պլանավորելով համապատասխան բարելավումներ:

Հասարակական պատասխանատվությունը

51) Մշակել և կիրառության մեջ դնել հաշվետվողականության կարգ, և հաշվետվություններում ապահովել վերլուծական մոտեցումը:
52) Ապահովել ԱԲՀ կայքի բարելավումը և շարունակական զարգացումը՝ ներգրավելով տարբեր թիրախային խմբեր և ընտրելով համապատասխան նպատակային բովանդակություն, և ապահովել ԱԲՀ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը ՄՈՒՀ-ի կայքի միջոցով:
53) Մշակել և ներդնել արտաքին շահակիցների հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:
54) Տեսանելի դարձնել և ակտիվորեն խթանել ԱԲՀ-ի Գիտաբժշկական ուսումնական կենտրոնի դերը՝ որպես համայնքին ծառայելու կարևոր միջոց՝ լրացուցիչ և շարունակական կրթության ծառայություններ մատուցելու միջոցով:
55) Կայքի միջոցով ավելի լայն լսարանի հասանելի դարձնել արդեն իսկ մշակված անգլալեզու գովազդային նյութերը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

56) Մշակել առաքելության և նպատակներին համահունչ միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման քաղաքականություն:

57) Ակտիվացնել տեղական և միջազգային գիտակրթական կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցությունը (ուսանողների փոխանակում, դասախոսների վերապատրաստում, համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացում)՝ ապահովելով բուհի ռազմավարությամբ ամրագրված նպատակների իրականացումը:
58) Ֆինանսական հատկացումներ տրամադրել բուհի միջազգայնացման տարբեր միջոցառումների իրականացման համար՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման նպատակով:
59) Մշակել ուսանողների և ՊԴ կազմի միջազգային վերապատրաստումները խրախուսելու և շարժունության ծրագրերին մասնակցելու մեխանիզմներ ու պարբերաբար գնահատել այդ մեխանիզմների արդյունավետությունը:
60) Վերանայել արտաքին կապերի բաժնի գործառույթները և հետևել դրանց հստակ իրականացմանը:
61) Որոնել միջազգային դրամաշնորհային ծրագրեր՝ բուհի միջազգային տեսանելիության բարձրացման նպատակով:
62) Ապահովել եվրոպական առաջատար կրթական ծրագրերի հետ բենչմարքինգի իրականացումը և արդյունքների կիրառումը՝ թիրախավորելով բուհի պոտենցիալ ուսանողներին, հստակեցնելով հիմնական շուկան և արդիականացնելով գործող կրթական ծրագրերը:

Որակի ներքին ապահովման համակարգը[4]

63) Վերանայել ԱԲՀ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու նպատակները՝ կանոնադրական գործունեությունը և ռազմավարական նպատակները համապատասխանեցնելով վերջիններիս:
64) Մշակել որակի ապահովմանն ուղղված քաղաքականությանն իրականացման անհրաժեշտ ընթացակարգեր, դրանց գնահատման և արդյունավետության չափման մեխանիզմներ՝ բարելավելով ՈՆԱ համակարգը և մեխանիզմները:
65) Մշակել հետադարձ կապի առավել արդյունավետ մեխանիզմներ:
66) Ապահովել որակի ապահովման կառույցներում ընդգրկված անձնակազմի պարբերական վերապատրաստման դասընթացների իրականացումը:
67) Ընդլայնել և ակտիվացնել շահակիցների (հատկապես արտաքին) ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում և գնահատել ներգրավվածության արդյունավետությունը:
68) Կանոնակարգել տվյալների կառավարման գործընթացները և հստակեցնել ԱԲՀ-ի տարբեր ստորաբաժանումների միջև տեղեկատվության տարածման ու վերջինիս կառավարման մեխանիզմները:
69) Իրականացնել ՈԱԲ-ի աշխատակիցների կարիքների վերհանում, կատարողականի գնահատում, և արդյունքների հիման վրա ընդլայնել նրանց մասնագիտական զարգացման հնարավորությունները:

[4] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

70) Բարելավել ՈԱԲ-ի և ստորաբաժանումների միջև համագործակցությունը՝ նպաստելով ՈԱ գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալման և իրազեկվածության բարձրացմանը:
71) Մշակել տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանության և արդյունավետության գնահատման մեխանիզմները՝ գնահատելով որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման նպատակով բուհի տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարությունը:
72) Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը ԱԲՀ-ի բոլոր գործընթացներում՝ նպաստելով որակի մշակույթի ընդլայնումը:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Համընդհանուր հիմնարար արժեքների վրա հիմնված բարձրագույն կրթության (ԲԿ) վերաբերյալ բարեփոխումների գործընթացի միջոցով Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) երկրները, հաստատությունները և շահակիցները շարունակաբար տեղայնացնում են իրենց բարձրագույն կրթական համակարգերը՝ դրանք դարձնելով առավել մրցունակ՝ նպատակային դարձնելով անձնակազմի և ուսանողների շարժունության աճը և գործունակության խթանումը:

Բոլոնիայի գործընթացին համահունչ՝ Ավանդական բժշկության համալսարանը (ԱԲՀ) Հայաստանում այլ համալսարանների շարքում անցել է համապատասխան վերակազմավորում, ինչպիսին է եռաստիճան համակարգի որդեգրումը և անցումը ԿՓԿԵՀ (Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ) կրեդիտային միավորների համակարգի, որոնք հանդիսանում են համադրելիության երկու կարևոր հիմնասյուները ԵԲԿՏ-ի շրջանակներում: Սույն հաշվետվության համատեքստում մասնավորապես դիտարկվում է ԱԲՀ-ի միջազգայնացման բաղադրիչը:

Վերջին մի քանի տարիներին ԱԲՀ-ն գտնվել է անցումային փուլում: Հայ ուսանողների և դիմորդների քանակի կայուն նվազման պատճառով համալսարանին վտանգ էր սպառնում, որ վերջինս այլևս չի կարողանա հետագա գործունեություն ծավալել: Ուսանողների քանակն ավելացնելու և ուսանողների վարձավճարներից ստացվող եկամուտների աճը խթանելու նպատակով ԱԲՀ-ի ղեկավարությունը որոշեց ռազմավարական վերակողմնորոշում իրականացնել դեպի անգլալեզու կրթական ծրագրեր, որոնք թիրախավորում են մասնավորապես միջազգային ուսանողներին: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ԱԲՀ-ին իրավունք է շնորհել կազմել անգլալեզու միջազգային կողմնորոշում ունեցող ծրագրեր, և 2015 թ-ին ԱԲՀ-ում նմանօրինակ ծրագրերի հաջող իրականացումից հետո

ուսանողների քանակը կրկնապատկվել է, իսկ ստացված եկամուտները՝ գրեթե եռապատկվել: Սույն հաշվետվության դրությամբ օտարերկրյա ուսանողները կազմում են ԱԲՀ ուսանողական կազմի ավելի քան 80%-ը: Վերջին մի քանի տարիների ընթացքում հայ ուսանողների կողմից նոր դիմումներ չեն ընդունվել ո՛չ հայալեզու, ո՛չ անգլալեզու դասընթացների համար: Այս միտումը շարունակվելու պարագայում հայալեզու ծրագրով ուսանող վերջին ուսանողների ավարտելուց հետո ԱԲՀ-ում սովորելու են միայն միջազգային ուսանողներ՝ այն դարձնելով բացառիկ միջազգային կողմնորոշում ունեցող համալսարան:

Այս պայմաններում ԱԲՀ-ին անհապաղ անհրաժեշտ է մշակել միջազգայնացման հստակ ռազմավարություն, ինչպես նաև միջազգայնացման հստակ քաղաքականություն, որոնք երկուսն էլ դեռևս սահմանված չեն բուհում: Միջազգայնացման դերը ԱԲՀ-ի ներկայիս առաքելության և ռազմավարական նպատակների շրջանակներում հստակ չէ: Համալսարանի առաքելության մեջ նշված է «ազգային և տարածաշրջանային բժշկական կրթություն», մինչդեռ տեսլականում՝ «ապագա ազգային (...) բժիշկների պատրաստում»: Հարց է ծագում. արդյոք օտարերկրյա ուսանողները պատրաստվում են որպես մարդկային ռեսուրսներ հայկական, թե՝ միջազգային շուկայի համար:

Չնայած պաշտոնական ռազմավարության բացակայությանը՝ այնուամենայնիվ իրականացվել են միջազգայնացմանը միտված մի շարք անհատական նախաձեռնություններ և ընթացակարգեր: Ներկայիս Ռազմավարական զարգացման ծրագիրը (2017-2022), օրինակ, ներառում է միջազգայնացման վերաբերյալ մի ամբողջ բաժին, որն ուղղված է հատկապես համալսարանական և ծրագրային մակարդակներում ընթացող գործընթացների խթանմանը: Այնուամենայնիվ, այս փուլում ԱԲՀ-ի միջազգայնացմանն ուղղված գրեթե բոլոր ջանքերի հիմնական շեշտը դրված է միջազգային ուսանողների հավաքագրման գործընթացների վրա՝ մասամբ անտեսելով այլ հիմնական բաղադրիչներ, ինչպես օրինակ՝ ուսանողների և աշխատակազմի փոխանակման ծրագրերը, ուսումնական պլանի միջազգայնացումը, տարածաշրջանային և միջազգային հաստատությունների միջև հետազոտական և կրթական գործընկերությունը:

Օտարերկրյա ուսանողներ ներգրավելու նպատակով ԱԲՀ-ն համագործակցում է երկու մասնավոր հավաքագրման գործակալությունների հետ: «Քեմփուս Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի (Campus International LLC) հնդկական գործակալությունը վերջին 4 տարիներին բավական արդյունավետ համագործակցում է ԱԲՀ-ի հետ և Հնդկաստանից ներգրավել է ընդհանուր առմամբ մոտ 200 ուսանող ԱԲՀ-ում ուսանելու նպատակով: Գործակալությունը պատասխանատու է Հնդկաստանում ԱԲՀ ծրագրերի շուկայավարման, ինչպես նաև ՀՀ-ում ուսումնառության նախապատրաստման և ընթացքում ծագող վարչական և կազմակերպչական ամբողջական աջակցության համար: 2014 թ.-ից ի վեր գործակալության հայաստանյան գրասենյակը տեղակայված է ԱԲՀ համալսարանական շենքում՝ ապահովելով հնդիկ օտարերկրյա ուսանողների խնդիրներին անհապաղ արձագանք և աջակցություն: Մատուցված ծառայությունների և ԱԲՀ-ում իրենց ուսումնառության վերաբերյալ ուսանողների արձագանքը ընդհանուր առմամբ դրական է:

ԱԲՀ-ում վերջերս ստեղծված Արտաքին կապերի բաժնի հիմնական խնդիրները վերաբերում են օտարերկրյա ուսանողների դիմումների ընդունմանը: Ներկայումս չկան ակնհայտ ջանքեր ուսանողների կամ աշխատակազմի փոխանակման ծրագրերի վերաբերյալ: Եթե անգամ ակադեմիական փոխանակման դեպքեր են գրանցվել անձնակազմում, դրանք

հիմնականում իրականացվել են անհատների անձնական նախաձեռնությամբ և ոչ միջազգայնացման գործընթացների կառուցվածքային մոտեցման արդյունքում:

Չնայած ԱԲՀ-ն որդեգրել է ԿՓԿԵՀ կրեդիտային համակարգը, ինչը թույլ է տալիս կրեդիտները փոխանցել այլ հաստատություններ և ապահովել միջազգային ճանաչելիությունը, բացակայում է ուսանողների փոխանակումը ակտիվորեն խթանող հստակ կառուցվածքը: Ուսանողների համար կարծես թե գործում է պրակտիկայի մի մասն արտերկրում անցնելու հնարավորություն, սակայն դա դեռ չի իրականացվում կամ ակտիվորեն գովազդվում ուսանողության շրջանում: Ներկայումս ելքային շարժունությունը չի գործում:

Չնայած Ռազմավարական զարգացման ծրագրում (2017-2022) նշված է ԱԲՀ-ի միջազգային համագործակցության ամրապնդումը եվրոպական և ԱՊՀ ուսումնական հաստատությունների հետ, գոյություն չունի համագործակցության առկա շրջանակ կամ որևէ պաշտոնական համաձայնագիր հետազոտական կամ դասավանդման գործունեության համար: Համագործակցության խիստ սակավաթիվ դեպքեր են գրանցվել միայն անհատական մակարդակում, որոնք հիմնված են բացառապես անհատական նախաձեռնության, այլ ոչ թե ինստիտուցիոնալ խրախուսման կամ աջակցության վրա:

Ուսումնական պլանների միջազգայնացման նպատակով քայլեր են ձեռնարկվում շնորհված դիպլոմների ճանաչման ուղղությամբ: ԱԲՀ-ի դիպլոմը ճանաչվում է Հորդանանում և Հնդկաստանում: Քանի որ Իրանում այն չի ճանաչվում, ներկայումս իրանցի ուսանողներ չեն ընդունվում համալսարան: Սույն հավատարմագրման գործընթացի և փորձագիտական այցի պահին անգլալեզու ծրագրով ոչ մի ուսանող դեռևս չի ավարտել բուհը: Հետևաբար՝ դեռևս չափելի չէ, թե որքանով է ԱԲՀ-ի ուսումնական ծրագիրը իր շրջանավարտներին պատրաստում իրենց հայրենի երկրներում միջազգային քննություններին և համապատասխան ազգային կամ միջազգային աշխատաշուկայի համար:

Ամբողջական անգլալեզու ծրագրերի ներդրմամբ պայմանավորված՝ ԱԲՀ-ն հստակ շեշտադրում է ուսանողների, ինչպես նաև նրա վարչական/կառավարման և դասավանդող անձնակազմի շրջանում օտար լեզուների իմացության մակարդակը: Ուսանողներին առաջարկվում են թե՛ անգլերեն, թե՛ հայոց լեզվի դասընթացներ: Համաձայն աշխատանքային պահանջների՝ անհրաժեշտ է լեզվի տիրապետման նվազագույն մակարդակ, իսկ համալսարանի աշխատակազմի օտար լեզուների տիրապետման մակարդակը շարունակաբար բարելավվում է: ԱԲՀ-ի կայքը եռալեզու է՝ կայքի բովանդակությունն առաջարկելով հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Քանի որ ռուսախոս ուսանողներն առանձնապես թիրախավորված չեն ծրագրերով, հասկանալի չէ, թե ինչու է տրամադրվում կայքի ռուսերեն տարբերակը: ԱԲՀ-ի ուսումնական ծրագրերին վերաբերող հիմնական տեղեկատվությունը և բոլոր փաստաթղթերը հասանելի են անգլերենով և մասամբ նաև կայքում: Այնուամենայնիվ, ԱԲՀ-ն ամբողջությամբ չի օգտագործում բոլոր հասանելի գովազդային նյութերը: Օրինակ՝ «Քեմփուս Ինթերնեյշնլ»-ի կողմից հնդիկ ուսանողներին ներգրավելու նպատակով մշակված անգլալեզու գովազդային շատ օգտակար տեսահոլովակներ, տեղեկատվական բրոշյուրներ ու թռուցիկներ ԱԲՀ-ի կողմից առհասարակ չեն օգտագործվում այլ նպատակներով, և դրանք հասանելի չեն համալսարանի կայքում կամ տպագիր տարբերակով:

Ամփոփելով՝ ԱԲՀ-ում միջազգայնացման առաջխաղացման համար իրականացվել են բազմաթիվ քայլեր: Համակարգման և գործունեության հետագա ընդլայնման համար անհրաժեշտ է մշակել միջազգայնացման հստակ ռազմավարություն: Թեև համալսարանն արդեն իսկ ապացուցել է, որ շատ հաջողակ է միջազգային ուսանողների հավաքագրման գործընթացում, որպես հետագա քայլեր հավասար ուշադրություն պետք է դարձնել նաև միջազգայնացման մյուս բաղադրիչներին՝ ուսանողների և աշխատակազմի փոխանակման ծրագրերին, ուսումնական պլանների միջազգայնացմանը և տարածաշրջանային ու միջազգային համագործակցությունների կայացմանը:

27 դեկտեմբերի, 2019

Ռոբերտ Խաչատրյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ

ԱԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Ռոբերտ Խաչատրյան՝** բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար, Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ,
2. **Պոլին Գրիս՝** բժշկական գիտությունների դոկտոր, Հայդելբերգի համալսարան, Հանրային առողջապահության ինստիտուտ, Որակի ապահովման կառույցի պատասխանատու,
3. **Ռաֆայել Մեսրոպյան՝** բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Ընդհանուր բժշկության ֆակուլտետի փոխդեկան,
4. **Ռոքսանա Զախարյան՝** կենսաբանական գիտությունների թեկնածու, Հայ-ռուսական համալսարան, Բժշկական կենսաքիմիայի և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ,
5. **Վաչե Ղարիբյան՝** Հայ-ռուսական համալսարան, Ընդհանուր և դեղագործական քիմիայի ամբիոն, 4-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ Վարդուհի Գյուլազյանը:

Թարգմանությունը կատարել է ԵՊԼՀ Թարգմանության ամբիոնի դասախոս Վարդանուշ Բաղդասարյանը:

Փորձագիտական խմբի անդամները, թարգմանիչը, համակարգողը ստորագրել են գաղտնիության և շահերի բախման բացառման հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԱԲՀ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ԱԲՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերենով և անգլերենով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ԱԲՀ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ԱԲՀ ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև համակարգողն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ԱԲՀ-ի հետ:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ ՈԱԱԿ-ի վերապատրաստման պատասխանատուների կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններ, փորձագետի էթիկայի և վարքագծի կանոններ:
2. Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում պրակտիկայից վերցված օրինակների միջոցով:
3. Փորձագիտական այց դերային խաղերի միջոցով:
4. Փորձագիտական զեկույցի պատրաստում:

Վերապատրաստումների ընթացքում քննարկվել են որակի ապահովման չափանիշները և ոլորտի առանձնահատկությունները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խումբը դիտարկել է գործնական պարապմունքներ և քննություններ: Այսպես, փորձագիտական խումբը այցելել է Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն և դիտարկել Վնասվածքաբանություն և օրթապեդիա դասընթացի իրականացումը «Ընդհանուր բժշկության» ֆակուլտետի 4-րդ արտասահմանցիների կուրսում:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[5]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հիմնական խնդիրների և ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի առանձնացումից հետո փորձագիտական խումբը հստակեցրել է հանդիպումների ժամանակ քննարկվող խնդիրները: Պարբերաբար կրկնվող հանդիպումների ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ հարցադրումները, և կազմվել փորձագիտական խմբի նախնական այցի փաթեթը: Փաթեթը պարունակում էր հանդիպումների պլան-ժամանակացույցը, ուսումնասիրման և պարզաբանման ենթակա հարցերը՝ ըստ թիրախային խմբերի և այն լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ էր ուսումնասիրել փորձագիտական այցի ընթացքում: Համալսարանի կողմից ներկայացրած ցանկերից ընտրվել են դասախոսական և ուսանողական կազմերի ներկայացուցիչները, շրջանավարտները, գործատուները, որոնք պետք է մասնակցեին հանդիպումներին:

Նախնական այց

2019 թվականի սեպտեմբերի 2-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց ԱԲՀ: ՄՈՒՀ-ի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2019թ. սեպտեմբերի 16-ից 19-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ԱԲՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը, թարգմանիչը և արձանագրողը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ԱԲՀ ռեկտորի հետ հանդիպումներով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[6], ռեսուրսների դիտարկում[7] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

---

[6] ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[7] ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի ներկայացուցիչները և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել է գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք, որը ներառվել է զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 11.11.2019-ին: Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն ԱԲՀ-ն ուղարկել է ՈԱԱԿ 25.11.2019թ.: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են տեղացի փորձագետներին: Դիտողությունների վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 6-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 27.12.2019թ.:

27 դեկտեմբերի, 2019

_____

Վարդուհի Գյուլազյան, փորձագիտական խմբի համակարգող

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Ավանդական բժշկության համալսարան» առնտրային կազմակերպությունը հանդիսանում է «Ավանդական բժշկության ինստիտուտ» ԱԿ-ի իրավահաջորդը, որը հիմնադրվել է 1991 թվականին:

Իր գործունեության ընթացքում համալսարանն ունեցել է 900-ից ավելի շրջանավարտներ, որոնց մեծամասնությունը որպես պրակտիկ բժիշկներ, գիտական աշխատողներ, դասախոսներ, առողջապահության կազմակերպիչներ հաջողությամբ աշխատում են ՀՀ և միջազգային առաջնակարգ կլինիկաներում և բժշկագիտական ամբիոններում: Շրջանավարտներից շատերն ունեն իրենց մասնավոր կլինիկաները, և համալսարանի որոշ շրջանավարտներ նույնպես աշխատում են այս կլինիկաներում:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է մանկավարժական, մասնագիտական բազմամյա փորձառություն ունեցող, հանրապետությունում և նրա շրջանակներից դուրս ճանաչված գիտնականներով, դասախոսներով, բժիշկներով, որոնց աշխատանքի շնորհիվ ԱԲՀ-ն այսօր ունի մեծ հեղինակություն և իր արժանի տեղն է զբաղեցրել հանրապետության բուհական համակարգում: Համալսարանը համագործակցում է հանրապետության և օտարերկրյա հաստատությունների ու կազմակերպությունների հետ:

Կրթություն. Համալսարանը կարևորում է յուրաքանչյուր կարողունակ անհատի՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը և իր ուսանողներին ապահովում է բարձրորակ և մատչելի կրթական փորձառությամբ, տրամադրում է խորհրդատվական և ֆինանսական աջակցություն: Համալսարանում իրականացվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերը պարբերաբար մշտադիտարկվում են և իրականացվում անհրաժեշտ բարելավում: Համալսարանում գործում է ուսանողների գիտելիքների պարբերաբար ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ: Ներկայումս մշակվում են ՄԿԾ-ների ուղեցույց և առարկայական դասընթացների ծրագրերն ու նկարագրերը:

Համալսարանում գործում են 2 ֆակուլտետ, 8 ամբիոն: Անցած 29 տարիների ընթացքում համալսարանի ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը, ամբողջ կոլեկտիվը հետևողականորեն ձգտել են իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխանող ուսումնագիտական գործընթաց:

Հետազոտություն. Համալսարանը առաջիկայում նախատեսում է ընդլայնել դասախոսական և ուսանողական համակազմերի ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

Վերականգնվել և ծրագրերում են ընդգրկվել ախտորոշման և բուժման ավանդական մեթոդները՝ շեշտը դնելով բուժման ինտեգրատիվ մոտեցման վրա /ինտեգրելով ավանդական և ժամանակակից մեթոդները/:

Միջազգայնացում. Արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը խթանելու նպատակով համալսարանը նախատեսել է ընդլայնել և խթանել համալսարանի միջազգային կապերի զարգացումը Եվրոպական և ԱՊՀ ուսումնական հաստատությունների հետ համալսարանական և ծրագրային մակարդակներում՝ կատարելով հետևյալ գործընթացները՝ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման արդյունավետ քաղաքականության ու

մեխանիզմների, միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ համատեղ գիտակրթական միջոցառումների իրականացում, ուսանողների և ՊԴ կազմի շարժունության ձևերի կիրառում՝ ընդլայնելով միջազգային կրթական գիտաժողովներին, սեմինարներին և այլ կրթական ծրագրերին մասնակցությունը, հրավիրյալ դասախոսների ներգրավում գիտաուսումնական գործընթացում:

Որակի ապահովում. Ուսուցման որակը շարունակում է մնալ համալսարանի հիմնական նախապատվությունը: Համալսարանն իր ռազմավարական ծրագրով նախատեսում է որակի ներքին ապահովման գործընթացը համապատասխանեցնել բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական և ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին և ուղենիշներին՝ որակի ներքին ապահովման մշակույթ ձևավորելու, կրթության որակի շարունակական բարելավման քաղաքականությունն ու ընթացակարգերը մշակելու և զարգացնելու միջոցով: Որակի ներքին ապահովման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համալսարանը նախատեսում է նաև ընդլայնել համագործակցությունը հանրապետական այլ բուհերի նմանօրինակ կառույցների հետ, ապահովել որակի ներքին ապահովման հանձնաժողովի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը, շահակիցների ակտիվ ներգրավվածությունը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ԱԲՀ-ի առաքելությունն ամրագրված է բուհի 2017-2022 թթ. ռազմավարական ծրագրում: Համաձայն այս ծրագրի՝ ԱԲՀ առաքելությունը սահմանվում է. «Ավանդական բժշկության համալսարանը բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության առաջատար կրթօջախ է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության ազգային և տարածաշրջանային եզակի և նախադեպը չունեցող, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող բժիշկների պատրաստմանը»: Նոր ռազմավարությամբ ԱԲՀ-ն հավակնություն ունի զարգացնել իր գերակա ուղղությունները և մրցակցային առավելությունը՝ գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության ինտեգրումը ժամանակակից բժշկության մոտեցումների հետ և դրանց ներդրումը կրթական գործունեության մեջ, ինչպես նաև ավանդական բժշկության հիմունքների վերաբերյալ գիտելիքների փոխանցումը տարբեր շահակիցներին: Միաժամանակ, ԱԲՀ-ն զարգացման իր կարևոր նպատակներից է համարում եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելը:

Նշված նպատակներին հասնելու համար ԱԲՀ-ն որդեգրել է բարեփոխումների մի շարք մոտեցումներ՝ ուսուցման և ուսումնառության գործընթացների համար բարենպաստ կրթական միջավայրի ձևավորում, ռեսուրսների արդյունավետ օգտագործում և շարունակական բարեփոխումների իրականացում: Այս գերակայությունները ռազմավարական նպատակների և խնդիրների տեսքով արտացոլված են ԱԲՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրում: ԱԲՀ-ի ռազմավարական նպատակներին հասնելու համար մշակվել է կարճաժամկետ և երկարաժամկետ գործողությունների պլան-ժամանակացույց: Այնուամենայնիվ նշված չէ, թե ռազմավարական յուրաքանչյուր նպատակի իրականացման համար ինչ ռեսուրսների և միջոցների համամասնություն է հատկացվելու կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածներում:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ սակայն, որ ինքնավերլուծության արդյունքում բացահայտված խնդիրները հիմք չեն հանդիսացել համալսարանի ռազմավարական ծրագրի միջնաժամկետ պլանավորման համար, ուստիև ԱԲՀ նախորդ՝ 2012-2016թթ Ռազմավարական ծրագիրը չի ենթարկվել էական փոփոխությունների: ԱԲՀ-ում ռազմավարական միջնաժամկետ պլանավարում առկա չէ:

Ըստ բուհի ինքնավերլուծության, ԱԲՀ առաքելությունը համահունչ է ՈԱՇ-ին այն առումով, որ բուհի կրթական ծրագրերը մշակելիս հաշվի են առնվել ՈԱՇ-ի բնութագրիչները և այդ բնութագրիչների տարրերն արտացոլված են ՄԿԾ ընդհանրական վերջնարդյունքներում: Սակայն փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ՈԱՇ-ի և ՄԿԾ վերջնարդյունքների համադրում բուհը չի կատարել:

Դիտարկելով ԱԲՀ կանոնադրությունն ու առաքելությունը՝ ենթադրվում է, որ այն շահույթ հետապնդող կազմակերպություն է, սակայն նկատելի է, որ ձեռնարկատիրական գործունեությունը զարգացած չէ ՄՈՒՀ-ում և ձեռնարկատիրական գործունեության տեսակների բազմազանություն առկա չէ:

Այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ ԱԲՀ-ն այլևս չի սպասարկում ազգային շուկան և չի իրականացրել ընդունելություն հայալեզու ուսանողների համար: Ներկայում, համալսարանը սպասարկում է միայն միջազգային շուկան:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Համալսարանի ինքնավերլուծության համաձայն՝ ԱԲՀ-ն կարևորում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտումը և արտացոլումը ԱԲՀ ռազմավարական ծրագրում և այլ գործընթացներում: Համալսարանն իր ներքին շահակիցներին է համարում բուհի ղեկավարությանը, ուսանողներին, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերին: Արտաքին շահակիցներն են շրջանավարտները, ուսանողների ծնողները, գործատուները, պետական և մասնավոր կառույցները, առողջության հետ կապված տարբեր խնդիրներ ունեցող քաղաքացիները:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ ներքին շահակիցների կարիքները հիմնականում արտահայտված են ՌԾ նպատակներում և խնդիրներում, իսկ արտաքին շահակիցները՝ մասնավորապես գործատուներն ու շրջանավարտները ոչ ֆորմալ ձևով են մասնակցում ՌԾ մշակմանը:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ թույլ է արտաքին շահակիցների՝ պոտենցիալ գործատուների հետ կապը և համագործակցության մեխանիզմները չեն գործում գործատուների ցածր մոտիվացիայի պատճառով, ինչպես նաև արտաքին շահակիցների ներգրավման ակտիվ քայլեր չեն ձեռնարկվում: Հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարության, միջազգային գործընկերների հետ նույնպես բուհը չունի համագործակցություն ռազմավարական նպատակների և խնդիրների սահմանման գործում՝ շեշտադրելով տվյալ շահակիցների կարիքները:

Շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմ են հանդիսանում հարցումներն ու կառավարման տարբեր օղակներում նրանց ներգրավածությունը:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԱԲՀ-ում առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման նպատակով կիրառվում են հարցումները, ստորաբաժանումների հաշվետ-վությունները, ՌԾ-ի իրականացման գործողությունների պլանը: ՌԾ գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցում յուրաքանչյուր գործողության համար ներկայացված են իրականացման ժամկետները, պատասխանատուները, անհրաժեշտ ռեսուրսներն ու ակնկալվող արդյունքները: Սակայն ներկայացված արդյունքներն ընդհանրական են, իրականացված չէ նաև ռեսուրսների հստակ բաշխում՝ ըստ գերակա ուղղությունների և արդյունավետության գնահատումների: Բացակայում են նաև գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշները (այսուհետ՝ ԳԱԱՑ), նախորդ ռազմավարական

ծրագրի վերլուծությունը չի շեշտադրում տվյալ ժամանակահատվածի ձեռքբերումները և թերությունները՝ հնարավորություն չստեղծելով դիտարկել կատարողականի գնահատման արդյունքներն ու կատարված փոփոխությունները:

ԱԲՀ-ի գիտական խորհուրդը պարբերաբար իր նիստերի ժամանակ չի քննարկում ՌԾ-ի իրականացման ձեռքբերումները. առկա չեն իրականացման գնահատումներից բխող հաշվետվություններ, որակական և քանակական ցուցանիշներ: Ռեկտորի հաշվետվությունները վերլուծական բնույթ չունեն և չեն շեշտադրում ԳԱՑ-երը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԱԲՀ ջանքերն՝ ուղղված ռազմավարական նպատակների պլանավորմանը և իրականացմանը: Այնուամենայնիվ, ռազմավարական պլանավորման գործում կարևորվում է նպատակների և խնդիրների հստակեցումը՝ ըստ առկա ֆինանսական և մարդկային ռեսուրսների, ինչն էլ կնպաստի ՄՈՒՀ-ի ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացմանը և ռեսուրսների արդյունավետ և հասցեական օգտագործմանը:

Դրական է, որ բուհի ներքին շահակիցները մասնակցում են ռազմավարական պլանավորմանն ու իրականացմանը, այնուամենայնիվ միջազգային գործընկերների և առողջապահության ոլորտի ներկայացուցիչների հետ ակտիվ համագործակցությունը կնպաստի բուհի դիրքի ամրապնդմանը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում: Դրական է նաև, որ բուհի բոլոր շահակիցներն ընդունում են ԱԲՀ-ի մրցակցային առավելությունը, սակայն բուհի մրցակցային առավելությունն առավել զարգացման պարագայում ԱԲՀ-ն հնարավորություն կունենա ինտեգրել գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության մոտեցումները ժամանակակից բժշկության մեջ:

Առաքելության, ռազմավարական նպատակների և կատարողականի արդյունքների գնահատման մեխանիզմներն ու ընթացակարգերը գտնվում են գործածության դեռևս պլանավորման և մասնակի իրականացման փուլերում, իսկ դրանց հաջորդող փուլերը՝ գնահատումն ու բարելավումը դեռևս չեն գործում:

Ռազմավարական նպատակների համար չափելի որակական և քանակական հիմնավորված ցուցանիշների սահմանումը և դրանց հիման վրա բուհի բոլոր ոլորտների արդյունավետության գնահատումները կնպաստեն բուհի տարբեր ստորաբաժանումների արդյունավետության բարձրացմանը, խնդիրների դուրսբերմանը և բուհի բոլոր ոլորտներում շարունակական զարգացմանը և լավագույն փորձի կուտակմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը ՄՈՒՀ-ը, ինքնավերլուծության արդյունքներից ելնելով, ճշգրտել և բարելավել է իր Ռազմավարական ծրագիրը, կատարել է նախորդ Ռազմավարական ծրագրի գնահատում, ՄՈՒՀ-ի ՌԾ-ն սահմանված է ըստ ԱԲՀ առաջնահերթությունների, իսկ առաջնահերթություններն արտացոլում են ներքին շահակիցների կարիքները, ԱԲՀ շահակիցները գիտակցում են ՄՈՒՀ-ի մրցակցային առավելությունը /ավանդական և դասական բժշկության ինտեգրումը/, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը պետք է քայլեր ձեռնարկի ՌԾ-ում սահմանված նպատակների գնահատման համար չափելի ցուցանիշների սահմանման ուղղությամբ՝ ներգրավելով ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցներին:

Եզրակացություն: ԱԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան. և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԱԲՀ-ի կառավարումն իրականացվում է ԱԲՀ-ի կանոնադրությանը համապատասխան՝ առանձին մարմինների՝ ԱԲՀ-ի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, ուսանողական խորհրդի, ֆակուլտետների ու ամբիոնների գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի հիման վրա: ԱԲՀ-ի կառավարման համակարգի հիմքում ընկած է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցումը: Համալսարանի ընդհանուր ղեկավարումն ու գործառնական կառավարումը իրականացնում է ռեկտորը, որին կից գործում է ռեկտորատը՝ որպես խորհրդատվական մարմին: ԱԲՀ-ում չեն գործում ֆակուլտետային խորհուրդները, որոնք կարող են վարչական և ուսումնագիտական ոլորտներին առնչվող որոշումներ կայացնել: Որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունը երաշխավորող մեխանիզմներ չկան, մասնավորապես՝ ռեկտորի հրամանների և հրահանգների կատարումը վերահսկող գործուն համակարգ առկա չէ:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ԱԲՀ-ի կառուցվածքի և կառավարման համակարգի արդյունավետությունը չի գնահատվել և բացակայում են դրա իրականացման հստակ մեխանիզմները: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ նաև, որ կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները հստակ չեն, օրինակ՝ գիտական բաժինը խմբագրում է կայքի և այլ նյութեր, ընդհանուր բաժինը/կադրերի բաժինը հրամանագրում է ուսանողներին, հրամանները պահվում են ոչ ուսումնական բաժնում:
Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ երբեմն միևնույն աշխատակիցը կամ ստորաբաժանումը պատասխանատու է մի շարք տարբեր գործընթացների համար: Ըստ կազմակերպական կառուցվածքի՝ հորիզոնական կապերը ստորաբաժանումների միջև և փոխգործության շրջանակը հստակ սահմանված չեն, իսկ ուղղահայաց կապերը ապահովվում են հիմնականում հաշվետվությունների միջոցով: Երկու ֆակուլտետների կառավարումն իրականացվում է միայն մեկ դեկանի կողմից:

ԱԲՀ-ում առկա են տարբեր ստորաբաժանումների գործունեությունը և տարբեր գործընթացները կարգավորող փաստաթղթեր: Մասնավորապես, կառավարման մարմիններն իրենց գործողություններում առաջնորդվում են կանոնակարգերով և ընթացակարգերով: Այդ կանոնակարգերն ու ընթացակարգերը հիմնականում հասանելի են առցանց:
Բոլոր գործառույթների իրականացման համար ԱԲՀ-ն հատկացնում է նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ: Մարդկային ռեսուրսների պահանջարկի և թիրախային համալրման հստակ պլանավորում չի իրականացվում: Նյութական ռեսուրսները ստորաբաժանումներին տրամադրվում են ըստ պահանջագրերի և առկա բյուջեի

հնարավորությունների: ԱԲՀ-ում առկա մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարության վերլուծությունները համակարգված բնույթ չեն կրում: Ֆինանսատնտեսական գործունեության ներքին աուդիտ չի իրականացվում:

Չնայած ինքնավերլուծության զեկույցում նշված է, որ ֆինանսական պլանավորումն իրականացվում է ըստ ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների, այնուամենայնիվ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ֆինանսական ռեսուրսներն առաջին հերթին հատկացվում են աշխատավարձային ֆոնդին, ապա՝ նյութատեխնիկական ռեսուրսների ձեռքբերմանն ու այդ բազայի թարմացմանը: Ներդրված չէ ֆինանսական կառավարման ամբողջական համակարգ: Ֆինանսական համակարգի արդյունավետության, ֆինանսական ռեսուրսների կայունության և ֆինանսական աղբյուրների համալրման շարունակականության վերլուծության վերաբերյալ փաստական նյութեր չեն ներկայացվել:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ԱԲՀ-ի կանոնակարգային հենքը հնարավորություն տալիս է ՊԴ կազմին և ուսանողներին որպես ներքին շահակիցներ ներգրավվել ԱԲՀ-ի կառավարման կոլեգիալ մարմիններում՝ կառավարման խորհրդում և գիտական խորհրդում: Այս կերպ ներքին շահակիցներն անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով հնարավորություն են ստանում մասնակցելու համալսարանի կառավարման գործընթացին, հարցերի քննարկմանն ու դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը: Կառավարման գործընթացներին ուսանողների մասնակցության անուղղակի ձևերից են ուսանողական հարցումները, համալսարանի ղեկավարության տարբեր ներկայացուցիչների հետ պարբերաբար հանդիպումները:

ՈՒԽ-ն՝ որպես ուսանողության ինքնակառավարման մարմին, նաև առաջադրում և ընտրում է ԱԲՀ կոլեգիալ կառավարման մարմիններում ուսանողության ներկայացուցիչներին: Սակայն վերոնշյալ կառավարման մարմիններում ներգրավված չեն օտարերկրյա ուսանողներ և ներքին շահակիցների ներգրավվելու մեխանիզմների արդյունավետության ուսումնասիրություններ չեն իրականացվում: Ուսանողների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ նրանց նախաձեռնողականությունը և հետաքրքրությունը կառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացների նկատմամբ թույլ է: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ ուսանողները չեն գիտակցում որոշումների կայացման գործընթացում իրենց դերակատարությունը:

Կառավարման մարմինների որոշումները շահակիցների համար հասանելի չեն համալսարանի կայքում: Դասախոսների և ուսանողների բավարարվածությունը՝ ՄՈՒՀ-ի կողմից իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացին ներգրավումից դեռևս չի ուսումնասիրվել:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԱԲՀ-ն պլանավորումն իրականացնում է երկու մակարդակում: ԱԲՀ-ն մշակել է ռազմավարական ծրագիր, որտեղ ներառված նպատակները, խնդիրները և գործողություններն

արտացոլում են ռազմավարական երկարաժամկետ ուղղությունները: ԱԲՀ-ն մշակում է նաև կարճաժամկետ պլաններ՝ նախատեսված մեկ ուսումնական տարվա համար: ԱԲՀ-ում միջնաժամկետ պլաններ չեն մշակվում և մշտադիտարկման մեխանիզմները չեն գործում:

ԱԲՀ-ում տարբեր ստորաբաժանումների աշխատանքային պլանները նույնական են վերջին 3 տարիների համար: Բացի այդ, ՌԾ-ի գնահատման ցուցանիշներ և վերջնարդյունքներ սահմանված չեն: ՄՈՒՀ-ն առայժմ չի գնահատում, թե որքանով է պլանավորման գործընթացը նպաստում համալսարանի առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանը:

ԱԲՀ-ն բյուջեի պլանավորումն իրականացվում է կարճաժամկետ ժամանակահատվածի համար՝ մեկ տարվա նախահաշվի կազմմամբ, որտեղ արտացոլվում են ֆինանսական մուտքերը և ծախսերն ըստ առանձին հոդվածների ամբողջ հաստատության համար:

ԱԲՀ-ում պլանավորված գործողությունների իրականացման և մշտադիտարկման համար կիրառվում է հաշվետվությունների մեխանիզմը: Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են ընթացիկ և տարեկան հաշվետվություններ: ԱԲՀ տարեկան հաշվետվությունները վերլուծական բնույթ չեն կրում և հիմնականում նկարագրական են՝ ընդամենը կատարված գործընթացների կատարողականն է ներկայացվում: Ծրագրերի մշտադիտարկման հստակ գործուն մեխանիզմներ չկան: Չնայած ինքնավերլուծության զեկույցում նշված է, որ ռազմավարական պլանի մշտադիտարկումն իրականացվում են ԳԱՑ-երով, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջիններս դեռևս հստակ սահմանված չեն:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ԱԲՀ-ի ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջաններում ոչ կանոնավոր կերպով անցկացվում են հարցումներ: ԱԲՀ-ն կարևորում է այդ հարցումների իրականացումը, որոնց արդյունքներից ստացված տվյալների վերլուծության արդյունքում մասնակի են դուրս բերվում ԱԲՀ-ի թույլ և ուժեղ կողմերը, արտաքին հնարավորությունները և սպառնալիքները: Արտաքին գործոնների ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման գործընթացը կրում է իրավիճակային բնույթ և կանոնակարգված չէ նախապես մշակված ընթացակարգերով, հստակ մեթոդաբանությամբ կամ գործիքակազմով: Տվյալների հավաքագրում նույնպես համակարգված չի իրականացվում, իսկ որոշումների կայացման գործընթացները չեն հիմնվում հավաստի տվյալների հիման վրա: ԱԲՀ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար ներկայումս կիրառվող հիմնական մեխանիզմը հարցումն է: Հարցումները, սակայն պարբերական բնույթ չեն կրում և իրականացվում են ըստ անհրաժեշտության: Նմանատիպ ուսումնասիրության օրինակ կարելի է համարել ինքնավերլուծության նպատակով կազմակերպված հարցումները և դրանց արդյունքների վերլուծությունը: Իրականացված հարցումների կազմակերպման մեթոդաբանությունը հստակ չէ, իսկ մեխանիզմների և գործիքակազմի հուսալիությունն ու հավաստիությունը ստուգված չէ:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ԱԲՀ-ում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը մասամբ է իրականացվում որակի կառավարման սկզբունքով: Որակի կառավարման՝ ՊԻԳԲ սկզբունքով իրականացվող վարչարարությունը գտնվում է հիմնականում պլանավորման և իրականացման փուլում:

Տարբեր գործընթացներ գտնվում են ՊԻԳԲ տարբեր փուլերում՝ առանց ամբողջական շրջափուլի. վերջին երկու՝ գնահատման և բարելավման փուլերն ավարտուն չեն: Պլանավորման և իրականացման քայլերից հետո գնահատման և բարելավման փուլերը հստակ ընթացակարգով չեն իրականացվում: Արդյունավետության գնահատումների վերաբերյալ հիմքեր փորձագիտական խմբին չեն ներկայացվել: Ստորաբաժանումները չեն կիրառում իրենց աշխատանքի գնահատման համար հստակ ցուցանիշներ: Բարելավմանը միտված գործողությունները ոչ միշտ են հիմնավորված հավաստի տվյալներով:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ԱԲՀ-ում հավաքագրվում և վերլուծվում է տեղեկատվություն՝ ստացված ուսանողների, շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումներից, որոնց հիման վրա կատարվում են բարելավումներ ՄԿԾ-ներում:

ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվությունը հիմնավորվում է նաև ուսանողների ակադեմիական առաջադիմության վերլուծության, ուսանողների, դասախոսների, արտաքին շահակիցների հետ համալսարանի ղեկավարության ոչ ֆորմալ քննարկումների ժամանակ բարձրացված հարցերի վերլուծության արդյունքում: ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման մեկ այլ մեխանիզմ է ավարտական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: ԱԲՀ այլ գործընթացների՝ նյութատեխնիկական ռեսուրսների ապահովման, ֆինանսական, կադրային համալրման վերաբերյալ արդյունավետության գնահատումներ համակարգված չեն իրականացվում: Ինքնավերլուծության ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ԱԲՀ-ում գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ առկա չեն:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

ԱԲՀ-ն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվություն է տարածվում ԱԲՀ պաշտոնական կայքի և գովազդային նյութերի միջոցով: ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տվյալներ ԱԲՀ-ում հավաքագրվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններից, դեկանի հաշվետվություններից, սակայն կրթական

ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող հուսալի և օբյեկտիվ մեխանիզմներ ու գործիքներ ԱԲՀ-ում առկա չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված ԱԲՀ-ի ջանքերը, սակայն կառավարման համակարգը բարելավման կարիք ունի: Ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման համար գործուն կառավարման համակարգի առկայությունը թույլ կտա բուհին շարունակական զարգացում ապահովել ՌԾ-ով նախանշված բոլոր ոլորտներում: Տարբեր ստորաբաժանումների և վարչական կառույցների գործառույթների կրկնությունը և շատ հաճախ ոչ հստակությունը, ինչպես նաև պաշտոնների անձնագրերի բացակայությունը վտանգում է սահմանված նպատակների իրականացումը: Կառավարման մարմինների, ստորաբաժանումների և առանձին պաշտոնների գործառույթները հստակեցնող փաստաթղթերի, կանոնակարգերի և ընթացակարգերի արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայությունը չի կարող ապահովել ԱԲՀ-ի կառավարման համակարգի արդյունավետ գործառումը:

ԱԲՀ-ն շարունակում է համակարգային խնդիրներ ունենալ ներքին ու արտաքին միջավայրի գործոնները լիարժեքորեն վերլուծելու, իր գործողությունների արդյունավետության ցուցանիշները սահմանելու և դրանցով գործունեությունը գնահատելու, ստացված արդյունքները պլանավորման և շարունակական զարգացման համար կիրառելու տեսանկյունից: ԱԲՀ-ում միջնաժամկետ պլանավորման բացակայության պայմաններում ինստիտուցիոնալ խնդիրներ է առաջանում կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումների ճշգրտման տեսանկյունից:

Փորձագիտական խմբի այցի ժամանակ փաստվեց, որ ԱԲՀ-ի կառավարման և գիտական խորհուրդների միջև չկա հստակ սահմանված գործառութային բաշխվածություն: Իսկ արտաքին շահակիցների խիստ սահմանափակ ներգրավվածությունը այդ խորհուրդներում հանգեցնում է արտաքին միջավայրի գործոնների, արտաքին պահանջների և զարգացումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվության վերլուծությանը բացակայությանը:

Փորձագիտական խումբը կազմակերպական կառուցվածքի առավել հստակեցման անհրաժեշտություն է տեսնում՝ ելնելով գերակա ուղղությունների, ռազմավարական նպատակների իրականացման և գործառույթների կարևորություններից: Քանի որ կառավարման համակարգի և դրա առանձին օղակների գործունեության արդյունավետության գնահատման կանոնակարգված գործընթաց չի իրականացվում, ԱԲՀ-ն չի գնահատում նաև մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունն իր նպատակների իրականացման համար՝ վտանգելով ֆինանսական ռեսուրսների և ծախսերի ոչ նպատակային բաշխումը: Սակայն այն, որ նյութատեխնիկական ռեսուրսներն ստորաբաժանումներին տրամադրվում են ըստ նրանց պարբերական պահանջների և բյուջեի հնարավորությունների, որոշ չափով ապահովում է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների առկայությունը, սակայն չի երաշխավորում կայունությունը: Սահմանված էթիկայի նորմերի և/կամ հանձնաժողովի, որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունն երաշխավորող մեխանիզմների, ինչպես նաև արդյունավետության գնահատման որակական և քանակական տվյալների բացակայությունը

ռիսկային է դարձնում կառավարման համակարգի արդյունավետությունը և ռազմավարական նպատակների թիրախային իրականացումը:

Ռազմավարական ծրագրին համապատասխան ֆինանսական պլանավորման բացակայությունը հնարավորություն չի տալիս ԱԲՀ-ին ֆինանսական քաղաքականության և ռազմավարական զարգացման հետ ապահովել գործընթացների նպատակայնությունը, ինչն ազդում է զարգացման արդյունավետության վրա և վտանգում ռազմավարական նպատակների իրականացումը:

Ընդհանուր առմամբ, տարբեր գործընթացների գնահատումների և մշտադիտարկման մեխանիզմների ոչ լիարժեքությունը ռիսկի տակ է դնում կառավարման համակարգի արդյունավետությունը և շարունակական զարգացումը: ԱԲՀ-ն նախկինում չի իրականացրել ներքին գործընթացների արդյունավետության վերլուծություն, այդ իսկ պատճառով համալսարանում դեռևս չի ձևավորվել վերլուծություններ իրականացնելու մշակույթ:

ԱԲՀ-ում տեսանելի են որակի կառավարման շրջափուլի հիմնականում պլանավորման և իրականացման փուլերը՝ պայմանավորված նաև նրանով, որ ստորաբաժանումները դեռևս չեն կիրառում իրենց աշխատանքի գնահատման համար հստակ ցուցանիշներ, իսկ կիրառվող հաշվետվողականության մեխանիզմներ չեն ապահովում հիմք հետագա բարելավման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում իրականացվում է իրավիճակային կառավարում, որոշումները հիմնականում կայացվում են Հիմնադիրների Խորհրդի կողմից, ՄՈՒՀ-ի կառավարման տարբեր խորհուրդներում ներգրավված չեն արտաքին շահակիցներ, ՄՈՒՀ-ի մարդկային և ֆինանսական ռեսուրսների պլանավորումը մի շարք ոլորտներում /գիտություն/ չի համապատասխանում ՌԾ-ով սահմանված նպատակներին, չի կատարվում ռիսկերի գնահատում, կառավարման համակարգի արդյունավետության գնահատում չի իրականացվել, արտաքին միջավայրի համակարգային վերլուծություն առկա չէ, կառավարման ոլորտում ՊԻԳԲ շրջափուլը գրեթե բոլոր ոլորտներում գտնվում է պլանավորման և իրականացման փուլերում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: ԱԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԱԲՀ-ն իր 2017-2022 թթ. Ռազմավարական զարգացման ծրագրում կրթական գործունեության արդիականացման և բարելավման նպատակով նախատեսել է իրականացնել հետևյալ քայլերը. «վերանայել կրթական գործող ծրագրերը համապատասխանեցնելով

ազգային և միջազգային կրթական չափորոշիչներին ու աշխատաշուկայի պահանջներին, ապահովել կրեդիտային համակարգի ներդրում կրթական ծրագրերում, բարձրացնել համալսարանում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը»:

Համալսարանում իրականացվում է 6 կրթական ծրագիր, որից 2-ը բակալավրի, 2-ը՝ մագիստրոսի, 2015թ-ից ներդրվել է անընդհատ և ինտեգրացված 2 կրթական ծրագիր՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա»:

ԱԲՀ-ն ունի մշակված ՄԿԾ-ներ, որոնք նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող արդյունքների, ՄԿԾ-ների վերջնարդյունքները համահունչ են ՄՈՒՀ-ի առաքելությանն այն առումով, որ համալսարանը պատրաստում է առողջապահության ոլորտի մասնագետներ: Այնուամենայնիվ, ԱԲՀ ՄԿԾ-ների վերջնարդյունքների և ՀՀ ՈԱՇ-ի պահանջների համապատասխանության վերաբերյալ բուհը վերլուծություն չի կատարել: Հարկ է նաև նշել, որ ՄԿԾ-ների կազման և վերանայման աշխատանքներում արտաքին շահակիցներ չեն մասնակցել:

ԱԲՀ-ի ՄԿԾ-ների մշակման համար ուղեցույց են ընդունվել ՀՀ պետական կրթական չափորոշիչները, ՀՀ ՈԱՇ-ը, ինչպես նաև 2005 թ-ի ԱԲՀ-ի «դիպլոմավորված մասնագետի» 5 և 6 տարի տևողությամբ կրթական ծրագրերը: Համաձայն «ԱԲՀ-ի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման» ընթացակարգի՝ 2015թ-ին մշակված անընդհատ և ինտեգրացված մասնագիտական կրթական ծրագրերի վերանայումն իրականացվել է 2018 թվականին, իսկ հաջորդ վերանայումը նախատեսված է իրականացնել 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում:[8] Բուհի կողմից մշտադիտարկման արդյունքում 2018 թ. բարելավվել է ՄՈՒՀ-ում գործող անընդհատ և ինտեգրված ՄԿԾ-ները:

Այդուհանդերձ, փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերում (2015 թ. մագիստրոսական, 2015 թ. անընդհատ և ինտեգրված, 2018 թ. անընդհատ և ինտեգրված) էական փոփոխություններ չկան, ինչպես ՄԿԾ-ների նպատակներում, այնպես էլ ուսուցման և դասավանդման մոտեցումներում: 2015 և 2018 թթ. ՄԿԾ-ների վերլուծությամբ պարզ դարձավ, որ նշված ծրագրերի եզակի առարկաներում են որոշ փոփոխություններ կատարվել, առարկայական ծրագրերի 90%-ից ավելին, ըստ մասնագրերի, բովանդակային փոփոխությունների չեն ենթարկվել, փոխվել է միայն գնահատման համակարգը, որոշ դեպքերում նաև գրականության ցանկը: Միևնույն ժամանակ բովանդակային առումով փոփոխության չենթարկված բազմաթիվ առարկաների կրեդիտները ենթարկվել են փոփոխությունների, ընդ որում, շատ դեպքերում պահպանելով լսարանային ժամերը, ավելացել են ինքնուրույն աշխատանքին և դասախոսական խորհրդատվությանը հատկացված ժամերը, որի հաշվին էլ փոփոխվել են առարկայի կրեդիտները: Ընդ որում, շատ դեպքերում դասախոսական խորհրդատվությանը հատկացված ժամերը գերազանցում են դասախոսություններին հատկացված ժամաքանակներին, իսկ ինքնուրույն աշխատանքի գնահատման և վերահսկման մեխանիզմներ առկա չեն:

2015 թ. մագիստրոսական ծրագրում (2 տարի տևողությամբ) միևնույն առարկաների ամփոփիչ ավարտական որակավորման քննությանը տրված էր 18 կրեդիտ, այնինչ անընդհատ ու ինտեգրված կրթական ծրագրում (6 տարի տևողությամբ)՝ ընդամենը 3: Այս փաստը

[8] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

նույնպես վկայում է այն մասին, որ կրեդիտների բաշխումը չի բխում առանձին վերջնարդյունքներից:

Բազմաթիվ առարկաների (անհրաժեշտ պահանջ հանդիսացող առարկաներում) ինչպես 2015 թ., այնպես էլ 2018 թ. մասնագրերում առկա են նշված պրեռեկվիզիտներ, որոնք ըստ կրթական ծրագրի և ուսումնական պլանի չեն նախորդում տվյալ առարկային, այլ սկսվում և դասավանդվում են կամ զուգահերաբար նույն կիսամյակում, կամ դասավանդվում են տվյալ առարկայի ավարտից հետո՝ հաջորդող կիսամյակներում: Որոշ դեպքերում որպես պրեռեկվիզիտներ են ներկայացված այնպիսի առարկաներ, որոնք երբևէ չեն դասավանդվում տվյալ ՄԿԾ-ի ողջ ուսումնառության ընթացքում (5 կամ 6 տարի) (Օրինակ՝ Բիոէթիկա, թերապևտիկ հիվանդությունների կանխարգելում, ռեֆլեքսոթերապիա)[9]:

Մագիստրատուրայի և անընդհատ ու ինտեգրված գործող ՄԿԾ-ների ուսումնառության մասնագիտական վերջնարդյունքների համեմատական վերլուծությունից պարզ դարձավ, որ միևնույն ժամային ծանրաբեռնվածությամբ և միևնույն կրեդիտներով առարկաները երկու ծրագրերում հանգեցնում են տարբեր մասնագիտական վերջնարդյունքների (օրինակ՝ հոգեբուժություն, ուռուցքաբանություն): Մագիստրատուրայի և անընդհատ ու ինտեգրացված գործող ՄԿԾ-ների ուսումնառության մասնագիտական վերջնարդյունքների համեմատական վերլուծությունից պարզ դարձավ, որ մագիստրատուրայի կրթական ծրագրերում ներկայացված են միայն մասնագիտական վերջնարդյունքները, իսկ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերում առկա են ընդհանրական, ընդհանուր մասնագիտական և մասնագիտական վերջնարդյունքներ: Սակայն, ՄԿԾ-ների վերջնարդյունքների համադրում առարկաների (դասընթացների) ուսումնառության վերջնարդյունքների հետ կատարված չէ[10]:

Առկա են նաև անհամապատասխանություններ կրթական ծրագրի պահանջվող կրեդիտների տարեկան բաշխվածության և ուսումնական պլանի միջև: 2015 թ. մագիստրոսական կրթական ծրագրերում նշված է, որ կրթական ծրագրի ծավալը մեկ ուսումնական տարվա ընթացքում կազմում է 60 կրեդիտ, այնինչ ըստ ուսումնական պլանների, յուրաքանչյուր կիսամյակի ծանրաբեռնվածությունը կազմում է 25,5 (տարեկան 51), կրթական ծրագրի կրեդիտների մնացած մասը լրացնելով ամփոփիչ ատեստավորման կրեդիտավորումով 18 կրեդիտով:

Համեմատելով ուսումնական պլանները և այլ փաստաթղթեր՝ ակնհայտ է դառնում, որ կատարվել են առարկաների տեղաշարժեր ոչ միայն տվյալ ուսումնական տարվա 2 կիսամյակների միջև (պայմանավորված դասախոս չլինելու կամ այլ պատճառի հետ), այլ նաև տեղափոխություններ տարբեր կուրսերի միջև (ցածր կուրսից բարձր և հակառակը)՝ խախտելով համապատասխան կիսամյակի տարեկան կրեդիտային բաշխվածությունը և ժամային բեռնվածությունը՝ տեղաշարժվող առարկաների ոչ համարժեք կրեդիտներ ունենալու պատճառով: Փորձագիտական խմբի հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսումնական գործունեության ընթացքում կատարվել են ցիկլային առարկաների

[9] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[10] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

տեղաշարժեր, պայմանավորված դասախոսների բացակայության փաստով: Վերոհիշյալ առարկայական տեղափոխությունները կատարվել են ռեկտորի հրամանով[11]:

Փորձագիտական հանդիպումների արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ առարկայական ՄԿԾ-ները կազմվում են տվյալ առարկան դասավանդող մասնագետ-դասախոսների կողմից, և յուրաքանչյուր դասախոս իր հայեցողությամբ է ծրագրերը կազմելուց առաջ իրականացնում առարկայական ծրագրի բենչմարքինգ, իսկ ծրագրային բենչմարքինգի ընդհանուր ձևաչափ և մեթոդաբանություն ԱԲՀ-ում առկա չէ: Առարկայական նկարագրերի փոփոխությունները կատարվում են դասախոսների փորձի հիման վրա: ԱԲՀ-ի ներկայացված դիտարկումների հիման վրա, կարելի է փաստել, որ յուրաքանչյուր կրթական ծրագրի մշակման համար հիմք է հանդիսացել ԱԲՀ-ի նախկինում գործող կրթական ծրագրերը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության առաջատար բժշկական բուհերի (Մոսկվայի Սեչենովի անվան բժշկական համալսարանի, Օմսկի պետական բժշկական համալսարանի, Սանկտ-Պետերբուրգի Պավլովի անվան բժշկական համալսարանի) առարկայական ծրագրերը: Առարկայական ծրագրերի յուրաքանչյուր դրույթի մշակման գործում մասնակցում է ոչ միայն տվյալ դասախոսը՝ նախապես ներկայացնելով իր կողմից կատարված բենչմարքինգի տվյալները և հիմնավորումները, այլև դրանք քննարկվում են ամբիոնում: Սակայն այդ քննարկումների վերաբերյալ փաստեր չեն ներկայացվել փորձագիտական խմբին[12]:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ԱԲՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերի դասավանդումն իրականացվում է դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդների կիրառմամբ:
Ուսումնառության առանձնահատկություններից ելնելով՝ դասախոսը կարող է ընտրել, փոխել կամ զուգակցել ուսուցման տարբեր մեթոդներ: Համալսարանի ՄԿԾ-ների դասավանդման և ուսումնառության մեթոդները նկարագրված են դասընթացների առարկայական ծրագրերում: Սակայն այս մեթոդները փոխկապակցված չեն նույն վերջնարդյունքների գնահատման մեթոդների հետ[13]:

Փորձագիտական այցերի և հանդիպումների ժամանակ պարզվեց, որ որոշ դեպքերում առարկայական ծրագիրը կազմվում է՝ ելնելով այն գրականության բովանդակությունից, որով որոշվել է դասավանդել տվյալ առարկան:

Ինչպես փորձագիտական վերլուծությունները, այնպես էլ այցի ժամանակ տարբեր շահակիցների հետ հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ գնահատված չէ տեսական և գործնական դասընթացների համամասնության արդյունավետությունը, քանի որ և արտաքին, և ներքին շահակիցները մատնանշեցին գործնական հմտությունների ձեռքբերմանն ուղղված դասընթացների պակասը: Ելնելով առարկաների

---

[11] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:
[12] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:
[13] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

առանձնահատկություններից՝ բուհն է որոշել դասընթացների տեսական և գործնական չափաբաժնի համամասնությունները, ինչը բխում է բուհի ինքնավարությունից:

Պրակտիկ հմտությունների դասավանդման համար ԱԲՀ-ն համագործակցում է հանրապետության հիվանդանոցների հետ: Առկա էր ստոմատոլոգիական ձեռքի հմտությունների հատուկ դասասենյակ ԱԲՀ-ում[14]:

Դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատման համար գործում են ուսանողների շրջանում անցկացվող հարցումները, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ուսանողների առաջադիմության վերլուծությունները, ինչպես նաև ամբիոններում յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին և ավարտին քննարկվում է դասավանդման և ուսումնառության նյութերի, ռեսուրսների նորացման և համալրման խնդիրը, ստացված նյութերը քննարկվում և ներկայացվում են ուսումնական մաս, ապա գիտական խորհուրդ:

3.3 ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ԱԲՀ-ի ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է համալսարանում ներդրված կարգի համապատասխան: Ուսանողների գիտելիքների գնահատման հիմքում դրված են հետևյալ սկզբունքները՝ ուսանողների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների, դրանց համար ստացած գնահատականի համապատասխանությունը, հրապարակայնությունը և արդարությունը: Անհրաժեշտության դեպքում կիրառվում է քննությունների արդյունքների բողոքարկման մեխանիզմը: Ուսումնառության արդյունքների գնահատման ժամանակ կիրառվում են գիտելիքների ստուգման բանավոր և գրավոր մեթոդները՝ կապված տվյալ առարկայի առանձնահատկություններից, ուղղվածությունից:

ԱԲՀ ներքին մշտադիտարկման արդյունքում բարելավել է ՄՈՒՀ-ում գործող գնահատման համակարգը՝ դարձնելով այն բազմաբաղադրիչ: Փոփոխության արդյունքում գնահատման համակարգի մեջ է ներառվել ուսանողների ինքնուրույն աշխատանքը (կազմում է ընդհանուր գնահատականի 10%-ը), ընդ որում, նման որոշման են հանգել՝ հիմնվելով նաև ուսանողների և դասախոսների շրջանում անցկացված հարցումների տվյալների վրա: ՄՈՒՀ-ն ունի ինքնուրույն աշխատանքներին ներկայացվող պահանջների ցանկ, սակայն այդ աշխատանքների գնահատման մեթոդաբանությունը, հստակ չափորոշիչները բացակայում են:: Գրագողության վերահսկողության նպատակով ԱԲՀ-ում գործում է «Ակադեմիական ազնվության» կանոնակարգը, սակայն ներկայացված չեն ուսանողի ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատներ, հետազոտական աշխատանք և այլն) գրագողության վերահսկողության մեխանիզմները և դրանց կիրառման փաստեր[15]:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողներին տրվում են հանձնարարականներ ինքնուրույն աշխատանքի համար, և հետագայում դա թույլ է տալիս գնահատել այդ ուսանողների ոչ միայն ֆիզիկական ներկայությունը (որը գնահատվում է առավելագույնը 20 միավոր և պայմանավորված է զուտ հաճախելիությամբ), այլ նաև ուսանողի ակտիվությունը դասի ժամանակ: Սակայն նման հանձնարարականները ինստիտուցիոնալ

[14] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[15] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

մակարդակում դեռ մշակման փուլում են և գործում են դեռևս մի քանի առարկաների դեպքում:Գնահատման համակարգն այնպիսին է, որ ուսանողը հեշտությամբ կարողանում է հավաքել նվազագույն միավորներ՝ ի հաշիվ հաճախումների, ինքնուրույն աշխատանքի և ընթացիկ ստուգարքների (50 միավոր), իսկ տվյալ առարկայի վերջնական քննության դերը նվազում է:

Այնուհանդերձ, հանդիպումների ժամանակ նշվեց նաև, որ ուսանողների և դասախոսների շրջանում անցկացված հարցումների արդյունքում պլանավորվում է ապագայում կրկին վերանայել գնահատման համակարգը, և ավելի մեծ չափաբաժին հատկացնել ինքնուրույն աշխատանքին՝ նվազեցնելով հաճախելիության գնահատումը:

Ամփոփիչ ատեստավորման քննությունները բազմաբաղադրիչ են, ներառում են գիտելիքների և գործնական հմտությունների ստուգում, թեստային քննություն, բանավոր քննություն:

Պետական ատեստավորման միջառարկայական ամփոփիչ քննությունը ներառում է գործնական հմտությունների յուրացման մակարդակի ստուգում: Սակայն, փորձագիտական այցի արդյունքներից պարզ դարձավ, որ գործնական հմտությունները իրականում չեն ստուգվել՝ սահմանափակվելով հիմնականում գիտելիքների ստուգմամբ, գործնական հմտությունների բանավոր պատասխանի՝ նկարագրելու միջոցով: ԱԲՀ-ն անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով դեռ շրջանավարտ չի տվել:

ԱԲՀ-ն ինքնուրույն է որոշում ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացումը, համաձայն ԱԲՀ-ում գործող «Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի:

Ըստ գործող կարգի, ԱԲՀ-ում ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է յուրաքանչյուր մասնագիտության համար երկու փուլով:

- Բուժական գործ.
  - Գործնական հմտությունների ստուգումը կատարվում է բանավոր ձևով (հարցատոմսերի միջոցով), անհրաժեշտությունից ելնելով հանձնաժողովի անդամների պահանջով քննվող ուսանողը կարող է իրականացնել գործողությունների ցուցադրում մուլյաժների, անատոմիական մոդելների և ուսանողների վրա:
  - Տեսական գիտելիքների ստուգում՝ հարցատոմսերի միջոցով:
- Ստոմատոլոգիա.
  - Ձեռքի հմտություն՝ ուսանողները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները՝ վիրաբուժական, թերապևտիկ, օրթոպեդիկ ստոմատոլոգիա առարկաներից[16]:

Պետական ամփոփիչ քննության հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները վկայում են այն մասին, որ գործնական հմտությունների զարգացման անհրաժեշտություն կա:

Համալսարանում գործում է «ԱԲՀ-ի ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման» կանոնակարգ: Տվյալ կարգը սահմանում է պրակտիկայի կազմակերպման և ղեկավարման դրույթները և մեթոդները, ինչպես նաև պրակտիկայի արդյունքների ամփոփումն ու գնահատումը[17]:

---

[16] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[17] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

Համալսարանում առկա են յուրաքանչյուր տարվա ուսումնաարտադրական պրակտիկաների ծրագրերը, որտեղ ընդհանուր նշված են պրակտիկայի բովանդակությունը[18]: Այդուհանդերձ, կլինիկական առարկաների դեպքում գնահատման հստակ չափանիշներ չկան ըստ նախատեսված կրթական վերջնարդյունքների (օրինակ՝ քանի անգամ և ինչպես ուսանողը պետք է կատարի այս կամ այն գործողությունը բավարար գնահատվելու համար) : Հստակ չէ նաև տարբեր կլինիկաներում ցիկլերի վերահսկողության մեխանիզմները: Ցիկլերի ընթացքում ուսանողների կատարած աշխատանքների պորտֆոլիոներ չկան, ուստի և հնարավոր չէ գնահատել, թե որ ուսանողը կլինիկական ցիկլերի դեպքում ինչ հմտություններ է ձեռք բերում և ինչպիսի չլուծված խնդիրներ են մնում, որոնք անհրաժեշտ է հետագայում լուծել:

Թույլ է իրականացվում պրակտիկայի վերահսկողությունը: Արտասահմանում պրակտիկան անցնելու դեպքում այն գնահատվում է՝ հիմնվելով ներկայացված օրագրերի և բնութագրերի վրա, քանզի կապը արտասահմանում անցկացվող պրակտիկայի կենտրոնների հետ բացակայում է: ՄՈՒՀ-ը պրակտիկայի բաժին կամ պատասխանատու չունի:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Ըստ ինքնավերլուծության՝ ԱԲՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերի մշակման հիմքում դրվել են ՌԴ-ի Օմսկի պետական բժշկական համալսարանի, Մոսկվայի Սեչենովի անվան բժշկական համալսարանի, Սանկտ-Պետերբուրգի Պավլովի անվան բժշկական համալսարանի և մի շարք այլ բժշկական բուհերի առաջավոր փորձը:

Ավանդական բժշկության առարկայական ծրագրերը համեմատվել և ընդհանրական վերլուծության են ենթարկվել «Չինական ավանդական բժշկության համալսարան»-ի (Կալիֆորնիա, Լոս Անջելես) կրթական ծրագրերի հետ: Լոս Անջելեսի Չինական ավանդական բժշկության համալսարանի մասնագիտական կրթական ծրագիրը ամբողջովին տարբերվում է ԱԲՀ ՄԿԾ-ներից, պարունակում է միայն որոշ առարկաներ, որոնք դասավանդվում են ԱԲՀ-ում, ուստի և գլոբալ իմաստով նշված 2 համալսարանների ՄԿԾ-ները միմյանց համադրելի չեն: Առկա չէ բենչմարքինգի մեթոդաբանություն և միասնական ձևաչափ:

Եվրոպական երկրների ԲՈՒՀ-երի ՄԿԾ-ների հետ համեմատություն չի կատարվել, համադրելիությունը նրանց հետ չի ուսումնասիրվել, չնայած այն հանգամանքին, որ ԱԲՀ-ն այժմ սպասարկում է միջազգային շուկան և ռազմավարական ծրագրով սահմանված է ՄԿԾ-ների համահունչության ապահովումը նաև եվրոպական բժշկական ստանդարտներին:

Բացակայում է նաև ԱԲՀ ՄԿԾ-ների արտաքին գնահատումը: Չի կատարվել համեմատական վերլուծություն ՀՀ-ում գործող այլ բժշկական ՄՈՒՀ-երի ՄԿԾ-ների հետ:

ԱԲՀ-ում դասախոսների և ուսանողների շարժունությունը որպես այդպիսին զարգացած չէ: ՄՈՒՀ-ը չունի միջազգային, միջբուհական համաձայնագրեր՝ դասավանդողների և ուսումնառողների փոխանակային ծրագրերի մասնակցության համար: Փորձագիտական այցի ընթացքում քննարկումներից պարզ դարձավ, որ ուսանողների և դասախոսների շարժունությունն ապահովվելու ուղղությամբ ՄՈՒՀ-ի կողմից նոր են սկսվել

[18] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

քայլեր ձեռնարկվել: Ուսանողների շարժունությունը սահմանափակվում է միայն որոշ դեպքերում ուսումնաարտադրական պրակտիկան արտերկրում անցկացնելու ձևով:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԱԲՀ-ում գործում են կրթական ծրագրերի մշակման, գնահատման և բարելավման համապատասխան ենթակառուցվածքներ: ԱԲՀ-ում գործում է մշտադիտարկման խումբ, որը ՄԿԾ-ների մեկնարկից երեք տարի անց բարձրացրել է անհրաժեշտ փոփոխությունների հարցը: ԱԲՀ-ի ինքնավերլուծության զեկույցում երևում է, որ նման գործառույթն իրականացվել է 2018 թ., որի արդյունքում կատարվել են որոշ փոփոխություններ ՄԿԾ առարկայական ծրագրերում, կրեդիտների բաշխման մեջ և գնահատման համակարգում: Համալսարանի գիտական խորհուրդը հաստատում է կրթական ծրագրերում առաջարկված փոփոխությունները:

ՄԿԾ-ները մշտադիտարկող խմբում արտաքին շահակիցներ չկան: Մշտադիտարկող խմբի աշխատանքների արդյունավետությունը դեռևս գնահատված չէ: ՄԿԾ-ները գնահատվում են նաև տարբեր հարցախույզների, ֆոկուս խմբային և անհատական հանդիպումների միջոցով:

Ուսանողների կողմից իրականացվում է գնահատում դասընթացի վերջում, ուսանողները գնահատում են ինչպես առարկայի, այնպես էլ դասախոսի հետ կապված մի շարք չափանիշներ, հարցումների արդյունքները հետագայում հիմք են հանդիսանում փոփոխություններ իրականացնելու համար:

Դասավանդման մեթոդները վերահսկվում են նաև պարբերաբար իրականացվող դասալսումների միջոցով դեկանի, ամբիոնի վարիչի կողմից: Ամբիոնի վարիչի կողմից դասալսումների արդյունքում դասախոսը որոշ դեպքերում փոխել է դասավանդման մեթոդը: Առկա է դասալսումների մատյան իր արձանագրություններով:

Որոշ դեպքերում ուսանողների խնդրանքով և հարցման արդյունքների վրա հիմնվելով՝ որոշ առարկաներ հանվել են ուսումնական պլանից և ծրագրից, ինչպես, օրինակ, առաջին բուժօգնություն առարկան, սակայն բացակայում են լուրջ հիմնավորումները նմանատիպ փոփոխություններ կատարելու համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱԲՀ-ն կարևորում է ՄԿԾ-ների բարելավումները և իրականացվող ջանքերը ՄԿԾ-ների շարունակական զարգացման համար: Միևնույն ժամանակ փորձագիտական խմբի կողմից կատարված վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների առկա են բազմաթիվ բովանդակային, կազմակերպչական և տեխնիկական խնդիրներ, որոնք խոչընդոտում են ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացումը: Ուսանողների առաջընթացի հստակ պլանավորման բացակայությունը ՄԿԾ-ներում, սահմանված վերջնարդյունքների, դասավանդման և գնահատման մեթոդների անհամապատասխանությունը վտանգում են ուսանողների մոտ անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, ՄԿԾ-ների որակի բարելավումը:

ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ կատարվում են միայն հետսովետական երկրների բժկական ուսումնական հաստատությունների հետ, իսկ միջազգային

մակարդակում խորքային համեմատությունների բացակայությունը խոչընդոտում է ՄԿԾ-ների մրցունակությանը, դասախոսների և ուսանողների շարժունությանը:

Դրական է, որ ԱԲՀ-ն համագործակցում է տարբեր կլինիկաների հետ՝ ապահովելու ՄԿԾ-ներում սահմանված գործնական հմտությունների ձեռքբերումը ուսանողների մոտ, սակայն առարկաների ուսումնառության վերջնարդյունքների, առկա ռեսուրսների, դասավանդման և գնահատման մեթոդների անհապատասխանությունը, ինչպես նաև ավարտական ատեստավորման ժամանակ գործնական հմտությունների սահմանափակ ստուգումները հնարավորություն չեն տալիս լիարժեք գնահատել ուսանողների գործնական ձեռքբերումները: Հարկ է նաև նշել, որ ուսանողների պորտֆոլիոների և ուսումնառության ընթացքում տարբեր ցիկլերի ժամանակ ուսանողների հավաքագրված հմտությունների ուսումնասիրության բացակայությունը, նույնպես խոչընդոտում է ՄԿԾ-ով նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Դրական է, որ ԱԲՀ-ում առկա է համապատասխան հանձանաժողով ՄԿԾ-ների վերանայման համար, սակայն այդ հանձնաժողովում արտաքին շահակիցների ներգրավումը կնպաստեն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ՄԿԾ-ների մշակմանը և բարելավմանը: Ինչպես նաև բարելավման կարիք ունի ինչպես ընդհանուր ՄԿԾ-ներն, այնպես էլ առանձին առարկայական նկարագրերերը, քանի որ շատ հաճախ դա մնում է առանձին դասախոսների պատասխանատվության և փորձի վրա, ինչը կայունության տեսանկյունից խնդիր է, քանի որ ԱԲՀ-ում հաճախ փոփոխվում են դասախոսական կազմի ներկայացուցիչները:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերում առկա են բազմաթիվ բովանդակային խնդիրներ, ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի և ՈԱՇ-ի համադրության վերլուծություն չի իրականացվել, ՄԿԾ-ների և առանձին առարկաների համեմատական համակարգային վերլուծություն /բենչմարքինգ/ ՄՈՒՀ-ը չի կատարել, կրդիտների բաշխվածության և ժամային բեռնվածության համակարգը լիարժեք չի կիրառվում, դասավանդման և գնահատման մեթոդների ու ՄԿԾ վերջնարդյունքների քարտեզագրում առկա չէ, առարկայական նկարագրերի փոփոխություններն իրականացվում են առանձին դասախոսի փորձառության հիման վրա, ինչը շարունակականության տեսանկյունից ռիսկային է, ուսանողների մոտ պատասխանատվություն, վերլուծական և հետազոտական կարողություններ ձևավորող հանձնարարականների կիրառումը համատարած բնույթ չի կրում, ուսանողների ընթացիկ ու ամփոփիչ գնահատման մեթոդների կիրառման քաղաքականություն հստակ չէ. տեղում անցկացվող աշխատանքի հիման վրա գնահատում, ուսանողի պորտֆոլիո, ինչպես նաև տարբեր ցիկլերի ժամանակ ուսանողների կողմից ձեռքբերված հմտությունների վերահսկում և մշտադիտարկումներ համալսարանում դեռևս չեն իրականացվում, ինչն էլ խոչընդոտում է ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների լիարժեք ձեռքբերմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ն չի բավարում չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԱԲՀ-ն իր ռազմավարական ուղղություններից է համարում ուսանողների ընդունելության հնարավորությունների ընդլայնումը: Համալսարանում ուսանողների ընդունելությունը կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով:

2016-2017 թթ. ուսումնական տարվանից սկսած ՀՀ Կրթության և գիտության նախարարի հրամանի համաձայն ԱԲՀ-ն սկսել է իրականացնել օտարերկրյա ուսանոնղների ընդունելություն և դասավանդում անգլերենով: 2018 թ.-ին օտարերկրյա ուսանողների թիվը հասել է 285-ի: Օտարերկրյա ուսանողները համալսարանի մասին տեղեկատվություն են ստանում համալսարանի պաշտոնական կայքի, համալսարանում սովորող օտարերկրյա ուսանողների, նաև գործակալությունների և զբոսաշրջային կազմակերպությունների միջոցով: Համալսարանը համագործակցում է 2010 թ.-ից գործող «Քեմփուս Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի (Campus International LLC) հետ, որը խորհրդատվություն է տրամադրում, զբաղվում միջազգային ուսանողների հավաքագրմամբ, ինչպես նաև հանդիսանում է շատ համալսարանների և ինստիտուտների, այդ թվում նաև ԱԲՀ-ի ներկայացուցիչը: Փորձագիտական այցից նույնպես պարզ դարձավ, որ որոշ ուսանողներ համալսարանն ընտրելիս օգտվել են այս կազմակերպությունների ծառայություններից:

Համալսարանն իրականացնում է նախապատրաստական դասընթացներ օտարերկրյա ուսանողների համար, որոնց առարկայական ծրագրերը հաստատվում են ԱԲՀ-ի կողմից: Նախապատրաստական դասընթացներում սովորող օտարերկրացիները համարվում են ԱԲՀ-ի ուսանողներ: Դասընթացներն իրականացվում են միայն առկա ուսուցմամբ, 6-8 ամիս ժամկետով: Ուսուցումն ավարտվում է ավարտական քննություններով, որոնք ներառում են տվյալ մասնագիտության ընդունելության քննություններով նախատեսված առարկաները:

Հարկ է նաև նշել, որ ուսանողներին հնարավորություն է տրվում ուսումնասիրել հայոց լեզուն (նախապատրաստական բաժնում ընդունվելուց 3 տարի և 1 կուրս ընդունվելուց `2 տարի), այս փաստը շատ կարևոր է, քանի որ հետագայում կլինիկական առարկաների և պրակտիկայի անցնելիս ուսանողները հնարավորություն ունեն շփվել հիվանդների հետ առանց թարգմանչի:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԱԲՀ-ում գործում են ուսանողների կրթական կարիքները վեր հանող մի քանի մեխանիզմներ՝ դասախոսների, դեկանի և ուսումնական մասի հետ կազմակերպվող քննարկումները, որակի ապահովման բաժնի կողմից իրականացվող հարցումները: ՄՈՒՀ-ում գործում է նաև համալսարանի խորհրդատուների ինստիտուտը: Խորհրդատուների աշխատանքի միջոցով բացահայտվում են ՄԿԾ-ների, պրոֆեսորադասախոսական կազմի, վարչական անձնակազմի կողմից պարտականությունների կատարման որակի, ուսումնական գործընթացի կազմակերպման, մատուցվող խորհրդատվական ծառայությունների,

գիտելիքների գնահատման համակարգի, սեփական իրավունքների իմացության և այլ խնդիրներ:

Ուսանողները իրենց ունեցած խնդիրները հնարավորություն ունեն քննարկելու նաև ռեկտորի, դեկանի, ուսումնական մասի և ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Վերջին երեք տարիներին իրականացված հարցումների արդյունքում համալրվել է ռեսուրսային բազան, ինչպես նաև փոփոխվել է ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ԱԲՀ-ում լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը և խորհրդատվությունը մինչև 2018-2019 ուստարին իրականացվել է ոչ հստակ սահմանված ընթացակարգով և ժամանակացույցով, սակայն 2018-2019 ուստարվանից գործընթացները կանոնակարգվել են: Ֆակուլտետների խորհրդատուների ղեկավարների և ըստ մասնագիտությունների խորհրդատուների աշխատանքը հանդիսանում է նրանց աշխատանքային գործունեության բաղկացուցիչ մասը: Խորհրդատուներն ամիսը մեկ հաշվետու են ֆակուլտետի դեկանին:

Լրացուցիչ խորհրդատվություններ տրվում են առարկայական տարբերություն ունեցող, ինքնուրույն աշխատանք կատարող (ռեֆերատ, շնորհանդես և այլն), դասընթացից ամենատարբեր հարցերն ունեցող ուսանողներին, ինչպես անհատական, այնպես էլ խմբային:

Խորհրդատվության ժամանակ մանրամասն բացատրվում է դժվար յուրացվող նյութը, սպառիչ պատասխաններ են տրվում մասնագիտական հարցերին՝ հնարավորինս հասկանալի, ըմբռնելի և հեշտ յուրացվող դարձնելով մատուցվող նյութը, անհրաժեշտության դեպքում օգտագործելով նաև ցուցադրական նյութեր:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ լրացուցիչ խորհրդատվություններին դիմում են մեծամասամբ օտարերկրյա ուսանողները, տեղացի ուսանողները հիմնականում առաջացած հարցերի պատասխանները ստանում են դասապրոցեսի ընթացքում: Ըստ ինքնավերլուծության և այցի ընթացքում իրականացված հանդիպումների՝ ուսանողները բավարարված են խորհրդատուների ծառայություններից, սակայն ուսանողների և դասախոսների փաստմամբ այդ ծառայություններից շատ քիչ ուսանողներ են օգտվում:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Ուսանողների համար վարչական աշխատակազմին դիմելու առանձին հստակ կանոնակարգ և ժամանակացույց մշակված չէ, սակայն ուսանողների փոքր թվաքանակը թույլ է տալիս անմիջական կապ հաստատել վարչական օղակների հետ: Ուսանողական խորհրդի կանոնադրությունում, Խորհրդատուների գործունեության կանոնակարգում և համալսարանի ներքին կարգապահական կանոնները սահմանող փաստաթղթում նկարագրված են համալսարանի վարչական և ուսումնական անձնակազմին դիմելու քայլերը: Ուսանողների ուղղորդումն իրականացվում է խորհրդատուների կողմից խորհրդատվությունների միջոցով,

ռեկտորի, դեկանի, ուսումնական մասի, պրոֆեսորադասախոսական կազմի կողմից՝ առանց որևէ ժամանակացույցի:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց հուզող հարցերով և խնդիրներով անհրաժեշտության դեպքում դիմում են խմբի ավագին կամ համապատասխան մարմնին օժանդակություն ստանալու համար: Կիսամյակի ընթացքում ուսանողները հնարավորություն ունեն հանդիպելու նաև ռեկտորի հետ իրենց խնդիրները և լուծումները քննարկելու համար: Այցի ընթացքում իրականացված հանդիպումների արդյունքում պարզվեց, որ ուսանողներն իրենց հուզող հարցերին մեծամասամբ լուծումներ ստանում են:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԱԲՀ-ում ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ իրականացնող առանձին ստորաբաժանում առկա չէ: Այս գործառույթները իրականացնում է ուումնական մասը: Հետագա մասնագիտական կողմնորոշման նպատակով ուսանողներին տրվում է անհրաժեշտ խորհրդատվություն նաև այնուհետև օրդինատուրայում մասնագիտացում ստանալու տեսանկյունից:

Ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ նաև, որ կարիերայի մասին տեղեկատվություն ստանում են հիմնականում դասախոսների հետ քննարկումների և կլինիկաներ ու հիվանդանոցներ այցերի ժամանակ ճանաչված տարբեր մասնագետների հետ զրույցների ընթացքում:

ԱԲՀ-ն փորձում է համագործակցության տարբերակներ գտնել նաև իր շրջանավարտների հետ՝ ներգրավելով նրանց որպես դասավանդողներ: Ներկայում, համալսարանի աշխատակազմի 22% կազմում են ԱԲՀ շրջանավարտները:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Համալսարանն իր 2017-2022 թթ. ՌԾ-ում նախատեսել է ընդլայնել դասախոսական և ուսանողական համակազմերի ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը: Գիտական հիմնական ուղղությունները քննարկվում են ամբիոններում՝ հաշվի առնելով համալսարանի առանձնահատկություններն ու խնդիրները և ավանդական բժշկության վերականգնման և ժամանակակից բժշկության հետ ինտեգրման սկզբունքները:

Համալսարանն իր ինքնավերլուծությունում նշում է, որ ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում դրսևորվում է գիտաժողովների, սեմինարների, դասախոսների գիտահետազոտական աշխատանքների ժամանակ փորձերին մասնակցությամբ, համահեղինակությամբ հոդվածների հրապարակմամբ: Չնայած համալսարանը ՈՒԳԸ-ի և գիտական մասի համագործակցության միջոցով հնարավորություն է ընձեռում տարբեր կուրսերի ուսանողներին մասնակցելու համալսարանի գիտահետազոտական աշխատանքներին, ուսանողների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ գիտահետազոտական գործունեությամբ զբաղվելու մոտիվացիան բավական ցածր է, և համալսարանում առկա չեն ուսանողների ներգրավման հստակ մեխանիզմներ:

ՈՒԳԸ-ն չի իրականացնում նաև ֆինանսական պլանավորում, սակայն անհրաժեշտության դեպքում ուսանողները ստանում են ֆինանսական ռեսուրսներ գիտաժողովների կամ սեմինարների կազմակերպման համար:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ԱԲՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների քննարկման և շահերի ներկայացման համար պատասխանատու մարմինը ուսանողական խորհուրդն է, որի գործունեությունը ամրագրված է խորհրդի՝ 2012 թ.-ին հաստատված կանոնադրությամբ: ՈՒԽ նախագահությունը բաղկացած է նախագահից, փոխնախագահից, քարտուղարից և հանձնաժողովների ղեկավարներից: ՈՒԽ-ում ներգրավված են ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային ուսանողները:

ՈՒԽ-ն որպես տեղեկատվության տարածման հարթակ օգտագործում է ֆեյսբուք սոցիալական ցանցը, համագործակցում է այլ համալսարանների ուսանողական խորհուրդների հետ՝ կազմակերպելով սպորտային, մշակութային և կրթական միջոցառումներ:

Ուսանողներն իրենց հուզող հարցերով կարող են դիմել ինչպես ՈՒԽ-ին, այնպես էլ բուհի այլ ստորաբաժանումներին:

Ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, իրավունքների պաշտպանության հիմնական երաշխիքները կարգավորվում են նաև ներքին կարգապահական կանոններով, ուսանողների դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկման կարգով, ինչպես նաև ուսանողի ուղեցույցով, որը, սակայն, դեռևս հասանելի է միայն հայալեզու ուսանողներին:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Համալսարանի ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատումն ու որակի ապահովումն իրականացվում է ներքին շահակիցների հարցումների և հանդիպում-քննարկումների միջոցով: Ուսանողների շրջանում անցկացված հարցումները թույլ են տվել պարզել ուսանողների տեսակետները առկա ռեսուրսների, օժանդակ խորհրդատվական ծառայությունների արդյունավետության մասին և բացահայտել խնդիրները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ այժմ ուսանողները հիմնականում բավարարված են համալսարանում առկա ռեսուրսներից, սակայն կարծում են, որ քիմիայի և կենսաքիմիայի լաբորատորիաները դեռևս հագեցման կարիք ունեն:

Կարևոր է նշել, որ ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման այլ մեխանիզմներ համալսարանում առկա չեն, ինչպես նաև գնահատված չէ կիրառվող գործիքների արդյունավետությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱԲՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմներ՝ հնարավորություն ընձեռելով ապահովել տեղեկատվության տարածումը, ընդունելության գործընթացի իրականացումը և միջազգային ուսանողների ներգրավումը:

ԱԲՀ ուսանողները ներգրավված են կառավարման մարմիններում, հնարավորություն ունեն իրենց խնդիրների մասին բարձրաձայնել ռեկտորի, դեկանի հետ հանդիպումների ընթացքում, ինչպես նաև իրենց խնդիրները քննարկել և լուծումներ փնտրել ամբիոնի վարիչների և ՊԴ կազմի հետ հանդիպումների ընթացքում, սակայն համապատասխան ժամանակացույցի և ընթացակարգերի առկայությունը կնպաստեն նշված գործընթացների համագարգված դառնալուն՝ նպաստելով շարունակական բարելավմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում համալսարանում ներդրված խորհրդատուների ինստիտուտի առկայությունը, միևնույն ժամանակ խորհրդատուների ծառայություններից օգտվողներ ուսանողների քանակը քիչ է, իսկ այդ ծառայությունների ակտիվացումը ակտիվացումը կնպաստի ուսանողների առաջընթացին:

Հաշվի առնելով, որ ուսանողների հեղինակությամբ կամ համահեղինակմամբ տպագրված աշխատանքները բավականին սակավ են, փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտությունը խրախուսող մեխանիզմների առկայությունը կնպաստի ուսանողների մոտ վերլուծական կարողությունների զարգացմանը:

Համալսարանում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունները նույնպես բարելավման և համակարգման կարիք ունեն՝ նպաստելու համալսարան-աշխատաշուկա կապի ստեղծմանն ու ԱԲՀ շրջանավարտների հետագա մասնագիտական գործունեության ծավալմանը:

Չնայած այն հանգամանքին, որ իրականացվող հարցումները հնարավորություն են տալիս ուսանողների կրթական կարիքների բացահայտման համար, սակայն ուսանողների կրթական, խորհրդատվական ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմների բազմազանեցումը և պարբերաբար իրականացումը կնպաստեն առկա խնդիրների բացահայտմանը և տարբեր գործընթացների շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների հավաքագրման և ընտրության թափանցիկ մեխանիզմներ, ուսանողներն ունեն հնարավորություն իրենց խնդիրների վերաբերյալ բարձրաձայնելու ԱԲՀ-ի տարբեր մակարդակներում, ՄՈՒՀ-ը միջազգային և տեղացի ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն առաջացած ինչպես կրթական, այնպես էլ այլ խնդիրների լուծման համար, ուսանողներին տրամադրվում է նաև լրացուցիչ պարապունքների հնարավորություն, ՄՈՒՀ-ում գործում է ուսանողակենտրոն միջավայր, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Համաձայն ԱԲՀ 2017-2022 թթ. ռազմավարական ծրագրի՝ բուհում նախատեսված է իրականացնել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համալրման և կատարելագործման միջոցառումներ համալսարանում որակյալ կադրային ներուժն ապահովելու նպատակով: Համալսարանի դասախոսական կազմում աշխատում են պայմանագրային հիմնական և արտաքին համատեղության հիմունքներով աշխատողներ: Ավագ լաբորանտների և դասախոսների հետ կնքվում են պայմանագրեր, որոնցում, համաձայն ներկայացված նմուշ-պայմանագրերի, ամրագրված են աշխատողի և գործատուի իրավունքներն ու պարտականությունները: Ըստ ինքնավերլուծության և ներկայացված ԱԲՀ պաշտոնական հրահանգի՝ համալսարանում ՊԴ կազմի համալրումն իրականացվում է ղեկավարության կողմից հրավիրված և աշխատելու առաջարկով դիմող մասնագետների ընտրությամբ, որոնց շարքերում, ինչպես բացահայտվեց դասախոսների հետ հանդիպման ընթացքում, կան նաև հենց ԱԲՀ-ի շրջանավարտներ: Շրջանավարտների հետ հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանի ՊԴ-ն համալրելու առաջարկ ստացել են գրեթե բոլոր շրջանավարտները:

Փորձագիտական խմբի այցի ժամանակ պարզ դարձավ, որ դասախոսների առջև դրվում են անգլերենին տիրապետելու հստակ պահանջներ՝ առնվազն B2 մակարդակին համապատասխանություն և մասնագիտական պահանջներ՝ նախընտրություն տալով գիտական աստիճան ունեցող մասնագետներին, ինչը ստուգվում է համապատասխան հավաստագրով կամ բացակայության դեպքում հումանիտար առարկաների ամբիոնի աշխատակցի կողմից: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսների մեջ ներգրավված են նաև պրակտիկ բժիշկներ, ովքեր կլինիկաներում ուսանողների հետ միասին կատարում են կլինիկական դեպքերի ուսումնասիրություն:

Աշխատողների հետ աշխատանքային հարաբերություններն իրականացվում են համալսարանի ռեկտորի կողմից տարբեր տևողությամբ աշխատանքային պայմանագրեր կնքելու միջոցով: Թափուր տեղի մասին հայտարարությունը տեղադրվում է համալսարանի կայքէջում: Սակայն դասախոսները չեն ընտրվում մրցույթային կարգով, ինչպես նաև համալսարանի անձնակազմը չի մասնակցում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրությանը, և առհասարակ, դասախոսների ընտրության ընթացակարգ մշակված չէ:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են համալսարանի ՊԴ կազմի ձևավորման և ազատման և իրավունքների և պարտականությունների կանոնակարգերով, իսկ մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ամրագրված են ՄԿԾ-երի նկարագրում: Համաձայն ինքնավերլուծության, ԱԲՀ-ի կրթական ծրագրերն իրականացվում են դասընթացների դասավանդման ուղղությանը համապատասխանող հենքային կրթություն ունեցող կադրերի կողմից, որոնք զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ, ապա հարկ է նշել, որ հստակեցված

չեն վերջինիս չափելիության գործիքները: Ըստ ինքնավերլուծության, ՊԴ կազմի՝ մասնագիտական կրթական ծրագրին համապատասխանության չափանիշ է համարվում պետական որակավորման վկայագրերի և դիպլոմների առկայությունը, սակայն գիտամեթոդական տեսանկյունից հստակ պահանջներ չեն առաջադրվում:

Հստակ մշակված և սահմանված չեն միջդիսցիպլինար առարկաներ դասավանդողներին ներկայացվող պարտադիր պահանջները: ՊԴ կազմի համար բացակայում են պաշտոնի անձնագրեր:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Դասախոսական կազմի գործունեության արդյունավետության գնահատման հիմք է հանդիսանում համալսարանի դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգը, որի նպատակն է կատարելագործել ամբիոնի դասախոսների մանկավարժական և մեթոդական պատրաստվածությունը, դասը կազմակերպելու և վարելու հմտությունները:

Դասալսումներն իրականացվում են նախապես հաստատված ժամանակացույցին համապատասխան: Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերի ժամանակ, այնուհետև հաշվի են առնվում դասախոսների հետ պայմանագրեր կնքելիս: Դասալսումներ իրականացվում են ինչպես ամբիոնի վարիչի, այնպես էլ այլ դասախոսների կողմից: Դասալսումների ընթացքում լրացվում է ձևաթուղթ, ուշադրություն է դարձվում բացակայություններին, բժշկական բուհին համապատասխանող կարգապահությանը, ամբողջ լսարանի ընդգրկվածությանը դասավանդման գործընթացին, բովանդակային և օրացուցային պլանին համապատասխանությունը: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում ըստ դիտարկված արձանագրությունների, դասալսման ամսաթվերը չէին համապատասխանում դասավանդման օրացույցային պլաններին:

ՊԴ կազմի գնահատման համար իրականացվում են նաև հարցումներ ուսանողների շրջանում: Դասախոսների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ուսանողների հարցումների վրա կատարվել են դասախոսների խրախուսման առանձին դեպքեր (ուսանողների կողմից առավել վարկանիշային դասախոսի դեպքում կատարվել է դասախոսի դասաժամի վճարի ավելացում), սակայն նման դեպքերը չեն կրում համակարգային բնույթ: Ուսանողների հետ հանդիպումից հստակեցվեց, որ ուսանողների հարցումների արդյունքում եղել են դասախոսներին փոխելու դեպքեր:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ

Ըստ ռազմավարական ծրագրի և ինքնավերլուծության՝ համալսարանն իր առաջնահերթություններից է համարում դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացումը, սակայն առկա չեն հստակ ցուցանիշներ և ֆինանսական պլանավորում: Թե ինքնավերլուծականից և թե ռեկտորի ու ՊԴ կազմի հետ հանդիպումից պարզ դարձավ, որ կատարելագործմանը խոչընդոտող հանգամանքներից է նաև ֆինանսական միջոցների անբավարարությունը:

Ներքին պարբերական գնահատումներ, ինչպես պարզվեց ինքնավերլուծականից և դասախոսների հետ հանդիպումից, պարբերաբար իրականացվում են (ուսանողների հարցումներ):

Համալսարանի ինքնավերլուծությունից պարզ է դառնում նաև, որ վերապատրաստման նպատակով համալսարանի դասախոսներն օգտագործում են համացանցը, ինչպես նաև համալսարանի կողմից կազմակերպվող գիտակրթական սեմինարները: Մնացած դեպքերում վերապատրաստումներն իրականացվում են դասախոսների սեփական նախաձեռնությամբ, բայց առանց բուհի խոչընդոտման: Այս գործընթացների գնահատում իրականացվում է համապատասխան հավաստագրերի առկայությամբ:

Որպես վերապատրաստման օրինակներ ներկայացված են մասնակցությունները տարբեր գիտաժողովներին և սեմինարներին, սակայն առկա չեն կարիքների վերհանման արդյունքում տեղի ունեցած դասընթացները: ԱԲՀ-ում չի իրականացվում արտաքին և ներքին գնահատումների արդյունքում կարիքների բացահայտում և դրանց համապատասխան կատարելագործման միջոցառումների իրականացում, բացառությամբ դասախոսների համար անցկացված անգլերենի դասընթացների:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ԱԲՀ-ում աշխատող պրոֆեսորադասախոսական անձնակազմը 2018թ.-ի աշնանային կիսամյակի դրությամբ կազմում է 57 մարդ, որոնցից 31-ը հիմնական աշխատակիցներ են, իսկ 26-ը՝ աշխատում են համատեղությամբ: ԱԲՀ-ի ռազմավարական ծրագրում նույնպես ամրագրված է կրթական ծրագրերին համապատասխան կայուն պրոֆեսորադասախոսական կազմ ունենալու խնդիրը:

Համալսարանի ինքնավերլուծությունից պարզ է դառնում, որ համալսարանն ավագ սերնդի դասախոսների օգնությամբ աշխատում է ապահովել սերնդափոխությունը՝ առաջնահերթությունը տալով գիտական աստիճան և կոչում ունեցող, անգլերենին տիրապետող մասնագետներին, որոնք նախընտրելի է, որ ընդգրկված լինեն նաև հետազոտական գործունեության մեջ: Ուսումնական մասի հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ կրթական ծրագրերին համապատասխան ՊԴ կազմի ապահովվածության կայունության համար համալսարանն ունի դասախոսների պահուստային ցուցակ և պարբերաբար իրականացնում է դասախոսների փոխարինում համարժեք մասնագիտական հմտություններ ունեցող կադրերով: Այնուամենայնիվ, ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, կա դասախոսների արտահոսք, ինչը խոչընդոտներ է ստեղծում ՊԴ կազմի կայունության ապահովման համար,սկ որոշ դեպքերում բերում է ուսումնական պլանների հարկադրված փոփոխությունների:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Համալսարանն իր ռազմավարական խնդիրներից է համարում ՊԴ կազմի առաջընթացի ապահովումը, սակայն միջոցառումներն այս ուղղությամբ մասնակի բնույթ են կրում: Փորձագիտական այցի ու ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման

վրա պարզ դարձավ, որ բուհը հստակ քայլեր չի ձեռնարկում դասախոսների մասնագիտական առաջընթացի համար և չկա հստակ պլանավորում, ինչպես նաև համապատասխան ֆինանսական և նյութական միջոցների տրամադրում: Քիչ են մասնագիտական վերապատրաստումները և՛ հայերենով, և՛ անգլերենով դասավանդող դասախոսների համար: Վերջին վերապատրաստումը բուհի միջնորդությամբ իրականացվել է 2019 թ. անգլերենի ուղղությամբ:

Դասախոսների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ բուհը թեև մեխանիզմներ չունի ՊԴ մասնագիտական առաջընթացի համար, բայց ունի խրախուսման մեխանիզմներ, որոնք հիմնված են ուսանողների հարցումների վրա և կիրառվում են առավել վարկանիշային դասախոսների համար: Նաև պարզ դարձավ, որ խրախուսում են նաև այն դասախոսներին, ովքեր ընդգրկում են ուսանողների հետ տարբեր գիտաժողովներում:

Ինչպես պարզ դարձավ, որ դասախոսների մասնագիտական առաջընթացի համար մշակված չեն միջազգային վերապատրաստումները խրախուսելու մեխանիզմներ, բացառությամբ առանձին դեպքերի, որոնց իրականացվում են առանց բուհի միջնորդության:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Համալսարանում վարչական և ուսումնաօժանդակ աշխատանքներն իրականացնում են թվով 22 աշխատակիցներ: Համալսարանի ինքնավերլուծությունից պարզ է դառնում, որ համաձայն ուսանողների հարցումների՝ վերջիններս բավարարված են վարչական և ուսումնաօժանդակ կազմի տրամադրած ծառայություններից:

ՌԾ-ի ուսումնասիրությունից և այցի արդյունքներից պարզ դարձավ, որ ՌԾ-ում ամրագրված ոչ բոլոր նպատակների համար է առկա համապատասխան աշխատակազմ, օրինակ՝ գիտական գործունեության զարգացման և դասախոսների որակավորման բարձրացման համար, ՄՈՒՀ-ը չունի պրակտիկայի բաժին կամ պատասխանատու ղեկավար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ չնայած ԱԲՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման ոչ ֆորմալ քաղաքականության, հնարավորություն է ստեղծվում ուսումնական գործընթացում ներգրավելու առողջապահության ոլորտի պրակտիկ փորձ ունեցող և անգլերենին տիրապետող դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի, որոնցից գոհ են ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային ուսանողները: Դրական է նաև այն, որ ԱԲՀ-ն փորձում է ուսումնական գործընթացում ներգրավել նաև իր շրջանավարտներին, ինչը նպաստում է կայունության ապահովմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է մրցութային համալիր քաղաքականության և ընթացակարգերի մշակումն ու կիրառումը, որը դասախոսների հավաքագրումն ավելի թափանցիկ կդարձնի:

Միևնույն ժամանակ դասախոսների համար պաշտոնի անձնագրերի մշակումը, յուրաքանչյուր ՄԿԾ-ի նպատակներից բխող մասնագիտական պահանջների սահմանումը կնպաստեն ոլորտի լավագույն մասնագետների ներգրավմանը:

Դրական է այն, որ դասախոսների մասնագիտական և մեթոդական որակների գնահատման համար ամբիոնի վարիչների և այլ դասախոսների կողմից իրականացվում են դասալսումներ, որոնք նպաստում են առաջացած խնդիրների դուրսբերմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսական կազմի գնահատումների

արդյունքում դուրս բերված խնդիրների հիման վրա անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական վերապատրաստումների պլանավորումն ու իրականացումը կնպաստեն դասախոսների մասնագիտական առաջընթացին և ՄԿԾ-ներում սահմանված նպատակների իրականացմանը:

Դրական է, որ ԱԲՀ-ն իրականացնում է անգլերենի բարձրացման վերապատրաստումներ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար և չի խոչընդոտում դասախոսների կողմից սեփական նախաձեռնությամբ վերապատրաստումների մասնակցությունը, սակայն ԱԲՀ-ի կողմից մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության պլանավորումն ու իրականացումը, ինչպես նաև ֆինանսական հատկացումները կնպաստեն դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը և շարունակական զարգացմանը, ինչպես նաև որակյալ ծառայությունների մատուցմանը:

Դրական է, որ ԱԲՀ-ն փորձում է ապահովել դասախոսական կազմի կայունությունը իր պահուստային ցուցակի միջոցով, սակայն հարկ է նշել, որ կայության ապահովման ռիսկային կողմերից մի քանի առարկայի գծով միևնույն մասնագետի առկայությունը և դասախոսների անընդհատ արտահոսքը, որը խոչընդոտներ կարող է ստեղծել ուսումնական գործընթացի կազմակերպման համար, ինչպես նաև ռիսկային է ուսանողների հոսքի ավելացման ժամանակ:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ն ընդհանուր առմամբ, ապահովված է անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսներով, բալանսավորված է հիմնական և հրավիրված դասախոսների հարաբերակցությունը, դասախոսներն իրենց սեփական նախաձեռնությամբ անցնում են մասնագիտական վերապատրաստումներ, ուսանողները և ՄՈՒՀ-ի շրջանավարտները բավարարված են դասախոսական կազմի որակներով, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ն բավարարում է չափանիշ 5ի պահանջներին: Միևնույն ժամանակ գտնում է, որ անհրաժեշտ է ինստիտուցիոնալացնել մասնագիտական առաջընթացին նպաստող վերապատրաստումների իրականացումը, ներդնել խրախուսման մեխանիզմներ հետազոտական գործունեությունը խրախուսելու համար, ինչպես նաև կայունության ապահովման նպատակով պատրաստել դասախոսական կազմի պահուստ/ռեզերվ:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 **ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն**:

Համաձայն ՄՈՒՀի ՌԾի, համալսարանի առաքելությունը նպատակաուղղված է գիտական աշխատանքների իրականացմանը և գիտական փորձով հաստատված ավանդական բժշկության և բուժման մեթոդների ինտեգրմանը ուսուցման գործընթացում: ՄՈՒՀի նպատակներից են ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեությանը նպաստող

մեխանիզմների ու գործիքների մշակումը, հետազոտությունների արդյունքների կիրառելիության արդյունավետության բարձրացումը և ներդրումը կրթական գործընթացում, ինչպես նաև հետազոտությունների միջազգայնացումը: ՌԾում որպես խնդիր ամրագրված է դասախոսների գիտահետազոտական գործունեության իրականացման պայմանների բարելավումը՝ արդիականացնելով ուսումնական և լաբորատոր պայմաններն ըստ կրթական և հետազոտական ծրագրերի, սակայն այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքները սակավ են:

Հարկ է նշել նաև, որ ՌԾում փաստացի հստակեցված չեն հետազոտական ուղղությունները:

Ինքնավերլուծականից պարզ է դառնում նաև, որ ՄՈՒՀում ավանդական բժշկության ոլորտում մշակվել են հետազոտությունների 4 հիմնական ռազմավարական ուղղություններ՝ ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդների վերականգնում և գիտական հիմնավորում, գիտականորեն հիմնավորված մեթոդների ընդգրկում կրթական ծրագրերում և ներդրում գործնական բժշկության մեջ, ավանդական բժշկության կրթական ծրագրերի մշակում, ժամանակակից և ավանդական բժշկության ինտեգրման առարկայական ծրագրերի մշակում: Վերոնշյալն իրականացվում է միայն "Ավանդական բժշկության" ամբիոնում, մինչդեռ բուհի գիտական ներուժը գրեթե չի օգտագործվում գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության համար:

Ինչպես պարզ դարձավ ֆինանսական միջոցների բաշխվածության ուսումնասիրությունից, վերջին երեք տարիների համար բուհն առհասարակ ֆինանսական միջոցներ չի հատկացնում գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար: Ամբիոնի վարիչների հետ հանդիպումից հստակեցվեց, որ բուհի հատկացումներն այս ոլորտում սահմանափակվում են ըստ պահանջի յուրաքանչյուր ամբիոնի կողմից ներկայացված առաջին անհրաժեշտության նյութերի հատկացմամբ գործնական պարապունքների համար:

Չնայած այն փաստին, որ 2017-2018 թթ. ԱԲՀի ՊԴ կազմում ընդգրկված են եղել թվով 67 դասախոս, որոնցից 1ը՝ պրոֆեսոր, 4ը՝ գիտությունների դոկտոր, 11ը՝ դոցենտ, 17ը՝ գիտությունների թեկնածու, ՀՀ և միջազգային գրախոսվող ամսագրերում տպագրվել է 3-ական հոդված և 7 գիտաժողովի նյութ:

Ինչպես արդեն նշվել է, ԱԲՀ-ում գործում է նաև ՈՒԳԸ, որն, ըստ կանոնակարգի, պետք է զբաղվի ուսանողների գիտական թեմաների ընտրությամբ, ուսանողների մասնագիտական և համապատասխան հետազոտական հմտությունների զարգացման խորացմամբ: Այնուամենայնիվ, այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՈՒԳԸ-ի աշխատանքները սահմանափակվում են սեմինարների կազմակերպմամբ:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Չնայած ՄՈՒՀի ՌԾում կան հետազոտության զարգացման համար սահմանված նպատակներ, սակայն ԱԲՀ տարբեր շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ՄՈՒՀը չունի սեփական հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր:

Հարկ է նշել, որ բուհում իրականացվում են ոչ համակարգային բնույթ կրող տեսական և գործնական սեմինարներ արտասահմանից ժամանած մասնագետների կողմից (օրինակ՝ 2017-2018 թթ. Գերմանիայից ժամանած պրոֆեսորների գիտաուսումնական սեմինարները և այլն): Սակայն այդ միջոցառումները նույնպես հիմք չեն հանդիսանում ՄՈՒՀի գիտահետազոտական հետաքրքրությունների հստակեցման, հետազոտական ոլորտում միջազգային կապերի հաստատման, համատեղ գիտական և գիտահետազոտական ծրագրերի իրականացման համար:

Ինքնավերլուծությունից պարզ դարձավ, որ հետազոտական ոլորտում հետաքրքրությունները և հավակնությունները որոշվում եմ ամբիոնների կողմից, սակայն, ինչպես բացահայտվեց այցի ժամանակ, ամբիոնները չունեն մշակված ու հստակեցված հետազոտական ուղղություններ:

ՄՈՒՀ-ը նաև պայմաններ չի ստեղծում բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրությունները խթանելու համար: Ինքնավերլուծությունից պարզ դարձավ և այցի ընթացքում հստակեցվեց, որ ՄՈՒՀը չունի գիտահետազոտական գործունեության խրախուսման հայեցակարգ:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Համաձայն բուհի ինքնավերլուծության՝ ԱԲՀ գիտահետազոտական գործունեության իրականացումը բխում է համալսարանի առաքելությունից՝ հետազոտական իրականացման հստակ ձևակերպված ռազմավարական նպատակին հասնելու համար: Փորձագիտական այցի ժամանակ հստակեցվեց, որ բուհում առկա չեն հստակ քաղաքականություն և ընթացակարգեր հետազոտությունների իրականացման և զարգացման համար: Ուսանողները կատարում են ինքնուրույն աշխատանք ռեֆերատների տեսքով, որոնց ներկայացման պահանջները հստակեցված չեն և ներկայացված չէ գնահատման մեթոդաբանությունը, ինչպես պարզվեց դասախոսների և ուսանողների հետ հանդիպումներից:

ԳԲՈՒԿ այցից և համաձայն ներկայացված գրանցամատյանի պարզ դարձավ, որ կենտրոնում առկա են մեծածավալ և տարբեր բնույթի կլինիկական տվյալներ, սակայն դրա հետ միասին բացակայում է տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմները, ինչը կարող էր հետազոտական աշխատանքի հիմք հանդիսանալ: Համաձայն ԳԲՈՒԿի 2018թ հաշվետվության՝ կենտրոնում պրակտիկ ուսումնական գործընթացի և բուժսպասարկման աշխատանքների հետ համատեղ իրականացվել են նաև բուհի կողմից որպես գիտական միջոցառումներ համարվող ավանդական բժշկության բնագավառի գիտական սեմինար պարապունքներ և հիվանդների ուսումնասիրություն ուսանողների մասնակցությամբ և բուժման մշակում: ԳԲՈՒԿ այցելության ժամանակ պարզ դարձավ, որ հիվանդների բավականաչափ հոսքի (200 պացիենտ՝ Ավանդական բժշկության ամբիոնում և 163՝ ստոմատոլոգիական կաբինետում) հետ մեկտեղ տվյալների վերլուծություն ուսանողների կողմից և դրանց ներկայացում գիտական հրապարակումների տեսքով չի կատարվում:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Ըստ ինքնավերլուծության՝ ԱԲՀ-ի գիտահետազոտական և գիտակրթական գործունեության միջազգայնացումը ՌԶԾ-ում ամրագրված խնդիրներից մեկն է: ԱԲՀ

գիտության միջազգայնացման նպատակով բուհը պայմանագրեր է կնքել Իրանի Իսլամական Հանրապետության մի քանի ինստիտուտների հետ /«Փիշզամանե Թեբբե Սոնաթի Իրանյան ինստիտուտ», «Բուհական Ջիհադի դեղաբույսերի հետազոտական ինստիտուտ», «Ֆլեբոտոմիա» գիտահետազոտական ինստիտուտ/: Սակայն փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ պայմանագրերը ներկայում չեն գործում:

Ինչպես պարզ դարձավ այցի ընթացքում, ՄՈՒՀի ՊԴ կազմում առկա են այլ բուհերի հենքի վրա հետազոտական աշխատանք իրականացնող դասախոսներ, ովքեր կատարում են հետազոտական աշխատանք և տպագրում հոդվածներ միջազգային ամսագրերում և մասնակցում միջազգային գիտաժողովների: Համաձայն ներկայացված միջազգային տպագրությունների ցանկի՝ հարկ է նշել, որ տպագրված հետազոտական աշխատանքներն իրականացվել են առանց բուհի աջակցության և չեն արտացոլում բուհի գերակա ուղղությունները:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ԱԲՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներից է ուսանողների կողմից կատարվող անհատական աշխատանքները, որոնք սակայն կրում են նկարագրական բնույթ, չեն պարունակում տվյալների վերլուծություն, կամ կլինիկական դեպքերի ուսումնասիրություն:

Մեկ այլ օրինակ կարող են հանդիսանալ «Ավանդական բժշկության» ամբիոնում "Ասեղ այրում թերապիա", "Մանուալ թերապիա", "Հոմեոպաթիա", "Իրիդոդիագնոստիկա" առարկայական ծրագրերի մշակումը, որտեղ ներդրվել են ավանդական բժշկության ամբիոնի դասախոսների անձնական փորձի և հետազոտությունների արդյունքների հիման վրա:

Հարկ է, նշել նաև, որ ինչպես պարզ դարձավ դասախոսների հետ հանդիպումից, որոշ դասախոսներ ներդրում են իրենց մասնագիտական գործունեության արդյունքում կատարված գիտական արդյունքները կրթական գործընթացում և կատարում փոփոխությունները առարկայական ծրագրերում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ նման դեպքերը սակավաթիվ են, համակարգային բնույթ չեն կրում և պայմանավորված չեն բուհի պլանավորված քաղաքականությամբ:

Դատողություններ: Համաձայն ներկայացված փաստաթղթերի և կատարած այցի վերլուծությունների՝ ՄՈՒՀը, բացառությամբ ավանդական բժշկության ոլորտում, չի ապահովում հետազոտական գործունեության իրականացում, ինչը բուհը հիմնավորում է ֆինանսական միջոցների սղությամբ: Ավելին, բուհում չկա գիտության պլանավորում, կառավարում, զարգացում և կանոնադրությամբ թույլատրելի հետազոտական արդյունքների առևտրայնացում, իսկ դասախոսների կողմից գիտությամբ զբաղվելը չի խրախուսվում:

Դրական է, որ ԱԲՀ-ն իր ՌԾ-ով որպես նպատակ սահմանել է գիտահետազոտական ուղղության զարգացումը, սակայն մշակված չեն գիտության զարգացման քաղաքականություն և ընթացակարգեր, ինչպես նաև հստակ սահմնված և բոլոր շահակիցների կողմից ընդունված չէ ԱԲՀ գիտահեզոտական ուղղությունները, որոնք ռիսկային են դարձնում գիտության և հետազոտական գործունեության ոլորտում ՌԾ-ով սահմնված նպատակների իրականացումը:

Չնայած այն հանգամանքին, որ ԱԲՀ-ում առկա է հետազոտական ներուժ /դասախոսներ, այլ ռեսուրսներ/, ԳԲՈՒԿ-ում առկա են մեծաթիվ տվյալներ, որոնք կարող են

կիրառվել հետազոտական գործունեության մեջ և դասախոսների, և ուսանողների կողմից, այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայում հետազոտական գործունեությունը համակարգված բնույթ չի կրում, և բուհը չի օգտագործում իր հետազոտական ներուժը ՌԾ նպատակներին հասնելու համար, ինչը խոչընդոտում է ոլորտի համահունչ զարգացումը: Այսպիսով, ՄՈՒՀը չի խթանում ՊԴ կազմի գիտամեթոդական գործունեությունը և ուսանողների ու դասախոսների կողմից իրականացվող հետազոտությունների որակի բարձրացումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար պայմանների ապահովումը և բարելավումը:

Բուհի կողմից ոլորտի հստակ քաղաքականության և ճանապարհային քարտեզի առկայության դեպքում, առկա հետազոտական ռեսուրսի օգտագործման պարագայում միայն հնարավոր կլինի ոլորտում հաջողություններ գրանցել:

Դրական է այն հանգամանքը, որ բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչները իրենց նախաձեռնությամբ և միջոցների հաշվին տպագրվում են միջազգային ամսագրերում և կիրառում իրենց կողմից կատարված հետազոտական արդյունքներն ուսումնական գործընթացում, սակայն այն համատարած և համակարգված բնույթ չի կրում, ինչը խոչընդոտում է բուհում գիտության զարգացմանը:

Չնայած այն հանգամանքին, որ Ավանդական բժշկության ամբիոնում առկա են դեպքեր հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման, սակայն լավագույն փորձը չի տարածվում այլ ամբիոններ, որը կնպաստեր ոլորտի շարունակական զարգացմանը: Ուսանողների կողմից կլինիկական դեպքերի առավել շատ ուսումնասիրությունը որպես անհատական աշխատանքներ կնպաստեր ուսանողների մոտ վերլուծական և հետազոտական հմտությունների ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա չէ հետազոտական ոլորտում ԱԲՀ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն, ԱԲՀ-ն իր հետազոտական ռեսուրսը /դասախոսական կազմ, ԳԲՈՒԿ/, և մրցակցային առավելությունը չի կիրառում գիտության և հետազոտության զարգացման համար, չի իրականացվում գիտության կառավարում, ֆինանսներ չեն ներդրվում գիտության զարգացման համար, դասախոսական կազմն ու ուսանողները քիչ են ներգրավված հետազոտական աշխատանքներում, դասախոսները անհատական նախաձեռնությամբ են կատարում հետազոտական աշխատանք և դա ներդնում ուսումնական գործընթացում, ուսանողների մոտ վերլուծական և հետազոտական հմտությունների ձևավորման համար չեն պլանավորում համապատասխան հանձնարարականներ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ԱԲՀ-ն իր ռազմավարական նպատակներից է համարում համալսարանում ժամանակակից պահանջներին բավարարող որակյալ ենթակառուցվածքների և ֆինանսական ռեսուրսների ձևավորումը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նյութատեխնիկական բազայի համալրումը, ուսումնական միջավայրի բարելավումը և նոր կարողությունների ստեղծումը գտնվում են ՄՈՒՀ-ի ծրագրային առաջնահերթությունների մեջ:

ՄՈՒՀ-ն ուսումնական գործընթացը կազմակերպում է 2.200 քմ ընդհանուր մակերեսով 2 մասնաշենքում: Համալսարանն ունի նաև 4.800 քմ հողատարածք, որտեղ նախատեսված է կառուցել համալսարանական կլինիկա՝ 5.000 քմ ընդհանուր մակերեսով: ԱԲՀ-ի ուսանողական հանրակացարանային մասնաշենքի և համալսարանական ստոմատոլոգիական կլինիկայի կառուցման աշխատանքները նախագծային փուլում են: Համալսարանի կենտրոնական մասնաշենքում տեղակայված են ԱԲՀ 8 ամբիոնները, Գիտաբժշկական ուսումնական կենտրոնը, լսարանները, ուսումնական կաբինետները, լաբորատորիաները, գրադարանը, բուֆետը: Կլինիկական առարկաների դասախոսություններն ու գործնական պարապմունքներն անցկացվում են Երևանի՝ համագործակցության հիմունքներով վարձակալված մի քանի կլինիկաներում («Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոն, ՀՀ Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն, ՀՀ Երևանի «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն, Ստոմ Լայն, «Մայ սիթի դենթիստ» ստոմատոլոգիական և կոսմետոլոգիական կենտրոն, Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն և այլն): Սակայն ինքնավերլուծության մեջ ներկայացված 12 կլինիկաներից ոչ բոլորում է իրականացվում ուսումնական գործընթաց ԱԲՀ ուսանողների համար (օրինակ՝ Միքայելյանի անվ. վիրաբուժության ինստիտուտ), կլինիկաների մի մասի հետ պայմանագիրը կամ ավարտվել է 2019թ հունվարին, կամ 2019 թ սեպտեմբերին:

ԱԲՀ-ի կոմունալ և սպասարկող ենթակառուցվածքները բարեկարգ են, ինչի մասին փաստում են նաև համալսարանի ներքին շահակիցները:

Դասասենյակներում առկա են առարկաների բովանդակությանը համապատասխանող պլակատներ, միկրոսկոպեր, լաբորատորիաներում առկա էին անհրաժեշտ նյութեր, սակայն չկար քարշակ՝ թունավոր նյութերի համար:

Հիմնովին վերանորոգված և բարեկարգ են ոչ միայն լսարանները, դասասենյակներն ու լաբորատորիաները, այլ նաև կոմունալ և այլ սպասարկման ոլորտի ենթակառուցվածքները, սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են անհրաժեշտ նորմերին:

Առկա էր ստոմատոլոգիական գործնական հմտությունների ուսուցման լսարան: Առկա էր նաև մուլյաժներով, վիրաբուժական գործիքներով և այլ պարագաներով կահավորված լսարան՝ կրկին գործնական հմտությունների դասավանդման համար: Սակայն մուլյաժների մեծ մասը հին էին, և սահմանափակ հնարավորություններով:

Փորձագիտական խումբը, դիտարկելով համալսարանի ռեսուրսային բազան, արձանագրել է հետևյալը. համալսարանն ունի 70 մ² մակերես զբաղեցնող գրադարան: Գրադարանը համալրված է 5976 օրինակ գրքով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գրադարանում գրքերը առկա են հիմնականում հայերենով և ռուսերենով:

Փորձագիտական այցի պահին պարզվեց, որ անգլալեզու գրականությունը շատ քիչ մասն էր կազմում և ոչ բոլոր գրքերն էին հանդիսանում դասագրքեր, սակայն հաշվի առնելով, որ ԱԲՀ-ի ուսանողները հիմնականում օտարալեզու են, անգլերենով գրականությունը ուսանողներին հասանելի է դառնում էլեկտրոնային տարբերակով: Գրադարանը համալրված է 16 համակարգչով: Ընթերցասրահի համակարգիչներում ներբեռնված է դասավանդվող առարկաների մասով գրականություն: ՄՈՒՀ-ի տարածքն ապահովված է WIFI ծածկույթով:

Սակայն հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ի դասավանդողների և ուսումնառողների շրջանում չկա միանշանակ գոհունակություն առկա գրադարանային ռեսուրսներից: Մասնավորապես՝ դասավանդողների միայն 33,8%-ն է գոհունակություն հայտնել գրադարանի անհրաժեշտ գրականությամբ ապահովվածությունից, 50,7%-ը այդ ապահովվածությունը համարում է մասնակի, իսկ 15,5%-ը՝ անբավարար:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցները հիմնականում ձևավորվում են ուսման վարձերի հաշվին (93.5%՝ 2018 թ.), գործառնական և այլ մուտքերը կազմում են 6.5%: Բացի ուսման վարձավճարներից, այլընտրանքային ֆինանսական հոսքեր են ապահովում համալսարանի ԳԲՈՒԿ-ում իրականացվող բուժսպասարկման ծառայությունից, միջազգային համագործակցության պայմանագրերի իրականացումից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Համալսարանի ինքնավերլուծությունից պարզ է դառնում նաև, որ ըստ ԱԲՀ-ի կատարած վերլուծության արդյունքների՝ օտարերկրյա ուսանողների ընդունելությամբ պայմանավորված ֆինանսական միջոցները սկսել են աճել: Վճարովի ուսուցման ծառայություններից ստացված եկամուտները 2014թ.-ի համեմատ 2017-ին աճել են 209,5 %-ով, իսկ 2018թ-ին՝ 342,4 %-ով:

Ֆինանսական ռեսուրսներն օգտագործվել են աշխատավարձի, ընթացիկ ծախսերի իրականացման, կապիտալ վերանորոգման, տեխնիկական համալրման և վերազինման նպատակով, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների նկատմամբ և այլ դեպքերում կիրառվում են ուսման վարձի զեղչեր: Ընդհանուր տարեկան եկամուտից 2017 թ.-ի աշխատավարձի ֆոնդին ուղղված դրամական միջոցները կազմել են 50,6%, իսկ 2018 թ-ին՝ 46,1 %: Բյուջեի 3,5%-ը ՄՈՒՀ-ը հատկացնում է որպես պահուստային ֆոնդ:

Հարկ է նշել, սակայն, որ ուսումնական նյութերի, գործիքների և սարքավորումների ձեռքբերման նպատակով տրամադրվում է բյուջեի ընդամենը 2,2 %-ը, իսկ գրադարանային ֆոնդի բարելավմանը և գիտության համար ըստ բյուջեի նախահաշվի գումար ընդհանրապես հատկացված չէ:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ԱԲՀ-ն ինքնուրույն է որոշում իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները: Ուսումնական տարեսկզբին կազմվում է ծախսերի նախահաշիվ, երբ

հայտնի և հստակ է սովորող ուսանողների քանակը և այլ եկամուտները, գնահատվում է անհրաժեշտ ռեսուրսների առկա վիճակը, գնահատվում են տվյալ ուսումնական տարվա ընթացքում ուսումնական և գիտամանկավարժական գործընթացների իրականացման համար անհրաժեշտ կարիքները, և համալսարանն իրականացնում է ֆինանսների բաշխումն՝ ըստ հայտնաբերված կարիքների և խնդիրների:

Կրթական ծրագրերի նպատակների իրականացման և շարունակությունն ապահովելու համար ԱԲՀ-ում գործող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունն իրականացվում է ճկուն մեխանիզմով՝ ըստ պահանջի և կարիքների՝ փոփոխության ենթարկելով ոչ պարտադիր հոդվածները նախահաշվում:

ՄՈՒՀ-ը չունի ֆինանսական միջոցների բաշխման հստակ քաղաքականություն, ստորաբաժանումներին նութատեխնիկական բազայի ապահովումն իրականացվում է ըստ տարբեր ստորաբաժանումների կողմից ներկայացված պահանջների: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԱԲՀ-ում չի իրականացվում արտաքին ֆինանսական աուդիտ:

Ֆինանսական միջոցների կառավարման պատասխանատվությունը դրված է համալսարանի ռեկտորի և գլխավոր հաշվապահի վրա: Համալսարանի կողմից ֆինանսական միջոցների բաշխման և օգտագործման ուղղությունների վերաբերյալ ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով համապատասխան ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ հարկային պետական ծառայություն, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, սակայն նկատելի է նաև, որ ֆինանսական միջոցների բազմազանեցմանն ուղղված հստակ քայլեր բուհի կողմից չեն կատարվում:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ԱԲՀ-ն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման և ռազմավարական պլանի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը հիմնականում իրականացվել է ըստ անհրաժեշտության: Բուհի առանձին ստորաբաժանումները, վարչական կազմը բացահայտում և ներկայացնում են սեփական կարիքները, որի հիման վրա կատարվում է կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների պլանավորումը:

ԱԲՀ ռեսուրսների բաշխման գործընթացն իրականացվում է համաձայն բուհի եկամուտների հնարավորությունների, ինչն, իր հերթին, պայմանավորված է սովորող ուսանողների թվով և ներկայացված պահանջներով: Հաշվարկվում է յուրաքանչյուր ստորաբաժանման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների ծավալը, իսկ հետագայում այն պարբերական վերանայվում է՝ ելնելով լաբորատորիաների և դասասենյակների վերազինման անհրաժեշտությունից: Մասնավորապես, վերջին տարիների ընթացքում ՄՈՒՀ-ի կողմից ձեռք են բերվել տարբեր ռեսուրսներ, ՄԿԾ-ների ավելի արդյունավետ իրականացման համար:

Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների կողմից ռեսուրսների երկարաժամկետ պլանավորում չի իրականացվում:

Համալսարանի Որակի ապահովման բաժինը /ՈԱԲ/ ակտիվ ներգրավված չէ ռեսուրսների ուղղությամբ ուսանողների և դասախոսների կարիքների վեր հանման, ինչպես

նաև ռեսուրսների բաշխման արդյունավետության գնահատման, և ըստ այդմ՝ որակի շարունակական բարելավման և կայունության ապահովման գործընթացում:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ԱԲՀ-ում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների իրականացման իրավական հիմքն են հանդիսանում գործավարության կարգը և ՄՌԿ և ընդհանուր բաժնի կանոնադրությունը: Համալսարանում գործում է հաշվետվողականության տարբեր մեխանիզմներ՝ շեշտադրելով կազմակերպված հաղորդակցումը ԱԲՀ ստորաբաժանումների տարբեր մակարդակներում:

ՄՈՒՀ-ում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ ներդրված չէ և գտնվում է պլանավորման փուլում: Ընթացակարգերը և ներհամալսարանական իրավական ակտերը ներկայացված են համալսարանի պաշտոնական կայքում, սակայն նկատելի է, որ դրանց մի մասի անգլերեն տարբերակը բացակայում է, և տեղեկատվությունը ոչ ամբողջական է հասանելի անգլալախոս ուսանողների համար:

Առկա է էլեկտրոնային գրանցամատյան, որը թույլ է տալիս գրանցել ուսանողների ողջ ուսումնառության տվյալները:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ առկա են ներքին իրավական ակտերի գրանցման մատյաններ, հրամանագրքեր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր, սակայն փաստաթղթերի հաշվառումը բացակայում էր:

Տեղեկատվության տարածմանը նպաստում են նաև համալսարանի պաշտոնական կայքը, որտեղ տեղադրված են որոշ իրավական ակտեր, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր, կարգեր:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Համալսարանն իր կարևորագույն խնդիրներից է համարում կրթական միջավայրի անվտանգության, ինչպես նաև ուսանողների և աշխատակիցների առողջության պահպանումը: Համալսարանում գործում են ԳԲՈՒԿ-ը և պահակային ծառայությունը: ԳԲՈՒԿ-ն իրականացնում է ԱԲՀ ուսանողների և աշխատակիցների առողջության պահպանմանն ուղղված անվճար ծառայություններ: Բացի բուժսպասարկումից, կենտրոնի գլխավոր բժիշկը հետևում է շենքային պայմանների սանիտարական նորմերի պահպանմանը:

ԱԲՀ-ում պարբերաբար ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվում են ուսումնավարժություններ, նախապատրաստական տարբեր միջոցառումներ, հանդիպում-քննարկումներ (օրինակ՝ Կազմավորումների գործողությունները հրդեհի դեպքում թեմայով ուսումնավարժություն):

ՄՈՒՀ-ի լսարանային և շենքային պայմանները գտնվում են բարվոք վիճակում, առկա է ջեռուցման համակարգ, գործում է սննդի կետը, համալսարանը վարձակալում է նաև Միլենա առողջարարական մարզասրահը:

ԱԲՀ-ում առկա է հակահրդեհային համակարգ, տեղադրված են կրակմարիչներ, սակայն միջանցքներում տարհանման սխեմաները փակցված չեն, տարհանման սխեման պահվում է ռեկտորի մոտ:

Թեև ՄՈՒՀ-ում պատրաստակամ են անհատական մոտեցում ցուցաբերել ուսանողներին, հարկ է նշել, որ ԱԲՀ-ում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար առանձին պայմաններ ստեղծված չէին, մասնավորապես, մասնաշենքերը և նրանց ենթակառուցվածքները չունեին հատուկ պայմաններ շարժասայլակներով տեղաշարժվելու համար:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ԱԲՀ-ում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների հասանելիությունը, կիրառելիությունը և արդյունավետությունը պարզելու մեխանիզմներ են համարվում ուսանողների և դասախոսների շրջանում անցկացվող հարցումները: Համալսարանը հնարավորություն է ստեղծել ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար օգտվելու առկա ռեսուրսներից ուսումնական գործընթացի ընթացքում և դրանից հետո՝ մինչև աշխատանքային օրվա ավարտը: Նաև մագիստրատուրայի ուսանողներին հնարավորություն է ընձեռվել դասերից հետո դասախոսների հսկողությամբ, ձեռքի հմտությունների ստոմատոլոգիական լաբորատորիայում կատարել հիվանդների ընդունելություն և բուժում: Ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ ուսանողների 93,1 %-ը բավարարված են առկա ռեսուրսներից, ինչը հաստատվել է նաև ուսանողների և դասախոսների հետ հանդիպումների ընթացքում: Ուսանողները և դասախոսները տեղեկացվում են հարցումների արդյունքների մասին և հնարավորություն ունեն առաջարկներ անելու ռեսուրսների համալրման վերաբերյալ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ վերջին տարիներին միջազգային ուսանողների թվի աճով պայմանավորված և ֆինանսական ներհոսքի արդյունքում բարելավվել է ԱԲՀ նյութատեխնիկական բազան, որը նպաստել է անհրաժեշտ ուսումնական միջավայրի ստեղծմանը: Ընդհանուր առմամբ, ԱԲՀ-ն ապահովված է անհրաժեշտ ռեսուրսներով՝ նպաստելով սահմանված առաքելության և կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը: ԱԲՀ-ն համագործակցում է տարբեր կլինիկաների հետ ուսանողների պրակտիկ ցիկլերի անցկացման համար և դրական է, որ ԱԲՀ-ն նախատեսում է կառուցել իր սեփական կլինիկան, որը կնպաստի կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը, ուսանողների մոտ առավել շատ պրակտիկ հմտությունների ձևավորմանը և ուսանողների համար կստեղծի առավել շատ հիվանդներ տեսնելու և նրանց հետ աշխատելու հնարավորություններ:

Դրական է, որ ԱԲՀ-ն իր բյուջեի 3,5%-ը հատկացնում է որպես պահուստային ֆոնդ, սակայն միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսական միջոցների բազմազանեցումը /դիվերսիֆիկացում/, ռազմավարական բոլոր նպատակների /գիտություն, որակի ապահովման համակարգի բարելավում, նյութատեխնիկական բազայի համալրում/ համաչափ զարգացման համար ֆինանսական հատկացումները, ուսանողների թվի աճի հետ միասին հստակ ֆինանսական պլանավորումը, կնպաստեն ուսումնական միջավայրի արդյունավետ զարգացմանը:

Դրական է, որ ԱԲՀ-ն փորձում է անգլալեզու գրականություն ապահովել միջազգային ուսանողներին էլեկտրոնային նյութերի միջոցով, սակայն գրադարանային ֆոնդի համալրումը առավել կարևոր նշանակություն ունի ԱԲՀ-ի համար, քանի որ ուսանողների գերկշիռ մեծամասնությունը անգլախոս են, իսկ առկա գրքերի մեծամասնությունը կամ հայերեն, կամ ռուսերեն, ինչը կարող է խոչընդոտել ՄԿԾ-ով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Դրական է, որ ԱԲՀ-ում ներդրվել է ուսումնառության ամբողջ ընթացքում ուսանողների հաջողությունները/գնահատականները գրանցելու էլեկտրոնային համակարգ, սակայն հարկ է նշել, որ ԱԲՀ առկա փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության կառավարումը առավել համակարգելու կարիք կա, ինչն էլ կնպաստի վարչարարության որակի բարելավմանը:

Դրական է, որ ուսանողներն ու դասախոսները հնարավորություն ունեն պարբերաբար գնահատելու նյութատեխնիկական հագեցվածությունը բուհում: Միևնույն ժամանակ առկա տվյալների հիման վրա հստակ բարելավումների պլանի առկայությունը, ստորաբաժանումների կարիքների շարունակական ուսումնասիրությունը և ֆինանսական երկարաժամկետ պլանավորումը կնպաստեն ԱԲՀ սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացմանը և կայունության ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիների ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկել նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ, ներկայում առկա են ռեսուրսներ ուսումնական միջավայրի ստեղծման, կլինիկական փորձարկումների իրականացման համար, ընդհանուր առմամբ առկա ենթակառուցվածքները և ռեսուրսները թույլ են տալիս իրականացնել ռազմավարական նպատակները, ՄՈՒՀ-ը համագործակցում է տարբեր կլինիկաների հետ, ԱԲՀ-ն պլանավորել է սեփական կլինիկայի ստեղծում, ֆինանսական կայունության ապահովման համար ԱԲՀ-ն ունի պահուստային ֆոնդ, գործում է փաստաթղթավորման համարգ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջները: Միևնույն ժամանակ նշում է, որ միջազգային ուսանողների աճող քանակի հետ մեկտեղ անհրաժեշտ է ապահովել նյութատեխնիկական և լաբորատոր հագեցվածությունը, բարելավել ԱԲՀ գրադարանային ֆոնդը, կատարելագործել փաստաթղթաշրջանառության համակարգը և լավացնել ֆինանսական կառավարումը:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Համալսարանն իր ինքնավերլուծությունում նշում է, որ կարևորում է հաշվետվողականության և թափանցիկության ապահովումն իր բոլոր գործընթացներում: Ներքին հաշվետվողական գործընթացը կանոնակարգվում է համալսարանի ներքին կանոնակարգող փաստաթղթերով:

ԱԲՀ-ի ստորաբաժանումների աշխատանքների արդյունքների հաշվետվությունները ներկայացվում և քննարկվում են համալսարանի ԳԽ-ի և ռեկտորատի նիստերում, որն էլ հրապարակային է դառնում միայն ԳԽ-ում ընդգրկված պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների նեղ շրջանակի և ռեկտորատի համար:

ԱԲՀ-ում հաշվետվողականության սահմանված կարգ առկա չէ, սակայն համալսարանում գործում են հաշվետվողականության ապահովման մի քանի մեխանիզմներ: ԳԲՈՒԿ-ը տարեվերջյան բուժկանխարգելիչ հիմնարկների գործունեության մասին վարչական վիճակագրական հաշվետվություն է ներկայացնում ՀՀ Առողջապահության նախարարություն, համալսարանը ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ ԿԳՄՍ նախարարության լիցենզավորման գործակալություն, ֆինանսական գործունեության մասին և ամփոփիչ ավարտական ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվություններ ԿԳՄՍ նախարարություն:

ԱԲՀ պաշտոնական կայք էջում հասանելի են բուհի տարբեր ստորաբաժանումների հաշվետվությունների արդյունքների հիման վրա կազմված տարեկան հաշվետվությունները:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ԱԲՀ-ն իր գործունեության թափանցիկությունն ապահովում է սեմինարների, կոնֆերանսների, իր պաշտոնական www.utm.am կայքի, դասախոսների և ուսանողների կամավորական գործունեությամբ հասարակությանը իրազեկելու միջոցով:

ԱԲՀ-ի պաշտոնական եռալեզու կայքը գործում է 2017թ.-ից: Տեղեկատվությունն առկա է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Նկատելի է, որ չնայած ԱԲՀ ուսանողների մեծամասնությունը անգլախոս է, սակայն ամբողջական տեղեկատվությունը կայքում ներկայացված չէ անգլերենով: Կայքն առավել շատ դիտելիություն ունի Հնդկաստանից, Հայաստանից, Միացյալ Թագավորությունից և Իրանից:

ԱԲՀ-ն նախատեսում է հետագայում կատարելագործել թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետությունը:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԱԲՀ-ում գործում է ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականություն: Ներքին շահակիցների խնդիրները քննարկվում են կառավարման մարմիններում: Յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ամփոփվում են ամբիոնների նիստերում, գիտական խորհուրդներում և ռեկտորատի նիստերում, քննարկվում են նաև ընթացիկ ստուգումների արդյունքները:

ԱԲՀ-ի հասարակության հետ կապերի ձևավորումն իրականացվում է լրատվամիջոցների հայտարարությունների, բուկլետների տպագրման՝ այդ թվում օտարալեզու, «Հայաստանի բուհերը» դիմորդների համար տպագրվող տեղեկատուների միջոցով: Տպագրվում են նաև անգլերենով գովազդային նյութեր միջազգային ուսանողների հավաքագրման նպատակով:

Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապն իրականացվում է ոչ ֆորմալ հանդիպումների միջոցով, իսկ հստակ սահմանված մեխանիզմներ առկա չեն: Առկա չեն շրջանավարտների և գործատուների շրջանում իրականացված հարցումներ:

ԱԲՀ-ն ներկայացված է նաև սոցիալական ցանցերում, սակայն այստեղ թարմացումները պարբերական բնույթ չեն կրում, օրինակ՝ ֆեյսբուքյան էջի վերջին գրառումը տեղի է ունեցել 2016թ.-ին: Պաշտոնական կայքում առկա է նաև հետադարձ կապի համար նախատեսված դաշտ հաղորդագրությունների համար:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Համալսարանը իր ռազմավարական խնդիրներից է համարում հասարակությանը կրթական, բժշկական օգնության, առողջության պահպանման, մասնագիտական խորհրդատվության ծառայությունների տրամադրումը և դրանց համապատասխան գործողությունների իրականացումը: ԳԲՈՒԿ- ը հասարակությանը մատուցում է բժշկական և մասնագիտական խորհրդատվական ծառայություններ: ԳԲՈՒԿ-ի մատուցած ծառայություններից կարող են օգտվել ինչպես ներքին (ԱԲՀ ուսանողներ), այնպես էլ արտաքին շահակիցները (ՀՀ քաղաքացիներ, արտասահմանցիներ):

ԱԲՀ-ում կազմակերպվում են նաև մասնագիտական սեմինարներ, հանդիպումներ հրավիրված մասնագետների հետ, մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացվող այցեր ՀՀ դպրոցներ, ինչպես նաև դպրոցականների այցեր համալսարան կրթական ծրագրերին ծանոթանալու նպատակով:

Այնուամենայնիվ, ԱԲՀ-ն հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմների արդյունավետությունը չի գնահատել: Հարկ է նաև նշել, որ բուհն ունի մեծ ներուժ ավանդական բժշկության զարգացման համար, սակայն պարզ դարձավ, որ այդ ուղղությամբ վերապատրաստումներ չեն իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱԲՀ-ում գործում է հաշվետվողականության համակարգ, բոլոր ստորաբաժանումների կողմից կատարված հաշվետվություններն ամփոփվում են ԱԲՀ-ի տարեկան հաշվետվությունում, որն էլ հասանելի է դառնում ԱԲՀ պաշտոնական կայք էջում: Այնուամենայնիվ, ԱԲՀ հաշվետվությունները կրում են նկարագրողական բնույթ, առկա են որոշ վիճակագրական տվյալներ, սակայն այդ տվյալների հիման վրա որոշումների կայացման և բացահայտված խնդիրների լուծման ուղիների բացակայությունը կարող է խոչընդոտել հաշվետվողականության համակարգի արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև որակի շարունակական զարգացմանը:

ԱԲՀ-ում եռալեզու կայքի միջոցով հնարավորություն է ստեղծվում տարբեր ընթացակարգերի և ԱԲՀ-ում տեղի ունեցող գործընթացների թափանցիկություն ապահովել հասարակությանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը շեշտադրում է, որ հասարակության նկատմամբ ԱԲՀ-ի գործընթացների և տրամադրած կրթության նկատմամբ վստահության բարձրացման նպատակով իրականացված գործընթացները բարելավման կարիք ունեն, կարիք կա պարբերաբար ուսումնասիրել առկա խնդիրները՝ թիրախավորելով ԱԲՀ-ի շահակիցներին, ակտիվացնել հասարակության հետ կապերը՝ հասարակությանը ներկայացնելով ԱԲՀ-ի մրցակցային առավելությունները, որոնք կնպաստեն հասարակության

շրջանում ԱԲՀ դերի բարձրացմանը, դիմորդների ներգրավմանը ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային: Բարելավման կարիք ունի նաև բուհի պաշտոնական կայքը՝ առավել գրավիչ դարձնելու բուհի բոլոր շահակիցների համար, որը կնպաստի ԱԲՀ գործընթացների թափանցիկության բարձրացմանը:

Դրական է, որ ԱԲՀ-ում գործում են ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմներ, սակայն արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմների ֆորմալացումը կամրապնդի շահակիցների հետ կապը և կնպաստի բուհում իրականացվող գործընթացների շարունակական զարգացմանը:

Դրական է, որ ԱԲՀ-ում գործում է ԳԲՈՒԿ-ը, որը սպասարկում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին և հնարավորություն է ստեղծում ուսանողներին հիվանդների վերաբերյալ տվյալների ուսումնասիրությանը և հիվանդների հետ շփվելուն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ԳԲՈՒԿ-ի աշխատանքների ակտիվացումը և կենտրոնի մասին տեղեկատվության տարածումը, կենտրոնի կողմից ավանդական բժշկության վերաբերյալ վերապատրաստումների իրականացումը կնպաստեն կուտակած փորձի փոխանցմանը հասարակության լայն շերտերին:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ԱԲՀ-գործում է հաշվետվողականության մեխանիզմներ, բուհը ջանքեր է գործադրում ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձի կապի ամրապնդմանը, ունի եռալեզու կայք, որի միջոցով փորձում է ապահովել ընթացակարգերի և իր գործունեության թափանցիկությունը, ունի ԳԲՈՒԿ, որը սպասարկում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին, իր տրամադրած կրթության համար հաշվետու է հասարակությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՀ-ն համապատասխանում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԱԲՀ-ն իր ՌԾ-ում որպես գերակա խնդիր է ամրագրել արտաքին կապերի զարգացումը և իր գործունեության միջազգայնացումը:

ԱԲՀ-ն իր առջև խնդիր է դրել ապահովել համագործակցությունը հանրապետական և միջազգային բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական ինստիտուտների հետ, ինչը ենթադրում է կապերի հաստատում տարբեր ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների հետ, համատեղ նախագծերի իրականացում, այդ թվում՝ համատեղ ՄԿԾ-ների իրականացում, պրոֆեսորադասախոսական կազմի փորձի փոխանակում, այլ բուհերից հրավիրված դասախոսների մասնակցությամբ դասախոսությունների և զեկուցումների կազմակերպում, տարբեր բուհերի դասախոսների

գործուղումների կազմակերպում: Պայմանագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առկա վերջինները չեն բխում համալսարանի գերակա ուղղություններից և գիտահետազոտական առաջնահերթություններից, իսկ առկա համաձայնագրերի կիրառման օրինակները սակավաթիվ են: Չկան նաև հուշագրեր ազգային մակարդակում գործող տարբեր գործակալությունների և մասնագիտական միությունների հետ:

Ինչպես երևում է ինքնավերլուծությունից և ինչպես պարզ դարձավ այցի ընթացքում, բուհում գործում են ուսումնառության արդյունքների փոխճանաչման և կրեդիտների փոխանցման մեխանիզմներ, որոնց միջոցով ապահովվում է ուսանողների ներհոսքն արտասահմանից, բայց ոչ դասախոսների միջազգային ակադեմիական շարժունությունը: Համալսարանում ոլորտը կարգավորող քաղաքականություն և ընթացակարգեր առկա չեն:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ԱԲՀ-ում գործում է Արտաքին կապերի բաժին, որն ունի իր կանոնակարգը և արտաքին կապերը կարգավորող իրավական փաստաթղթերը:

Բաժնի հիմնական նպատակն է ապահովել համալսարանի համագործակցությունը ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների ու գիտական կենտրոնների միջև, նպաստել ուսանողների, ՊԴ կազմի և վարչակազմի փոխանակման ծրագրերին, համալսարանի և միջազգային կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, այլ երկրներից ուսանողների հավաքագրմանը, համալսարանի առջև դրված ռազմավարական գերակա խնդիրների լուծմանը: Արտաքին կապերի բաժնի աշխատանքային գործառույթները համակարգվում են բաժնի վարիչի կողմից՝ համալսարանի ռեկտորի անմիջական վերահսկողությամբ:

Համալսարանի ինքնավերլուծությունից պարզ է դառնում նաև, որ ԱԲՀ-ն անհրաժեշտ է համարում ակտիվացնել համագործակցությունն այլ հաստատությունների հետ, գործընթացները դարձնել առավել կանոնակարգված, սակայն նկատելի է, որ այս ուղղությամբ համապատասխան պլանավորում արված չէ:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Համալսարանն իր ինքնավերլուծությունում նշում է, որ միջազգայնացմանը և ճանաչմանը նպաստում է բուհի աշխատակիցների և դասախոսների մասնակցությունը տարբեր գիտաժողովներին, սեմինար-քննարկումներին, պետական և հասարակական տարբեր կառույցների կողմից կազմակերպվող միջոցառումներին: Սակայն նկատելի է, որ ՀՀ-ից դուրս կազմակերպվող վերապատրաստումներին դասախոսները մասնակցում են իրենց սեփական նախաձեռնությամբ և առանց բուհի աջակցության (միաժամանակ՝ նաև առանց բուհի կողմից խոչընդոտների ստեղծման):

Վերջին երեք տարիների ընթացքում արտերկրից հրավիրել են 9 մասնագետներ՝ 2-ը՝ Մոսկվայից, 1-ը՝ Նյու-Յորքից, 6-ը՝ Գերմանիայից, որոնց կողմից ուսանողների և դասախոսների համար իրականացվել են դասախոսություններ և անցկացվել են սեմինար պարապմունքներ: Հրավիրյալ մասնագետներին, համաձայն գործող կանոնակարգի, շնորհվել են ԱԲՀ պատվավոր դոկտորի, ԱԲՀ պատվավոր պրոֆեսորի կոչումներ:

Համալսարանը համագործակցում է «Ինտեգրատիվ բժշկության միջազգային ակադեմիայի» հետ: Միջազգային ուսանողների հավաքագրման նպատակով ԱԲՀ-ն համագործակցում է «Քեմփուս Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ (Campus International LLC), որի համագործակցության արդյունքում Հնդկաստանից շուրջ 200 ուսանող է ընդունվել ԱԲՀ վեջին 3 տարիների ընթացքում: ԱԲՀ-ն համագործակցում է ՀՀ-ում տարբեր դեսպանատների հետ /Հնդկաստան/ և այդ համագործակցության արդյունքում ուսանողները մասնակցում են դեսապանատների կողմից կազմակերպվող միջացառումներին:

Տեղական կառույցներից համալսարանը համագործակցում է ՀՀ Ստոմատոլոգների ասոցիացիայի հետ: Ազգային մակարդակում գործող այլ գործակալությունների և մասնագիտական միությունների հետ համագործակցության հուշագրեր, և համագործակցությունը հաստատող այլ փաստաթղթեր առկա չեն:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Համալսարանն իր կարևորագույն խնդիրներից է համարում ներքին շահակիցների անգլերենի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովումը: Այս նպատակով համալսարանի կողմից պարբերաբար կազմակերպվում են անգլերենի դասընթացներ ՊԴ և վարչական կազմի համար: ԱԲՀ-ն հիմքեր է ստեղծել անգլերենով ՄԿԾ-ների ներդման համար, համալրել է ուսանողական կազմը օտարերկրյա ուսանողներով, դասախոսների համալրման ժամանակ կարևորվում է անգլերենի իմացությունը, իսկ ցածր իմացության դեպքում պարբերաբար կազմակերպում է անգլերենի իմացության բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Անգլախոս ուսանողների համար ԱԲՀ-ի ՄԿԾ-ներում ներառված են հայերենի դասընթացներ:

Ըստ ինքնավերլուծության տվյալների 2018 թվականին դասախոսական կազմի 76.7%, վարչական աշխատողների 46.6%-ը և ուսանողության համակազմի 81% տիրապետում է անգլերենին, իսկ ռուսերենին դասախոսական և վարչական կազմի 100%-ը, ուսանողների 81%-ը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱԲՀ-ն, գտնվելով անցումային ժամանակաշրջանում, մեծ ջանքեր և ռեսուրսներ /ֆինանսական և մարդկային/ է ներդնում բուհում միջազգայնացման զարգացման ուղղությամբ: Ներկայում ԱԲՀ-ն թիրախավորել է միջազգային աշխատաշուկան և այս ուղղությամբ աշխատանքներ է իրականացնում՝ համագործակցելով միջազգային տարբեր կազմակերպությունների հետ Հնդկաստանում և այլ երկրներում՝ նպատելով հաստատության միջազգայնացմանը:

ԱԲՀ-ում միջազգայնացման միջավայրի զարգացման նպատակով բուհը հնավորություն է տալիս ուսանողներին անցնել պրակտիկա արտասահմանում, քայլեր են ձեռնարկում որակավորումների ճանաչման համար, որը նպաստում է արտաքին կապերի ամրապնդմանը և շարունակական զարգացմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ միջազգայնացման ուղղությամբ հստակ ճանապարհային քարտեզի առկայությունը և հստակ պլանավորված գործողությունների իրականացումը և արդյունքների ու խնդիրների բացահայտումը կնպաստեն բուհում միջազգայնացման գործընթացների արդյունավետ զարգացմանը և փորձի կուտակմանը և փոխանակմանը:

Դրական է, որ բուհը ունի արտաքին կապերի բաժին, սակայն բաժնի գործառույթների համակարգումն ու ակտիվացումը կնպաստեն միջազգայնացման և արտաքին կապերի ոլորտում առավել համակարգված և թիրախավորված աշխատանքին: Նկատելի է, որ բուհը փորձում է տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով ներգրավել միջազգային ուսանողների, սակայն բուհի կողմից ուսանողների և դասախոսների շարժունության ակտիվացումը բարելավման կարիք ունեն, որը կխթանի լավագույն փորձի կուտակմանը և տարածմանը: Դրական է, որ բուհը որդեգրել է հրավիրյալ դասախոսների պրակտիկան, որոնք իրենց փորձով կարող են օգնել ուսումնական գործընթացի բարելավմանը, սակայն այս պրակտիկան առավել զարգացման կարիք ունի, որը կնպաստի ուսումնական գործընթացի որակի բարելավմանը և միջազգային փորձի ներդրմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ միջազգային և տեղական կազմակերպությունների, մասնագիտական ասոցիացիաների հետ համագործակցության ակտիվացումն ունի բարելավման կարիք, որը կնպաստի արտաքին կապերի ամրապնդմանը և տեղական և միջազգային մակարդակում բուհի դերի բարձրացմանը:
Դրական է, որ բուհը կարևորում է օտար լեզվի իմացությունը և կազմակերպել է անգլերենի իմացության խթանմանն ուղղված վերապատրաստումներ դասախոսների համար, իսկ հայերենի իմացության դասընթացներ օտարերկրյա ուսանողների համար, ինչը նույնպես նպաստում է միջազգայնացման միջավայրի զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՀ-ն մեծ ջանքեր է ներդնում իր միջազգայնացման և արտաքին կապերի ամրապնդման համար, համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ միջազգային ուսանողների ներգրավման նպատակով, կարևորում է ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի օտար լեզուների իմացության բարելավումը և պարբերաբար կազմակերպում է դասընթացներ և վերապատրաստումներ, հնարավորություն է ընձեռում ուսանողներին իրենց պրակտիկան անցնել արտասահմանում, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտություն կա միջազգայնացման և արտաքին կապերի աշխատանքների համակարգման և հստակ քաղաքականության ու ռազմավարության մշակման, շարժունության խթանման և տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության իրականացման:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ըստ համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության՝ որակի ապահովման քաղաքականությունն ընդգրկում է բուհի գործունեության բոլոր հիմնական ուղղությունները՝ նպատակ ունենալով հնարավորինս ապահովել եվրոպական չափանիշներին և ուղենիշներին համապատասխան գործընթացների իրականացում, որը ենթադրում է.

- համալսարանում որակի ներքին ապահովման մշակույթի ձևավորում,
- որակի ապահովման չափանիշների և ուղենիշների ներդրում,
- ուսումնական, գիտահետազոտական և կրթական կառավարման ոլորտներում իրականացվող գործընթացների որակի գնահատում,
- համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության իրականացում,
- ինքնագնահատման և արտաքին փորձաքննության արդյունքների հիման վրա որակի գնահատման գործընթաց,
- որակի ապահովման համար անհրաժեշտ իրավանորմատիվային բազայի ստեղծում և կատարելագործում,
- համալսարանի շարունակական զարգացում:

Որպես որակի ապահովման գործիքներ կիրառվում են շահակիցների շրջանում հարցումները, շահակիցների հետ ունեցած հանդիպումները, կլոր սեղան քննարկումները, սակայն դրանք պարբերական բնույթ չեն կրում: ԱԲՀ ՈԱ քաղաքականության և ընթացակարգերի ու մեխանիզմների արդյունավետության գնահատում չի իրականացվում: ԱԲՀ-ն ունի ՈԱ ձեռնարկ, սակայն ձեռնարկը չի արտացոլում բուհի որակի ապահովման քաղաքականությունը:

ԱԲՀ ՈԱ հիմնական մեխանիզմներն են հաշվետվությունները, պլանների վերլուծությունները, ՄԿԾ-ների մշտադիտարկումները, դասալսումները: Դրանց իրականացմանը չի աջակցում ՈԱ բաժինը՝ որպես խորհրդատվական կառույց: ԱԲՀ-ն չունի առաջընթացի գնահատման ցուցանիշներ, ՈԱ նշված մեխանիզմների կիրառմամբ արդյունքների ազդեցության վերլուծություն չի իրականացվում:

Հստակեցված չէ վերհանված կարիքների վրա որոշումների կայացման գործընթացների և բացերը լրացնելու մեխանիզմները:

ՈՆԱ մեխանիզմները, ինչպիսիք են դասավանդման, ուսումնառության և գնահատման որակի ապահովումը, ՄԿԾ-ների գնահատումը դասախոսների կողմից, ՄԿԾ-ների արտաքին գնահատումը, ՄԿԾ-ների մշտադիտարկումը, ուսանողների առաջընթացի ուսումնասիրումը, ուսանողի բեռնվածության հաշվարկը, ուսանողների գիտելիքի գնահատման համակարգի մշտադիտարկումը, ՊԴ կազմի կատարողականի մշտադիտարկումը, հետազոտության որակի ապահովումը, շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրությունը ներառված չեն որակի ապահովման քաղաքականության մեջ և չեն կիրառում ԱԲՀ-ում:

ԱԲՀ-ում անցկացվում են հարցումներ, որոնք պարբերական և համակարգված բնույթ չեն կրում, իսկ արդյունքների տարածումը համակարգված ձևով չի իրականացվում և այդ հարցումների արդյունավետությունը դեռևս գնահատված չէ: Առավել ևս, հարցաթերթիկների տրամադրված օրինակներից չէր կարելի համակողմանի եզրահանգումներ կատարել՝ համադրել և փոխկապակցել տարբեր հարցումների արդյունքները և հարցումների անցկացման մեթոդաբանությունը, ինչպես նաև ԱԲՀ-ում առկա խնդիրների և բուհի ձեռքբերումների վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալ:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Որակի ներքին ապահովման գործընթացները կառավարվում են Որակի ապահովման հանձնաժողովի և որակի ապահովման բաժնի կողմից: Որակի ապահովման հանձնաժողովը ստեղծվել է 2011թ.-ին, այնուհետև 2018 թվականից սկսել է գործել Գիտական խորհրդին կից որակի ապահովման հանձնաժողովը: 2017 թվականին համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ ստեղծվել է Որակի ապահովման բաժինը, որը հաշվետու է համալսարանի ռեկտորին:

Որակի ապահովման բաժնում աշխատում են 2 աշխատող, որոնց միջև աշխատանքների և պարտականությունների բաշխումը կրում է պայմանական բնույթ, և այցի ընթացքում յուրաքանչյուրի դերակատարության մասին հստակ պատկերացում չկար տվյալ աշխատողների մոտ: ՈԱԲ-ի աշխատակիցների պարտականությունները և մասնագիտական կարողություններին առաջադրված որակական պահանջներ սահմանված չեն: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՈԱԲ-ի աշխատակիցների հավաքագրման գործընթացում մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ սահմանված չեն: Այդ աշխատակիցների գործունեության կատարողականի գնահատում և մասնագիտական կարիքների վերհանում չի իրականացվում, համապատասխանաբար այդ գործընթացներից և մասնագիտական կարիքներից բխող հատուկ մասնագիտական վերապատրաստումներ չեն իրականացվում: ԱԲՀ-ի ներկայացուցիչները մասնակցություն են ունեցել ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված մի շարք սեմինարների և համաժողովների:

Որակի ապահովման համակարգին տրամադրվող առանձնացված նպատակային ֆինանսական հատկացումներ ԱԲՀ-ի տարեկան բյուջեում չեն նախատեսվում: Այցի ընթացքում փորձագիտական խմբի կողմից ՈԱԲ գործունեության պայմանների, կադրային ապահովվածության վիճակի դիտարկումները փաստեցին, որ ներկայումս բաժինն ապահովված է անհրաժեշտ կահույքով և նյութական ռեսուրսներով: Նյութական և ֆինանսական ռեսուրսների տրամադրումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ ըստ անհրաժեշտության:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Ներքին շահակիցներին որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավման և հետադարձ կապի ապահովման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնք հաճախակի չեն կազմակերպվում: Հարկ է նշել նաև, որ հարցումների արդյունավետության գնահատման վերաբերյալ վերլուծություններ չկան: Հարցումների կազմակերպման և անցկացման, տվյալների հավաքագրման ու մշակման, արդյունավետության գնահատման գործընթացներն ապահովված չեն հստակ մեթոդաբանությամբ:

Արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացում սահմանափակվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների եզրակացություններով: Ինքնավերլուծությունում նշվում է շրջանավարտների ընդգրկվածության մասին, սակայն հստակեցված չէ, թե ինչպես են շրջանավարտները ներգրավել որակի ապահովման գործընթացներում և ինչպիսի արդյունքներ կան: Արտաքին շահակիցներին ներգրավման

փաստացի տվյալներ չկան: ՄԿԾ-ների և տարբեր գործընթացների բարելավմանն ուղղված որակի ապահովման գործիքների կիրառման շրջանակում արտաքին շահակիցների ներգրավումը դեռևս սահմանափակ է:

Սահմանված չեն հարցումների անցկացման ժամկետները և իրականացման հաճախականությունը: Բացակայում են ներքին և արտաքին շահակիցների՝ որակի ապահովման գործընթացներում ներգրավվածության արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հարկ է նաև նշել, որ արտաքին շահակիցներ համարվող գործատուների հետ կապը հաճախ խզվում է, երբ շրջանավարտները ուսումը շարունակում են օրդինատուրայում:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ԱԲՀ-ն 2018 թվականին հաստատված Որակի Ապահովման ձեռնարկով սահմանում է ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը, որպես հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավման հիմնական սկզբունք: Փորձագիտական խմբի վերլուծություններից պարզ դարձավ, որ որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակման նպատակով չի իրականացվել բենչմարքինգ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում, իսկ հաստատության տարբեր գործընթացներ գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր փուլերում: Բուհի փաստաթղթերի, ընթացակարգերի /ՈԱ ձեռնարկ, ՈԱ քաղաքականություն/ հիմանական մասը մշակված է 2017-2018 թվականների ընթացքում, այդ ընթացակարգերը այժմ գտնվում են կիրառման փուլում:

Գնահատվել և վերանայվել են ԱԲՀ-ի ՄԿԾ-ները և բուհում գործող գնահատման համակարգը, սակայն Որակի ապահովման բաժնի մասնակցությունը այդ գործընթացներին հստակ չէր:

Կատարված վերլուծությունների արդյունքում խնդիրների հաղթահարման պլանավորումը բուհում դեռևս չի իրականացվում:

Որակի ապահովման համակարգի մշտադիտարկում և գնահատում դեռևս չի իրականացվում:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ԱԲՀ-ում որակի ապահովման արտաքին գնահատման արդյունավետության ապահովման համար հիմք են հանդիսանում համալսարանում ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները և ինստիտուցիոնալ հավատարմագրման համար կատարված ինքնավերլուծության արդյունքները: Յուրաքանչյուր տարվա վերջում ՈԱԲ-ի ղեկավարը ներկայացնում է ամփոփ հաշվետվություն համալսարանի գիտական խորհրդի տարեվերջյան նիստում: Հարկ է նշել, որ որակի ապահովման գործընթացների արդյունքում կատարված վերլուծությունները փաստաթղթավորված չեն: Թեև որակի ապահովման ներքին համակարգը դեռ կայացման փուլում է, սակայն դրա օգնությամբ տրամադրվել են մասնակի տվյալներ, որոնք օգտագործվել են ինքնավերլուծության մեջ:

Տվյալների հավաքագրման և կառավարման գործընթացները համակարգված կերպով չեն իրականացվում: Առանձին ստորաբաժանումների ներսում գործընթացը

կանոնակարգվում է, սակայն տարբեր ստորաբաժանումների միջև տեղեկատվության տարածման և կառավարման մեխանիզմները հստակ չեն: ԱԲՀ-ի ներկայացված ինքնավերլուծությունը հաճախ նկարագրական է, բացակայում է վերլուծական մոտեցումը: ԱԲՀ-ում կիրառվող որակի ապահովման գործիքները դեռ գտնվում են մշակման փուլում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԱԲՀ-ն փորձում է ապահովել որակի ապահովման գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը: ԱԲՀ-ն ընդհանուր առմամբ ապահովում է իր գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը պաշտոնական կայքի միջոցով: Սակայն պաշտոնական կայքում զետեղված են միայն ընթացակարգերն ու քաղաքականությունները, իսկ որակի ապահովման բաժնի կողմից կատարված վերլուծությունները, աշխատանքային պլաններն ու հաշվետվությունները առկա չեն:

Դատողություններ: ԱԲՀ-ում մշակված ՈՆԱ քաղաքականության և ընթացակարգերը վկայում են այն մասին, որ ԱԲՀ-ի որակի ներքին համակարգը դեռևս ներդրման փուլում է և բավականաչափ ինտեգրված չէ ԱԲՀ-ի բոլոր գործընթացներում, համակարգված չի գործում, և չկա ինստիտուցիոնալ մոտեցում: Այցի ընթացքում պարզվեց, որ որակի ապահովման քաղաքականության մեջ առկա դրույթներից որևէ մեկը չի իրականացվում և չի նպաստում շարունակական զարգացմանն ու հաշվետվողականության բարելավմանը:

Հստակեցված և ներդրված չեն այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտային գնահատել ԱԲՀ-ի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը: Տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների և վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չեն տալիս գնահատել ՈՆԱ գործընթացների ազդեցությունը ՄԿԾ-ների և համալսարանի գործունեության բարելավման վրա: Կատարված հարցումների արդյունքները բովանդակային, որակական վերլուծության չեն ենթարկվում, ինչը խոչընդոտում է տվյալների հիման վրա որոշումների կայացմանը, իսկ առկա ՈԱ մեխանիզմները չեն նպաստում հուսալի և արժանահավատ տվյալներ չեն գեներացմանը:

ՈՆԱ գործընթացների կառավարման նպատակով ԱԲՀ-ն տրամադրում է մարդկային ռեսուրսներ: ԱԲՀ-ը կարևորում է համապատասխան որակավորում և փորձ ունեցող մասնագետներով բաժնի համալրումը, այդուհանդերձ մրցունակ թիմ ստեղծելու համար դեռևս հետագա մասնագիտական վերապատրաստումների խիստ կարիք կա: ԱԲՀ-ում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը շատ թույլ է: Ներգրավվածության հիմնական մեխանիզմ է դիտարկվում հարցումները, սակայն դրանց ոչ պարբերական իրականացումը խոչընդոտում է բուհի տարբեր գործընթացների վերաբերյալ խնդիրների վերհանմանը և շարունակական բարելավմանը:

ՈՆԱ համակարգի վերանայման խիստ անհրաժեշտություն կա, քանի որ փաստաթղթային հիմքերը և գործող համակարգը ըստ էության իրար չեն համապատասխանում: ՈՆԱ համակարգը դեռևս չի խթանում շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԱԲՀ-ում որակի ապահովման բաժնի առկայությունը: Այնուամենայնիվ, որակի ներքին ապահովման համակարգի ներդրմանն ուղղված ԱԲՀ-ի քայլերը դեռևս համակարգված բնույթ չեն կրում, և դեռևս չի ստեղծվել որակի

ներքին ապահովման միասնական համակարգ: Որակի ապահովման բաժնի և տարբեր ստորաբաժանումների միջև գործառութային համագործակցությունը թույլ է և համակարգային ինստիտուցիոնալ բնույթ չի կրում, ինչը խոչընդոտում է որակի որակի մշակույթի ձևավորմանը:

Բարելավման կարիք կա նաև որակի ապահովման գործընթացների և իրականացվող հարցումների արդյունքների թափանցիկության ապահովման մեխանիզմներ, որը կնպաստի հասարակության կողմից վստահության ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որը բուհում որակի ապահովման համակարգը դեռևս գտնվում է ներդրման փուլում, որակի ապահովման փաստաթղթային հենքը մշակված է 2017-2018 թվականներին և դեռևս գնահատված չէ դրանց արդյունավետությունը, ՊԻԳԲ շրջափուլը դեռևս փակված չէ, իրականացված հարցումները պարբերական բնույթ չեն կրում և չեն ծածկում բուհի բոլոր ոլորտները, իսկ հարցումների արդյունքում վերհանված տվյալները չեն նպաստում տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը, որակի ապահվման բաժնի և հանձնաժողովների հետ համագործակցությունը դեռևս հստակ չէ, բուհում չի իրկանացվում լավագույն փորձի կուտակում և տարածում, արտաքին շահակիցները սահմանափակ ձևով են մասնակցում որակի ապահովման գործընթացների իրականացմանը, որակի ապահովման միակ գործիքը դրանք հարցումներն են, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի չի բավարարում 10-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում և վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Չի բավարարում**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

27 դեկտեմբեր, 2019

Ռոբերտ Խաչատրյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ռոբերտ Խաչատրյան՝ 2003-2004 թթ. սովորել է ԱՄՆ Քենեսոյի պետական համալսարանում: 2005թ.-ին ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալասարանը «Անգլերեն լեզու և երկրագիտություն» մասնագիտությամբ: 2005-2008թթ. սովորել է ԵՊԼՀ ասպիրանտուրայում «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ: 2010թ.-ին ավարտել է Կանզասի համալսարանը «Հանրային կառավարում» մասնագիտությամբ: Բանասիրական գիտությունների թեկնածու է ու ԵՊԼՀ Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի դոցենտ: 2011թ.-ից մինչ օրս աշխատում է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալասարանում՝ որպես «Կրթության կառավարում և պլանավորում» ամբիոնի վարիչ, 2012թ.-ից համատեղությամբ նաև նույն համալսարանի Որակի ապահովման և բարեփոխումների կենտրոնի ղեկավար: Մասնակցել է բազմաթիվ միջազգային սեմինարների և գիտաժողովների: Արժանացել է կրթաթոշակների (Եվրասիայի և Կենտրոնական Ասիայի ՅՈՒԳՐԱԴ փոխանակման ծրագիր, Էդմունդ Մասկի անվան կրթաթոշակային ծրագիր, Գիտնականների կրթաթոշակների ծրագիր, «Կարնեգի» հետազոտության կրթաթոշակային ծրագիր, Թավիթիան կրթաթոշակ), պատվոգրերի ու մրցանակների: Մի շարք դրամաշնորհային ծրագրերի համակարգող/ղեկավար է եղել: Անդամակցում է մի շարք մասնագիտական կառույցների: Ավելի քան 52 գիտական հոդվածների և 3 ուսումնական ձեռնարկների հեղինակ է:

Պոլին Գրիս՝ 2005 թ.-ին ավարտել է Հայդելբերգի համալսարանը: 2014-ին ստացել գիտությունների թեկնածուի աստիճան: 2012 թ.-ից Հայդելբերգի համալսարանի Հանրային առողջության ինստիտի ուսումնական մասի համակարգողն է և Որակի ապահովման կառույցի պատասխանատուն: Մի շարք մասնագիտական ասոցիացիաների անդամ է: Արժանացել է բազմաթիվ մրցանակների և պարգևների:

Ռաֆայել Մեսրոպյան՝ 1991-1997 թթ. սովորել է ԵՊԲՀ բուժական ֆակուլտետում, 1997-2000 թթ. կլինիկական օրդինատուրա է անցել ԵՊԲՀ Վիրաբուժական հիվանդությունների թիվ 2 ամբիոնում, 2003 թվականին ավարտել է ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը: 2003-2007 թթ. եղել է ԵՊԲՀ Վիրաբուժական հիվանդությունների թիվ 2 ամբիոնի ասիստենտ, 2007-ից մինչ այժմ ԵՊԲՀ Վիրաբուժական հիվանդությունների թիվ 1 ամբիոնի դոցենտ է: 2007 թ.-ից սկսած ԵՊԲՀ վիրաբուժական հիվանդությունների թիվ 1 ամբիոնի ուսմասվարն է, պետական ավարտական քննությունների հանձնաժողովի, օտարերկրացի ուսանողների ուսումնամեթոդական հանձնաժողովի անդամ է: 1997 թ.-ից անդամակցում է Վիրաբույժների հայկական ասոցիացիային: 86 հոդվածների հեղինակ է և 1 ուսումնական ձեռնարկի համահեղինակ և խմբագիր: 2018 թվականից ԵՊԲՀ Ընդհանուր բժշկության ֆակուլտետի փոխդեկան:

Ռոքսանա Զախարյան՝ 2001-2005 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բակալավրիատում, այնուհետև 2005-2007 թթ. նույն ֆակուլտետի մագիստրատուրայում: 2008-2012 թթ. ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ասպիրանտուրայում: 2013 թվականին ստացել է Կենսաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: 2013 թ.-ից մինչ

այժմ ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնի Մոլեկուլային և բջջային կենսաբանության ամբիոնի դասախոս է, 2016-ից մինչ այժմ Հայ-ռուսական համալսարանի Կենսաինֆորմատիկայի և կենսաինժեներիայի ամբիոնի ավագ դասախոս: 2018-ից մինչ այժմ Հայ-ռուսական համալսարանի Բժշկական կենսաքիմիայի և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչն է: 2011-ից մինչ այժմ Մոլեկուլաբջջային կենսաբանության և իմունաբանության հայկական ասոցիացիայի պատասխանատու քարտուղարն է: Արժանացել է մի շարք պարգևների և մրցանակների: 48 գիտական հրապարակումների հեղինակ է:

Վաչե Ղարիբյան՝ Հայ-ռուսական համալսարան, Ընդհանուր և դեղագործական քիմիայի ամբիոնի 4-րդ կուրսի ուսանող է: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացին:

5.	Հանդիպում Ուսանողական խորհրդի, ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ	13:50	14:30	40 րոպե
6.	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (10-15 հոգի)	14:40	15:40	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:50	18:00	100 րոպե
N	**18.09.2019թ.**	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում Որակի ապահովման բաժնի և Որակի հանձնաժողովի ներկայացուցիչների հետ	9:30	10:20	60 րոպե
2.	Այց դեկանատներ և ամբիոններ, հանդիպում դեկանների հետ /փաստաթղթերի ուսումնասիրություն/	10:30	11:30	60 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, մարզասրահ, բուժկետ, բուֆետ)	11:40	13:00	80 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Հանդիպումներ ԱԲՀ ստորաբաժանումներում (ԳԲՈՒԿ, Արտաքին կապերի բաժին, ՄՌԿ և Ընդհանուր բաժին, Հաշվապահություն, Գիտական մաս)	14:20	15:20	120 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	16:30	19:30	180 րոպե
N	**19.09.2019թ.**	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	9:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:20	12:00	100 րոպե
3.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	12:10	13:10	60 րոպե

4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:30	17:30	180 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում ԱԲՀ ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1	Ռազմավարական ծրագրի գնահատման առանցքային ցուցիչներ	1
2	Նախորդ Ռազմավարական ծրագրի վերլուծություն	1
3	Հաշվետվություններ ԿԳՄՍ նախարարությանը	1
4	Ռազմավարության մշակման հանձնաժողովի կազմ	1
5	Մեթոդական սեմինարների, կոնֆերանսների, խորհրդակցությունների արձանագրություններ	2
6	Գիտխորհրդի և Կառավարման խորհրդի արձանագրություններ վերջին երեք տարիների	2
7	Արտաքին գործոնների ուսումնասիրության վերլուծություններ	2
8	Պրակտիկայի լրացված օրագրեր, դասամատյաններ	3
9	Վերջին երեք տարիների ամփոփիչ ատեստավորման հանձանաժողովների կազմը	3
10	Ամփոփիչ ատեստավորման կարգը միջազգային ուսանողների համար /առկայության դեպքում/	3
11	Շրջանավարտների և գործատուների շրջանում անկացվող հարցումներ	3
12	Ամբիոնների նիստերի արձանագրություններ, որտեղ քննարկվել են դասավանդման և ուսումնառության նյութերի, ռեսուրսների նորացման և համալրման խնդիրները	3
13	Այլ ՄԿԾ-ների հետ առաջավոր փորձի ուսումնասիրության վերլուծություններ	3
14	Ուսանողների առաջադիմության վերաբերյալ վերլուծություններ	3
15	Դասալսումների մատյաններ	3
16	Անգլախոս ուսանողների կարիքների վերհանման հարցաշարեր	4
17	Էլեկտրոնային ռեսուրսների ցանկ	4

18	Վերջին երեք տարվա բացված բյուջե	4
19	Միջամբիոնային սեմաներների վերջին երեք տարիների ցանկ և թեմաները	4
20	Ուսանողների գիտաժողովների նյութեր	4
21	Վերջին 3 տարիների ընթացքում կրթաթոշակառուների տվյալները	4
22	ՄԿԾ-ների անգլերեն տարբերակները	4
23	Ուսանողների կողմից տպագրված հոդվածները	4
24	Տեղեկանք ուսանողների թվի և ազգության վերաբերյալ	4
25	Լրացուցիչ պարապմունքների դասամատյան	4
26	Վարչական կազմի մասին տեղեկանք	4
27	Ուսանողների կողմից պատրաստված ռեֆերատներ, անհատական աշխատանքներ	4
28	Մինչև 2016 թ-ը գիտխորհրդի որոշումները՝ օտարալեզու դասավանդման գործընթաց սկսելու ուղղությամբ	5
29	Անգլալեզու դասավանդողների ցանկը՝ ըստ մասնագիտությունների	5
30	ՊԴ կազմի՝ օտար լեզվի իմացության հավաստագրերը	5
31	Տեղեկանք դասախոսների թվի և անգլերենի իմացության վերաբերյալ	5
32	Վերջին երեք տարվա գիտաժողովների նյութերը	6
33	Գյուտերի ցանկը	6
34	ԳԲՈՒԿ-ի հաշվետվությունները	6
35	ԳԲՈՒԿ-ի խրախուսանքի ներկայացված աշխատակիցների ցանկը	6
36	ԳԲՈՒԿ-ի հաստիքներ՝ գիտական աստիճաններով, կոչումներով	6
37	ԳԲՈՒԿ-ի աշխատակզմի մասնագիտական վերապատրաստումները	8
38	Վերջին երեք տարվա ընթացքում ՄԿՈՒ ուսանողների ԱԲՀ այցելության թիվը	8
38	Արտաքին կապերի բաժնի կանոնադրություն	9
39	Գրադարանի համալրման ցուցանիշներ՝ ըստ միավորի և գումարի	10
40	Ուսումնամեթոդական ձեռնարկները	10

41	Որակի ապահովման ներքին համակարգի գնահատում և բենչմարքինգ /արդյունքներ/	10
42	Հին հավատարմագրի վկայական	1
43	Դասընթացի նկարագրեր անգլերենով	3
44	Վերջին երեք տարիների շնորհված դիպլոմների ցանկն ու հրամանները	3
45	30 միջազգային ուսանողների անձնական գործեր	4

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Դեկանատ (Բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներ)
3. Ամբիոններ
4. Ստորաբաժանումներ (Ուսումնական մաս, Գիտական մաս, Արտաքին կապերի բաժին, ՄՌԿ և Ընդհանուր բաժին, Հաշվապահություն)
5. Գիտաբժշկական ուսումնական կենտրոն
6. Լաբորատորիաներ
7. Կոնֆերանս դահլիճ
8. Բուֆետ
9. Գրադարան
10. Ընթերցասրահ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ _____ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
2018թ.

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԲՀ- Ավանդական բժշկության համալսարան

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ

ԳԲՈՒԿ- գիտաբժշկական ուսումնական կենտրոն

ՄԿԾ- մասնագիտական կրթական ծրագիր

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - «Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ